724

727
Ч-81

2011

737
Ա-81
1006/29358

ԱՏՐՊԵՏ

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ
ԵՒ
ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏՐԴԱՏ 310 *Թ. Ք. Ծ. Յ.*

Արտահանութիւն Ազգագրական Հանդէսից

2004

ΑΡΤΑΞΙΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ



ԹԻՖԼԻՍ
Տպարան. Օր. Ե. Ադամեանի, Գոլից. 7
1913

13130

չեց էրկու մարդ ասաց. «Թագաւուրու ասքրիյն փէտ է պէտք. տար էսա եօթ էշ թօղ փէտ կրեն»։

Էն էրկու մարդ տարան իշվանյք չիւմ հէվարին (երեկոյ) փէտ կրեցին։ Ինոնց քեամկի կաշին էթող. աշուն որ էկաւ, կանչեց եօթ կտոր խնձոր իտու, եօթ էշեր կերան, դառցան մէկ մէկ մարդ. էլմ էլ ասաց. «Դէ, ասէյք տիսնամ, էլ դաւի կանէյք իմ թագաւորութեն առնէյք իմ ձեռնէն»։

—Ասին. Տիւ թայլա (առ այժմ) մե թօղ էրթանյք մեր տներ. մե հէչ լազըմ չի էն թագաւորութեն։

Թօղին կնացին ուրենց տներ։

Կնաց տէսաւ որ գեօ ուր կնիկ կապուկ էր վըր մսրին. առցկեց, կտորմ խնձոր իտու՝ կերաւ, էն էլ դառցաւ կնիկ։ Է՛, ասաց, դօրիս ձի տը առնե՞ս։

—Հալա չէ՛, ասաց կնիկ, կայնի ես էրթամ իմ խօր տուն գեամ, նոր պսակուենք։

—Է՛, ասաց, առ էս կտոր խնձոր կեր։

Կնիկ առեց խնձոր կէրաւ՝ դիրմ էլ էլաւ բօզ էշմ. դէ, ասաց. որ տիւ ձիկ էլի տը խարես, կնա կայնի վէր մսրին։

Մէ շաբաթմ ճնաց, էլմ էլ կնաց խնձորմ էլ իտու կէրաւ, ասաց. «Աղչի՛կ, տիւ ձի տը խաւնե՞ս, առնե՞ս»։

Ասաց. «Ապա ես կիտե՞մ. էրթանյք մե իմ խէր, որ աշխար կիտնա թէ տիւ թագաւուրու փեսա ես»։

—Չէ՛, ասաց, կաց ստեղ, ես էրթամ մե քեռ խէր գեամ պսակուենյք։

Տղէն էլաւ կնաց մե աղչկա խէր, նոր նշան իտի, խալալ սրտով ուր աղչիկ իտու ինոր։

Տղէն մէկ խնձորմ էլ իտու, բօզ էշ դառցաւ սիրուն, խօրօտ, խնազանդ աղչիկմ։ Նոր էկան թագաւուրու սարէն, էն տեղից ուր խօր Սղերտու խան, էն խին վազիրի մօտ, որ հար՝ ախ կանէր, կասէր. «Ա՜խ խելք, ա՜խ խելք, ա՜խ խելք», ինոր էլ կը պիրեն կանեն ուր վազիր, ինոր մալեր զըմէն կտան ուրեն. եօթ օր, եօթ գիշեր խարանիս կանեն կը պսակուեն, կը խասնին ուրենց սրտի մուրազին։ Տիւք էլ, մենյք էլ խասնինյք մեր սրտի մուրազին *)։

*) Պատմեց 1910 թուի Օգոստոսի 23-ին Հայոց Ձորի Քերծ գիւղում գիւղացի Մ. Սարգսեանը.

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ

ՄԻՆՉԵՒ ՏՐԴԱՏ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ԱՐՄԵՆԻԱՅԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ.

ԱՏՐՊԵՏԻ

Օգտուած եմ

1. Ernest Babelon-ի a. Les Monnaies des Rois de Syrie, d'Arménie et de Commagène. *1890* Paris.

.b Les Monnaies des Perses Achéménides, les Satrapes et les dynastie tributaires. Paris. *1893.*

2. Catalogue of the Coins of Parthia, by Warwick Wroth, Lnodon *1903.*

3. Sammlung Petrowitcz, Arsaciden—Münzen. Wien *1904.*

4. *Այրարատ—Ալիշանի 1890 Վենետիկ։*

5. *Հանդէս Ամսօրեայ, Արշակունի դրամների ուսումնասիրութիւնը Հ. Յ. Տաշեանի 1904—5 թ. Վիէննա.*

6. *Հերոդոտ, Ռուսերէն թարգմանութիւնից 1885 թ. Մոսկւա. թարգմ.* Мищенко.

7. *Քսենոփոնտ, ռուսերէն թարգմ.* Яневскій. *1881.* С.П.Б.

8. *Ստրաբոն,* » » Мищенко, *1879. Մոսկւա.*

9. *Գարագաշեան, քնն. Պատ. Հայոց 1895 թ. Հրատ. ընկ.*

10. *Գաթրճեան, 1852 Տիեզերական պատմութիւն.*

11. Langlois V. Numis. d'Arménie Paris 1868.

12. Брокгаузъ, Энцик. словарь, 1900.

13. Адонцъ, Арменія въ эпоху Юстиняна, 1908. С. П. Б.

14. Марковъ, Неиздан. Аршакид. монеты, С. П. Б. 1891 г.

15. Morgan—Première Civilisation, Paris 1909.

ՆԱԽԱԲԱՆ

Ինչպէս երևում է արտնին և օտար պատմագիրների գործերից Հայաստանը Ալէքսանդր Մակեդոնացուց թէ առաջ և թէ վերջը մի ամբողջական թագաւորութիւն չի կազմել։ Բաւական չէ, որ ունեցել է աւելի քան 360 նախարարութիւններ, իրենց կալուածատէր և աւատական իշխաններով, այս նախարարական իշխանութիւնների հաւաքումն էլ միշտ բաժանուած է եղել երկու (Մեծ և Փոքր Արմենիա), երեք, չորս և աւելի խմբակների։ Այս պարագան է, որ շփոթեցնում է բոլոր ուսումնասիրողներին, երբ ձգտում են զանազան պատմական խնդիրներ պարզելու։

Եթէ լրջութեամբ հետևենք պատմութեան, մենք կը հասնենք այն եզրակացութեան, որ երկրի պետերը և նշանաւոր գործիչները տքնել են այդ մանր ու անջատ իշխանութիւնները միացնել, մի մեծ ոյժ կազմելով արտաքին ոտնձգութիւններից երկիրը ապահովել, բայց սեպարատիզմն այնքան խիստ է եղել, որ նպատակի չեն հասել։

Մեր պատմագիրների և նրանց կուրաբար հետևողների գործերը քննողը, միշտ կարող է շփոթուել և հասնել թիւր եզրակացութեան, եթէ կանխապէս աչքի առաջ չունենայ այս պարագան, թէ Հայաստանը մի քանի անկախ թագաւորութիւններ է ունեցել, որոնք յաջորդաբար կառավարել են երկիրը ժառանգական նախարարների միջոցով և մեծ ձգտում է եղել գլխաւորութեան գաւազանը իրար ձեռքից յափշտակելու։ Այս պարագան բոլորովին չի շեշտուած մեր դասագիրք և պատմութեան-ընթերցանութեան գիրք կազմողներից, որով ընթերցողներն ու աշակերտները մնացել են քաոսային դրութեան մէջ, չեն կարողացել դրական գաղափար կազմել։

Երկու երեք թագաւորների միաժամանակ գոյութիւնը, կործանուած մայրաքաղաքների և սրբազան քաղաքների աւերակները, աւաններն ու մեհեանները, ամրոցներն ու բերդերը, մանաւանդ սրանց վրայ գտնուած սեպաձև արձանագրութիւնները մի քաոսի մէջ են գլորում մեր նախնիների պատմութեան, հնագիտութեան ոչ ծանօթ ընթերցողին։ Մենք ունենք շատ հին ժամանակներից յայտնի Եփրատի վերին ճիւղերում Եկեղեաց գաւառում Անի—Կամախ—սրբազան բերդը, նոյնը գտնում ենք և Արաքսի Ախուրեան վտակի ափին, որոնք ցոյց են տալիս արևելքի և արևմուտքի իրար մէջ եղած այս մրցումը։ Արմաւիր, Արտաշատ, Արտաքսիաշատ, Աշմուշատ, Արշամուշատ, Սամուշատ մայրաքաղաքները

բէք չեն կարող շփոթել ընթերցողին, եթէ նա նկատի առնէ միայն, որ մի քանի թագաւորութիւնները, պիտի մի քանի էլ մայրաքաղաքներ ունենային։ Կասկած չը կայ, որ այս քաղաքներում միաժամանակ իրենց անկախ թագաւորութիւններն են ունեցել մի քանի միապետներ, Արարատեան աշխարհում Արաքսի ափերին մօտ եղած թագաւորութիւնները տարբեր են Եփրատի ափերում Ծոփի երկրում (ΣΟΦΕΝ) եղած թագաւորութիւններից։ Հետևաբար մենք պիտի ունենանք զուգընթաց, եռընթաց և քառընթաց պատմութիւն, որը մինչև օրս չի առանձնացուած և չի վերլուծուած։

Դեռ աւելին, մենք ունենք Փոքր-Արմենիա իր փոքր և լայն ծաւալով, Կապադովկիա և Պոնտական աշխարհ, որոնց մէջ եղել են մի քանի թագաւորութիւններ, ինչպէս Մեծ-Հայքում, բայց ոչ մի գրուածքով չենք կարող մատնանշել, թէ արդեօք Արմաւիրի կամ Աշմուշատի թագաւորները ինչ յարաբերութիւն ունէին այս ու այն երկիրների տիրողների հետ։ Նոյնիսկ որոշ չենք կարող ասել, թէ այդ երկրներում ջոկ ջոկ քանի թագակիրներ, կամ իշխանութիւններ կային և ինչ կապ կար դրանց մէջ։

Անկասկած է, որ Փայտակարան աշխարհից մինչև Փռիւգիա և Գաղատիա, ապրել են Արմենները—Հայերը (Ուրարտական շրջանից յետոյ), բայց ինչ կապ կայ եղել դրանց մէջ, դեռ պատմութիւնը չէ տուել իր գրական պատասխանը։ Ինչպէս Բալկաններից մինչև Սպարտա և Մէսինա մի քանի տասնեակ անկախ թագաւորութիւններ են եղել անջատ Յունաստան անուան տակ, բայց իրար հետ կապուած որոշ ընդհանուր կապերով։

Շատերն ասում են, թէ Կապադովկիացիները միևնոյն ցեղին էին պատկանում, նոյնիսկ միևնոյն բարբառը, կրօնը, հաւատալիքները, բարքերը, սովորութիւնները ունէին, ինչ որ Հայերն ու Փռիւգացիները, բայց թէ ուրիշ ինչ քաղաքական կապեր կան եղել սրանց մէջ, դեռ յատուկ ուսումնասիրութեան նիւթ չի եղել։ Ահա այս կէտը գտնելու համար անհրաժեշտ է ինչպէս պեղումներ, շինուածական ննջուածներ, նոյնպէս և գրամագիտական ուսումնասիրութիւններ, որպէս զի հասնենք որոշ և գրական հետևանքների։

Սրանից 50 տարի առաջ Գերմանիայում 40-ի չափ իրարից անկախ իշխանութիւններ կային, նոյնիսկ այսօր Գերմանիայում—պետական ընդհանուր դաշնակցութիւնից յետոյ 24 անկախ թագակիրներ կան, որոնք իրար հետ կապուած են լեզուով, սովորութիւնով, տնտեսական և զինուորական միութեամբ։ Եթէ սրբանք գրաւոր պատմութիւն չը թողնեն, հազար տարի յետոյ 24

թագաւորների մայրաքաղաքները, պալատները, տաճարները և կորած դրամները անցնի մի հնախոյզի ձեռք, նա որքան պիտի շփոթուի։

Այսպիսի շփոթ և անորոշ վիճակի մէջ հայ դրամների ուսումնասիրութիւնը չի կարող վերջնական եզրակացութիւնների հասնել, բայց նա կարող է ասել, թէ այս ինչ և այն ինչ դրամները պատկանում են այս անուն թագաւորին, քաղաքին, թագուհուն և դիցուհուն, թողնելով պատմագէտին լրացնել պակասորդը պեղումներով, ուսումնասիրութիւններով և տալ ընդհանուր եզրակացութիւններ յանձնուած դրական փաստերի հիմունքով։

Հայկական նախնական (Խալդէական, Հեթիթական, Ուրարտական) առասպելական և մթին շրջանում փող չկար, որ նրա հետքերը փնտրուի։ Թէև ենթադրւում է, թէ փող կտրել են առաջի անգամ վաճառական և արդիւնագործ փիւնիկեցիները, բայց դրական փաստն այն է, որ առաջին անգամ մետաղից, ոսկուց, արծաթից և պղնձից դրամ կտրել են Լիւդիացիները, Սարդիկէում Գիգէս թագաւորի օրով, 680 տարի Քս. ծն. առաջ։ Հետևաբար սրանից աւելի հին ժամանակ Հայկական դրամ գոյութիւն չէր կարող ունենալ։

Լիւդիացիներին անմիջապէս հետևեցին Փոքր-Ասիայի Յոնական, Միջերկրական և Պոնտական ափերի քաղաքները, որոնց դրամներով զարդարուած են Եւրոպական թանգարանները։ Լիւդիացիները վարակեցին և իրենց դրացի Փռիւգացիներին, Կապադովկիացիներին և այդ տեղից էլ անցաւ Փոքր-Արմենիա և Մեծ-Հայաստան։ Ինչպէս մեր պապերը Գուտտէնբէրգից 40—50 տարի յետոյ հիմնեցին հայկական տպագրութիւն ու մամուլը, այդպէս էլ դրամահատութիւնը—փողերանոցները վաղ տարածուեցան Լիւդիայից դէպի արևելք։

Ճշմարիտ է Արևելքում-Եգիպտոսում դրամահատութիւն մտաւ Աղեքսանդր Մակեդոնացու հետ, մօտաւորապէս առաջին դրամի հատուածքից 350 տարի յետոյ, բայց Պարսկաստանի Արքայից Արքաները դրամ կտրել են Դարեհ Վշտասպի օրով, 521 տարի Քս. ծն առաջ։ Դրամահատութիւնը անպատճառ իր ուղին կատարել է Կապադովկիայի, Արմենիայի, Հայաստանի, Միջագետքի վերայով և ապա անցել է դէպի Պարսկաստան։

E- Babelon-ի Աքեմենիդների շրջանի դրամների ժողովածուն ցոյց է տալիս, թէ դրամահատութիւնը և դրամահատական քանդակագործութիւնը որքան կատարելութեան էին հասած Աքեմենեանների վասալական երկրներում, Սատրապների մէջ և

ինքնավար քաղաքներում և որքան ետ էր մնացած Արքայից Արքայի դրամների վրայ և որքան անպաճոյճ։

Այս շրջանում կտրուած դրամների հարուստ հաւաքածուն, որ զետեղուած է Փարիզի ազգային թանգարանում (Bibliothèque Nationale, մեզ գաղափար է տալիս բոլոր երկրների դրամների մասին, այն ինչ Հայկական—Արմենական դրամների մասին մի համր լռութիւն է պահպանում։ Պարսկական իշխանութիւնը արտօնած էր իւրաքանչիւր վասալական իշխանի, Սատրապի և ինքնավար քաղաքի (αυτονομος) պահպանել իրենց փողերանոցը և դրոշմել զանազան դրամներ երկրի պահանջների համեմատ, փոխարինաբար «Արքայից-Արքայի»։ Եթէ Հայաստանը համարենք—հետևելով օտար պատմիչներին—Պարսկական վասալական, կամ Սատրապական մի կամ երկու վիճակ, պէտք է որ այդ շրջանում (520—330 տարի Քս. ծ. առաջ) իր որոշ դրամներն ունենար, փողերանոց պահպանէր. բայց այս մասին դարձեալ լռում են թանգարանների դրամները և քննադատներն ու հրատարակիչները չեն կարողանում մեզ մի դրական փաստ տալ։

Աքեմենեան դրամներ անուանուած վերոյիշեալ E. Babelon-ի ցուցակի մէջ կան անորոշ քաղաքների և վիճակների դրամներ։

Կարելի է ենթադրել, թէ մի գուցէ հայկական դրամներ լինին դրանք, բայց այս եզրակացութեան եթէ չի հասել Եւրոպական գիտական աշխարհը, խիզախութիւն են համարում մի բան գրելը, կամ դեռ վաղաժամ։

Գուցէ կը գայ ժամանակը, երբ կը գտնուին այնպիսի դրամներ, որոնք որոշ լոյս կը սփռեն դրամագիտական աշխարհի խաւարում մնացած դրամների վրայ, այն ժամանակ կը պարզուին և նիւթ կը տան ուսումնասիրողին, և կը պարզեն Հայկական կորած պատմութեան շատ մութ կողմերը դրական փաստերով։ Բայց մենք փորձելու ենք այս աղջամուղջը մտնել Դարեհի՝ (Στρατιγος Βασιλεως Σατραπου Τιριβαζου) Արևմտեան Արմենիայի վրայ կարգած Սատրապ սպարապետ Տրիբազ թագաւորի դրամներով, որոնք մի աղօտ լոյսով մեզ առաջնորդում են դէպի մի ընդարձակ և լայնածաւալ աշխարհ։

Այս սպարապետ-թագաւորը քանի որ Արևմտեան Արմենիայի թագաւոր էր, հետևաբար նա մտնում է մեր թագաւորների պատմութեան շարքը։ Այսիսկ պատճառով նրա կտրած դրամները պիտի կտրուած լինին նրա իշխած երկրներում, որոնք Փոքր-Հայքից և Կապադովկիայից դուրս չեն կարող լինել։ Տրիբազի դրամները պիտի լոյս սփռէ Արմենական յաւիտենական մոռացութեան մատնուած թագաւորների դրամների վրայ, որոնց ուսումնասիրութիւնը միայն կարող է մեզ ցոյց տալ այնպիսի դրական փաստեր, որով կը կարողանանք աւելի որոշ կերպով ուսումնասիրել մեր անցեալը։ Բայց այս մասին Տրիբազի առթիւ գրելիս կը տանք մեր եզրակացութիւնները։

Տրիբազից յետոյ, մանաւանդ Ալէքսանդր Մակեդոնացուց յետոյ մենք ունինք մի շարք թագաւորների դրամներ, որոնց մասին մեզ աւելի դրական փաստեր է տուել E. Babelon-ը Les Rois de Syrie, d'Arménie et de Commagène գրուածքում։ Տրիբազի և այս թագաւորների դրամների համեմատութիւնները աւելի հաստատուն հիմունք են տալիս այն աղօտ լոյսի մէջ մեր նկատած դրամների մասին, որոնք կը բացատրուեն իրենց տեղում աստիճանաբար։

Ընդհանրապէս դրամները առաջին անգամ սկսեցին կտրել ոսկուց, արծաթից, ոսկու արծաթի խառնուրդից—(էլէկտրոն—Ελεκτρον), որոնք ամենից վաղ գործածութեան մտան և ապա պղնձից։ Այս երեք մետաղից են ձուլուած ընդհանրապէս բոլոր դրամները, սկզբից մինչև մեր օրերը։ Եթէ բաղադրութիւններ եղել են, անշուշտ այս երեքից մէկն ու մէկը բաղադրութեան մէջ նշանաւոր մասն է կազմել։

Սկզբում մետաղի կտորների վրայ էին դրոշմում երկրի, քաղաքի որևէ մենագիրը կամ խորհրդանիշը, ապա դիցաղների, դիցուհիների, իշխանների, թագաւորների պատկերը սովորական դարձան։ Խորհրդանիշների մէջ առիւծ, արծիւ, բու, բազէ, եզ, ձի, եղջերու, փիղ, պեգաս, օձ, մեղու, ողկոյզ և ուրիշ կենդանիների ու երևակայական կուռքերի, գազանների պատկերներ ևս կան։ Դէմքերը, խորհրդանիշերը, կենդանիները աստիճանաբար այնպիսի կատարելագործութեան հասցրին, որ ամեն մէկը որոշ մտքեր էին արտայայտում։

Սրանց պատճառով քանդակագործութիւնը այնպէս զարգացաւ, մրցումը այնպիսի կատարելագործութիւն հասցրեց, որ դրամահատութեան երրորդ դարի սկզբին նա հասաւ մի այնպիսի գերազանցութեան, գլխաւորաբար Յունաստանում և Մեծ—Յունաստանում, որը իր նմանը չունեցաւ յաջորդ 25 դարերի ընթացքում աշխարհի բոլոր փողերանոցներում։ Սիկիլա կղզու Սիրակուզա քաղաքում, Եպիւռոսի Պիւռոս թագաւորի անունով դրոշմուած դրամները այնպիսի գլուխ գործոցներ են, որ 24 դար ևս կարող են օրինակի տեղ ծառայել քանդակագործական աշխարհում։

Այս կատարելութիւնից դեղարուեստը-քանդակագործութիւնը նոր էր սկսել դէպի décadance-ի շրջանը թեկոխել, երբ Մակեդոնացու հետ նա դէպի Ասիա ճանապարհորդեց և այդ տեղ երես-

պնդութեամբ ապրեց մի դար ևս, շարունակ աստիճանաբար գլորուելով։ Աղէքսանդրից երկու դար առաջ քանդակագործութիւնը Փոքր—Արմենիա և Մեծ—Հայաստան էր մտած, որտեղ իր կատարելութեանն էր հասած և ապա անկման դատապարուած, որը բարձրացաւ դարձեալ աշխարհակալից յետոյ։

Ինչպէս առհասարակ ամեն երկրում, նոյնպէս և հայկական դրամների վրայ մեծ խնամք են դարձրած, որպէսզի գեղեցկութիւնը, խորհրդանիշները, արքայական պատկերների նմանութիւնները, թագերի, խոյրերի կազմը, համանմանութիւնը և յարակցութիւնը պահպանեն։ Եթէ մի ընդհանուր հայեացք ուղղենք Ք. Ծ. հինգ դար առաջ և երեք դար յետոյ, ամբողջ ութը դարի ընթացքում հայ թագաւորների անուններով դրոշմած դրամների վրայ, կըհանենք մի ապշեցուցիչ եղրակացութեան, որ մեր երկրի արևելեան և արևմտեան փողերանոցներում մտքերն և մատները տքնել են հայկական դրամական առանձնայատկութիւններն և բազմազանութիւնները պահպանել։ Դժուար է գտնել մի այնպիսի դրամ, որը ոևէ նշանով կապուած չը լինի նախորդների և յետնորդների հետ։ Տրդատի, Արշամի, Քսերքսէսի դրամների խորհրդանիշները, զարդերը կարելի է գտնել Վաղարշակի, Տիգրան Մեծի և Տիգրան Գ.-ի դրամների վրայ, չընայելով որ առաջին հայեացքով բոլորովին իրարից տարբեր են։

Ինչպէս Մակեդոնացուց մի—երկու դար առաջ Փոքր-Ասիա, Կիպրոս, Կիլիկիա, Կապադովկիա, Պոնտական ափերում գործածական էին ինչպէս Արամէական տառերը, նոյնպէս և Յունական տառերը, սրանցով էին արձանագրութիւններ կատարւում, այս՝ գրերով էին դրոշմում անունները դրամների վրայ, այնպէս էլ Փոքր-Արմենիա, Հայաստան և Պարսկաստան արշաւած էին այս տառերը, որոնք կազմում էին միջազգային սեփականութիւն։ Աղէքսանդր Մակեդոնացուց հինգ դար յետոյ, Հռոմայեցիների ահեղ տիրապետութեան ժամանակ Յունասիրութիւնը (գիտութեան և գեղարուեստի սէր) իր խոր արմատները տարածած էր Արևմտեան Ասիայում։ Աքեմենեանների, Արշակունիների, Սելևկեանների, Բակտրիացիների դրամները կրում են յունական տառեր։ Նոյնը մենք տեսնում ենք և հայկական դրամների վրայ։

Յունական քաղաքակրթութիւնը, գիտութիւններն ու արուեստները աւելի մեծ յաղթանակներ էին կատարել Ասիայում, քան թէ Աղէքսանդր Մեծը նուաճումներ արաւ։ Մանաւանդ՝ որ այդ տառերը Յունական չէին համարւում, այլ քաղաքակրթական—միջազգային։ Այդ տառերը Կիպրոսում, Փիւնիկէում, Կիլիկիայում և Կիւրէնիայում գործածուել են քիչ տարբեր ձևերով, նոյնիսկ աջից ձախ դասաւորութեամբ, ինչպէս գրում են Սեմիտ—Արաբները, Ասորիները և Հրէաները։

Դեռ մինչև այսօր յունական տառերից կազմուած թուերը ոչ թէ աջից ձախ են շարւում, այլ ընդհակառակը՝ ձախից աջ։ Առաջ գրւում են միաւորը, ապա նրա աջ կողմը տասնաւորը, հարիւրաւորը և շարունակաբար։ Ձեն գրում 285=ΣΠΕ, այլ գրում են ΕΠΣ=582 և կարդում են երկու հարիւր ութսունը հինգ։

Մանաւանդ որ պատմութիւնը մեզ ասում է, թէ Յոյները տառերը բերել են արևելքից, Եգիպտոսից, Փիւնիկէից և կամ նոյնիսկ Լիւդիայից, որոնց ստուգութեան մասին թէև փաստերը լռում են։ Դրա համար Յունական տառերը, որպէս անխտիր միջազգային սեփականութիւն, տարածուել են Մեջերկրականի ափերում և այդ երկրների խորքերում, նոյնիսկ Տաւրիկեան թերակղզում։ Այս տառերից խելացի կերպով օգտուել են բոլորը, միայն ապագայում ազգամոլութիւնն ասպարէզ գալով, ստիպեց Պարթև Արշակունի պարսիկներին թողնել այդ տառերը հին Արամէական—ինչպէս և վաղժամանակներում և փէհլևի տառերով դրոշմել իրենց դրամների արձագրութիւնները, որոնցից զարգացան Փէհլևի տառերը։

պատ. թիւ 1

Մենագիր — Monogramme

Ընդհանրապէս դրամների վրայ երևում են մենագրեր — monograme — այնպիսի առեղծուածներ (rébus), որոնք պիտի զբաղեցնեն ընթերցողին գործի ուսումնասիրութեան ընթացքում։ Այս պատճառով պարտաւորուած ենք կանխապէս այստեղ այս մասին որոշ գաղափար տալ ընթերցողին։ Դրացի երկրների դրամների վրայ գտնում ենք պատկեր թիւ 1, նկար 19-ը որի տառերն իրարից անջատելով ստանում են ΤΓΡ, Տիր, Տիւրոս քաղաքի անունը։ Կամ պատկեր թիւ 1. նկար 20, որը անջատելով ստացւում է ΠΤΟ, պտо, որը համարւում է Պտղոէմայիդ քաղաքը։ Կամ թէ պատկեր թիւ 1, նկար 21 մենագիրը և բաժանելով իրարից ΓΑΖ տառերը, կարդում են Գազա քաղաքը։

Մենագրերի սովորութիւնից չէին կարող չը վարակուել մեր

թագաւորական փողերանոցների քանդակագործները։ Ամբողջ եւրոպական դրամագէտները, պատկեր թիւ 1, նկար 2-ը, կարդում եմ ΤΓΡ, Տգր, Տիգրանակերտ։ Հետեւելով այս ընթերցանութիւններին, այս մենագրերի տառերը անջատելով կարդալուն, պատկեր թիւ 1, նկար 24-ը բաժանեցի և պարզուեց ΑΡΤΣ Արտս կամ նոյնիսկ ΑΡΤΞ,—Արտքս—ԱՐՏԱՇԱՏ կամ ԱՐՏԱՔՍԱՏ։ Այս մենագիրը Վաղարշակ Ա. հայ Արշակունի թագաւորին վերագրուած չորեքդրամին է, որը Արտաշատ քաղաքի անունն է կրում։ Ճշմարիտ է ամեն մի սկզբնական հայեացք պիտի դժուարանայ սոյն մենագրից ΑΡΤΞ — ԱՐՏԱՇԱՏ կարդալու, բայց եթէ ինքը լուծէ մենագրի տառերը, ինչպէս դրամագէտները լուծել են Տիւրոսի, Ասկուլոնի, Հերակլէոնի, Պտոլոմայիդի անունների մենագրերի և այսօր միաձայն համոզուած են, թէ այդ դրամները կտրուած են վերոյիշեալ քաղաքներում, այն ժամանակ այս տառերը վերլուծող ընթերցողը պիտի համոզուի, թէ մեր ցոյց տուած մենագիրը ուրիշ ոչ մի քաղաքի անուն չի կարող արտայայտել բացի ԱՐՏԱՇԱՏԸ։

Այս մենագիրը տառահատելու համար հարկաւոր է նախ միջին մասից դուրս հանել Α տառը, ապա մենագրի գլխին դրուած Ρ տառը դնել նրա աջ կողմը։ Այս երկու տառի մէջ եղած Τ տառը աւելացնել նրանց վրայ և ապա բերնքսիվայր ընկած Μ տառը տեսնելու համար գիրքը դէպի ձախ դարձնել և դնել։ Այս ձևով ծածկուած այնքան շատ մենագիրներ կան, որ Արտաշատի մենագիրը զարտուղութիւն չի կազմում։

Եթէ մի հայեացք ուղղենք Վաղարշակից առաջ, նախորդ հայկական թագաւորների դրամների վրայ և համեմատենք սրանց հետ, պիտի նկատենք որ շատ կապեր կան սրանց և նրանց մէջ, հները պակաս գեղարուեստական չեն նորերից։ Արշամի, Քսերքսէսի և Զարիադէսի կամ Զարէհի դրամները պակաս գեղարուեստական չեն Վաղարշակի դրամներից։ Այս պարագայից յետոյ, մանաւանդ դրամի շրջանակի, զարդաքանդակի, դէպի աջ նայող երեսի և ուրիշ մանրամասնութիւնների համեմատութիւնը մեզ ստիպում է համոզուելու, որ Արտաշատի մենագիրը կրող դրամը հայկական է և թուականին համեմատ անշուշտ Խորենացու և Յուստինոսի ակնարկած Արշակունի առաջին թագաւոր Վաղարշակինն է (Bogasis)։ Բայց առ այժմ թողնենք այս խնդիրը և աւարտենք մենագրների մասին մեր բացատրութիւնը։

Պատկեր թիւ 1, նկար 26, որ դրոշմուած է Վաղարշակի մի դրամի վրայ և բոլորովին տարբեր ձև ունի նախորդից, կարդում ենք դարձեալ Արտաշատ։ Հետաքրքրուողը եթէ ուշադրութեամբ

դնենք, պիտի բաժանէ ΑΡΤΞ կամ ΑΡΤΣ Արտշ. տառերը, որոնք բացի Արտաշատ քաղաքը ուրիշ բան չեն կարող ներկայացնել։

Պատկեր թիւ 1, նկար 16 մենագիրը կայ մի ուրիշ չորեքդրամի վրայ, որը քննադատները վերագրում են վերապահութեամբ Արշակ Ա. հայ Աշակունի թագաւորին, թէև բոլորովին տարբեր ձև ունի նախորդներից։ Տառերը լուծեցէք իրարից և պիտի ստանաք ΑΡΤΣ յունական տառերը, որտեղ մենագիրը ծածկելու համար Α ի մէջին գիծը ոտքերին է հասցրած, Τ դրած է Α ի գլխին, իսկ Σ վերի և ներքևի գծերը երկարացրած է։ Երբ չորս տառերն անջատէք, պիտի շարէք դարձեալ ԱՐՏԱՇԱՏԻ անունը։

Փողերանոցի քանդակագործները մրցման մտած շարունակ նորանոր ձևի մենագրեր են մտածել և իւրաքանչիւր տեսակ դրամը նոր մենագրով զարդարել։ Այնպիսի ծածկագիր են շինել, որ ամբողջ դարեր մտածել են տուել դրամագէտներին և չեն թողել, որ բացատրեն իրենց բէբուսը։ Գուցէ այս պարագան համոզեցուցիչ չը թուի ընթերցողին, բայց դրամի նախորդի հետ ունեցած առնչութիւնը, թուականը և գիտնականների կարծիքը կարդալուց յետոյ, պիտի համոզուի, որ այս մենագրերը բացի Արտաշատից ուրիշ քաղաքի անունով չիկարելի բացատրել։

պատ. թիւ 2

Մենագիր

Սոյն Արշակ Ա. ի միուրիշ չորեքդրամի վրայ կայ պատկեր թիւ 1 նկար 13 մենագիրը, որը անդամահատելով ΑΤΞ տառերը ստանում է անմիջապէս։ Եթէ Α տառի աջակողմեան ոտքը կոտրենք, Α տառը կստանանք, որով կամբողջանայ ΑΡΤ տառերը, ԱՐՏԱՇԱՏ։

Միևնոյն կերպով լուծելով պատկեր թիւ 1, նկար 17, անմիջապէս կարելի է ստանալ APT տառերը, որը կրելով նախորդ դրամի պատկերը, ցոյց է տալիս, թէ այդ էլ նոյն փողերանոցումն է կտրուած։

Արտաշէս Ա. վերագրուած դրամի վրայ երևում է պատկեր թիւ 1 նկար 18 մենագիրը. որը բաղկացած է AP▙W տառերից, T գլխիվայր և Σ մէջքին պառկած։ Այսպիսի փոփոխութիւններ կարելի է տեսնել ընդհանրապէս բոլոր մենագրերի վրայ, որոնք անծանօթ չեն դրամագիտական աշխարհում։

Թողնելով այս խնդրի լուծումը առողջամիտ ընթերցողներին, քննադատներին, անցնենք միւս մենագրներին։ Մենագիրները միայն քաղաքները չեն արտայայտում, այլ յաճախ արքայի կեանքի նշանաւոր գործերի, կամ անուան արտայայտութիւնն է ցոյց տալիս։ Տիգրանի Մեծի մի չորեքդրամի վրայ կայ Θ Ε, որը կարդում են ΘΕΟΦΙΛΟΣ. Ο Φ

Թէոփիլոս—Աստուածասէր։

Վաղարշակ Ա. մի չորեքդրամի վրայ պատկեր թիւ 2, նկար 1, մենագիրը կայ, որը մենք կարդում ենք Θ Ε Υ—Թէու—Աստուծոյ։ Այս տիտղոսը կրում էին պարթևական թագաւորները, իսկ Վաղարշակի այս տիտղոսը ցոյց է տալիս, որ նա դիրքը ամրացնելու համար, պարտաւոր էր այս տիտղոսը կրելու։

Միևնոյն բանը կարելի է նկատել Պարթևական իշխանութեան հիմնադիր Արշակ Ա.-ի և Տրդատ Ա. դրամների վրայ։

Մի ուրիշ դրամի վրայ կայ վերոգրեալին մօտ մի մենագիր, տես պատկեր թիւ 2, նկար 2, որը դարձեալ Θ Ε V—Թէուս—Աստուծոյ պիտի կարդալ։

Ս-Պետերբուրգի Էրմիտաժում կայ մի չորեքդրամ, որը կրում է պատկեր թիւ 2 նկար 3 մենագիրը, որը դարձեալ Θ Ε V պէտք է կարդալ։

Համանման նշաններ կան և Տիգրանի դրամների վրայ, որոնց ամեն մէկի մասին մենք կը խօսենք իրենց տեղում։

Հայկական դրամների գլխներին—Քարասպ, Արշամ և ուրիշները — ընդհանրապէս նկատելի է ամենանախնական ժամանակներից Դիոսկուրեան անուանուած գդակը, որը՝ մեր լեռնային երկրներում մինչև այսօր գործածուած քօղոն է։ Միևնոյն թաղիքի գտակը ունեն նախնական դրացի ազգերի դրամները։

Եթէ հետևենք ընդհանուր պատմութեան, եգիպտական և Քեռական քանդակների վրայ կը տեսնենք միևնոյն քօղոը զանազան ձևերով, որը ինչպէս երևում է գերիշխանութեան ամփոփման նշանն է։

Այս գտակների վրայ փաթաթուած է գափնի կամ ծաղկի պսակ, որը սովորական կերպով ծաղկուն մետաքսի կամ բամբակի թաշկինակի է փոխադրուել և պահպանուել մինչև մեր օրերը։

Աստիճանական զարգացումը գտնելու համար, մենք պիտի ուսումնասիրենք Տրիբազի Փոքր-Արմենիայում գրոշմել տուած դրամները, որոնք յետ-Արշակունի դրամները կապում են իրենց հետ ինչպէս գլխի, նոյնպէս և ուրիշ զարդերով։ Տրիբազի դրամների վրայ Դիոսկուրեան—Քօղոների հետզհետէ զարգարուածներն ենք տեսնում ինչպէս Տրիբազի, նրա նախորդների, նոյնպէս Աղքսանդրից յետոյ Քսերքսէսի թաղիքեայ գտակների վրայ, որոնք ծալուած ետ դարձուած են ձևերով և կտրտուած զանազանակերպ, որ խոյրի տպաւորութիւն են թողնում, և այլևս կարիք չի զգացւում վրան պսակ փաթաթելու։ Այս գտակները ունեն իրենց ետևը ապառօշներ, երբեմն վզկալներ, այնպէս որ արքայական թագն ու վարսակալն են յիշեցնում։

Զամէսի և Միհրդատի դրամների գլուխները, (Կամոգէնի թագաւորներ), մանաւանդ Զարիադի (Զարէհի) և Մոր-Փիլիկի դրամների քօղոները ծածկուած են սովորական մի քօղով, որոնք արքայի երեսի մի մասը, ականջները, վիզը ծածկում են։ Այս քօղով ծածկուած քօղոները յիշեցնում են մեր հոգևորականութեան մէջ մինչև օրս պահպանուած վեղարը, որը անձնաւորութեան բարձրագոյն պաշտօնի լինելն է ցոյց տալիս։ Այս վեղարաձև խոյրը մենք տեսնում ենք նոյնպէս Արշակունի Պարթևական տան հիմնադրի՝ Արշակ Ա. ի և որդու Տրդատի դրամների վրայ։ Նոյնպէս Վաղարշակ I Արշակունի հայ թագաւորի մի քանի լումաների և փողերի վրայ։ Բացի այս Արշակ I հիմնադրի վեղարաւոր պատկերը զրահաւորուած և գահ նստած կարելի է տեսնել Պարթևական 32 թագաւորներից բոլորի դրամների ետևը։

Այս բոլորը ապացուցանում է, որ այդ շրջանում սրածայր խոյրը իր ծածկոյթով ոչ միայն իշխանութեան նշան էր, այլ այդ իշխանների դէմքը, որպէս Գերազոյն Ցայտնութիւն ծածկում էր սովորական մահկանացուներից։ Պարսկաստանի Արևելահիւսիսում և արևմտեան հիւսիսում այս պարագաները զուգադիպութեան չի կարելի վերագրել, այլ սովորական հեթանոսական սրբազան կարգ, որը իր խոր արմատների հետ, իր դարևոր հետևողականութիւնը թողել է մինչև օրս։

Վաղարշակ Ա. ի, Արշակ Ա. ի, Արտաշէս Ա. ի, և Արտաւազդի դրամների վրայ թագաւորների գլուխներն առանց թագի է, ինչպէս նրանց ժամանակակից Պարթևական և Սելևկեան թագաւորների գլուխներն էլ միայն սանրած կամ գանգուրացրած

ձևերով էին դրոշմուում դրամների վրայ։ Զորս նախկին Արշակունիների գլխի սանրուածքը բոլորաձև է, աւարտած է կլորաձև, որը շրջապատում է ամբողջ գլուխը, կրելով վարսակալը, որի ծայրերը մինչև թիկունքն է հասնում ապառաջի նման։ Մակեդոնացուն հետևելով գլխաբաց ձևը դրամների վրայ պահպանեցին ինչպէս Սելևկեանները, նոյնպէս և Պարթև ու Հայ Արշակունիները։ Դեռ Պարթև Արշակ հիմնադիրը և որդին Տրդատը ընչացք ու պեխ ածելում էին արևմտեան ազգերի նման։ Բայց Հայ առաջին երկու թագաւորները պահպանել են պեխ ու մօրուս, իսկ Արտաշէսը ածելել է ինչպէս ընչացքը, նոյնպէս դունչի մօրուսը, թողնելով միայն ականջների մօտ կզակամօրուս։

Տիգրան Մեծի թագի նախնական ձևը Տրիբազի, Քսերքսէսի, Զարէհի խոյրերին է նման, որոնց զարգացումով կազմուել է Զարէհի երկայն թագը։ Այս թագի քիչ կարճ ձևն է Տիգրանի թագը, որն անփոփոխ մնաց հայ թագաւորների դրամների վրայ մինչև Տրդատ։

Հայկական դրամների գլխաւոր խորհրդանշանը կարելի է համարել միագլուխ Արծիւը, որը նստած է որև է ճիւղի վրայ։ Դրամների վրայ կան բազէ, ձի, ձիաւոր, սանձուած ձիու գլուխ, Գուրզ, Պեգաս, Անահիտ, Աստղիկ, Ոսկիամայր, Արամազդ, Վահագն, Յաղթական և Տիգրանի դրամների վրայ՝ Ատիոքիան։ Բացի այս կան դրամներ, որոնց երկրորդ երեսը նուիրուած է թագուհիների, հռոմէական կայսրներին և ուրիշներին։

Հայկական դրամների կշիռները ժամանակակից ընդհանուր դրամական կշռից չի տարբերուում։

Ստատեր (ոսկի) Ετατερ.	8.	80	դրամ.
Տասդրամ (արծաթ) Δεκαδραχμ.	43.	00	դրամ.
Զորեքդրամ « Τετραδραχμ.	17.	20	դրամ.
Երեքդրամ « Τριδραχμ.	12.	30	«
Երկդրամ « Διδραχμ.	8.	60	«
Դրամ « Δραχμ.	4.	30	«
Կէսդրամ « Ημιδραχμ.	2.	15	«
Լումայ (obol) արծաթ	0.	70	«
Զորեքփող (պղինձ)			
Երեքփող «			
Երկփող «			
Փող «			
Դանկ (1/2 փող)			
Նաքանակիթ (1/4)			

Բայց ժամանակակից փողերանոցներում (դրամահատական

տուն) ճշտութիւն չէր պահպանուում, չնչին աւել—պակաս կշռով էր դուրս տրուում։ Իսկ դարերի ընթացքում, մաշուելով, մաշուելով ոսկերիչների մկրատի և թթուտների մէջ ընկնելով խուզուել մաշուել և պակասած չափով են մեզ հասել։

Ընդհանրապէս դրամների Ա. և Բ. երեսները ունին շրջանակ—պսակ։ Այս պսակի ձևը ամեն երկրում տարբեր է։ Պարթեւական Արշակունի դրամները առանց բացառութեան կարելի է ասել, որ բոլորն էլ մարգարտաշար շրջանակ ունին, կլորակ կէտերի շարք։ Սելևկեան դրամների մէջ մեծ մասամբ մարգարտաշար է, բայց ունին դափնեայ և ծաղկեայ պսակներ ևս։ Հայկական դրամները մեծ մասամբ երիզաձև մի շրջանակ ունին, գնդիկներով ընդհատուած, կամ ձուաձև երկայուն ուլունքների միջերը գնդաձև ուլունքներով, նոյնպէս և դափնեայ պսակով։ Տիգրան Մեծի—թագաւորների թագաւոր դրամների վրայ ընդհանրապէս մարգարտաշար է նկատուած։

Դրամներն ունին թւականներ, որոնք ընդհանրական գործածութեան մէջ ընկան Աղեքսանդրից յետոյ։ Այս թւականը սահմանեցին Սելևկեանները Քս. ծ. 320 տարի առաջ և կոչւում է Սելևկեան թւական։ Այս թւականը համաշխարհային գործածութեան մտնելով Հայկական աշխարհը չէր կարող ժամանակակից քաղաքակիրթ սովորութիւնից ետ մնալ և չգործածել այս թւականը։

Այն ժամանակ Արաբական կոչուած թւանշանները չկային, այլ գործածւում էին յունական տառերը որպէս թւանշան։

Α——1.	Ι——10.	Ρ——100.
Β——2.	Κ——20.	Σ——200.
Γ——3.	Λ——30.	Τ——300.
Δ——3.	Μ——40.	Υ——400.
Ε——5.	Ν——50.	Φ——500.
G——6.	Ξ——60.	
Ζ——7.	Ο——70.	
Η——8.	Π——80.	
Θ——9.	Q——90.	

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
[redacted]
Մ. Ա. Մասիսեան
Ս. ՍՏԱՓԱՆՅԱՆԻ ՀԱՎԱՔ

ՀԱՅ-ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ

ՄԻՆՉԵՒ ՏՐԴԱՏ

ՆԱԽ-ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՇՐՋԱՆ

ՏՐԻԲԱԶ

1) Շոկղրամ. Աքեմենեան Արտաշէս Ոքովի ժամանակ Փոքր-Արմենիայի եպարքոս, սպարապետ (ΣΤΡΑΤΥΓΟΣ) թագաւոր էր Տրիբազը։ Տրիբազի իշխանութեան յանձնուած էր Ծովի երկրի սահմաններից Փոքր-Արմենիան, Կապադովկիան, Փռիւգիան մինչև Լիւդիան։ Անդալկիտեան խաղաղութիւնից յետոյ, 387 թ., Ք. ծ. ա. Տրիբազը մնաց Արևմտեան Հայաստանի և Կապադովկիայի Փռիւգիայի թագաւոր, Լիւդիան և Յոնիական ափերը թողնելով Ռոմոտին։ Այս միջոցին թէև կանչուեց Շօշ բացատրութիւններ տալու, բայց դարձեալ ետ ուղարկուեց Կիպրական ապստամբութիւնը զսպելու։ Պարսկական սովորութեան համաձայն, Տրիբազը իր բացակայութեան ժամանակ երկիրները կառավարում էր փոխանորդներով, հետևաբար մինչև գլխատումը, որ կատարուեց 380 թ. արքայից-արքայի կեանքի դէմ դահաժառանգի հետ կազմած դաւադրութեան պատճառով, նա մնաց տէր եւ թագաւոր Արևմտեան Արմենիայի և Կապադովկիայի։

Պատմութիւնը լռում է Տրիբազի ծագման, ցեղի, նստած քաղաքների մասին, բայց նրա բանակները շարունակ եղել են Եփրատի աջ ափերին՝ Մալաթիայի դաշտավայրում, որը այն դերը է կատարել Փոքր-Արմենիայի համար, ինչ որ Արարատեան դաշտը Մեծ Հայքում։

Մալաթիան, հին Մալիդ-դուն կամ Յունական Մելիտենը Ք. ծ. 1400 տարի առաջ էլ նշանաւոր արդիւնաբերական և արդիւնագործական քաղաք էր այդ դաշտավայրում, որը կերակրում էր ոչ միայն միլիոնաւոր ժողովուրդ, այլ մեծ արտահանութիւն ունէր։ Կարելի է ենթադրել, որ բանակների մօտ—Մելիտենում էլ ապրում էր Տրիբազի ընտանիքը։

Տրիբազը երբէք չի թագաւորել Կիլիկիայում, երբէք Կիլի-

կայ բոլորովին համանման մի ուրիշ օրինակը, որը միայն մի մենագիր ունի, Անտիոքիայի աթոռաքարի տակ, իսկ արմաւենու տակը մենագիր չը կայ։

12. Չորեքդրամեան.— E. Babelon-ի Հայկական դրամների հրատարակութեան շարքին կայ մի չորեքդրամեան, որը բոլորովին ուշադրութեան արժանի է։ Այդ դրամի Ա. երեսին Տիգրանի դէմքը այնքան այլադան է, որ այդ դրամը երբէք չի կարելի դասաւորել մինչև ներկայիս խօսուած չորեքդրամների շարքին։ Այստեղ Տիգրանի անդրու կիսադէմի վրայ քիթը արծուի, ծայրը սուր է և երկայն ու շրթունքները վար կախուած։ Թագի կազմը ճակատի կողմը քիչ նեղ, իսկ ետևի կողմը բարձր։ Ծանիքներով թէև նման է նախորդներին, բայց մի բազէ միայն կայ թագի վրայ և մի ութաթև աստղ։ Նախորդ բոլոր դրամների վրայ թագը աւելի չորսանկիւնի է, վերի մասը քիչ նեղացած, իսկ այստեղ աւելի եռանկիւնու է նման, ճակատի կողմը եռանկիւնիի ծայրը կտրուած։ Ափսոս, որ այս միակ օրինակ չորեքդրամեանի Ա. երեսը, թագի և ականջկալի մեծ մասը մաշուած է, շատ պարզ չի երևում մանրամասնութիւնները։

Պատկ. թիւ 9

Տիգրան Մեծի

1006
29358

Այս դրամի իսկական արժանաւորութիւնը Բ. երեսն է, ուր Անտիոքիա դիցուհու փոխարէն բազմած է Տիգրանի Յունաստանից բերած աստուածուհիներից մէկի անդրին, կամ աւելի հաւանաբար հայկական Աստղիկը։ Նախորդ դրամների վրայ Անտիոքիան արևելեան կանացի թանձր և բազմածալ շորերով էր պճնուած ու նստած աթոռի կամ պորտաքարի վրայ, իսկ այստեղ Աստղիկը կիսամերկ է, միայն մէջքից ներքև սրունքները պատած են մի թափանցիկ շղարշով, որի տակից մարմինն երևում է։ Այս մերկ աստուածուհին ամեն կասկած փարատում է, թէ նա Անտիոքիան չէ, այլ հայկական կամ յունական մի ուրիշ պաշտելի։

Մանաւանդ որ պատկերը ձեռքին չի կրում Սիրիային և հաբաւային երկրներին յատուկ արմաւենու ճիւղը, այլ աջում բռնած է մի լեռնական արծիւ, իսկ ձախում առատութեան եղջիւրը։ Այս կրկնակի նշանները կրում են նոյնպէս Վաղարշակի, Արշակի և Արտաշէսի դրամների վրայ դրոշմուած պատկերները (տես թիւ

10 պատկերը) Տիգրանի և նախորդների դրամները նոյնիսկ այս չորեքդրամով կապում են իրար հետ։

Պատկերի տակ մարմնացեալ գետը մերկ, գլուխը բարձր բռնած, թևերը ձգած հորիզոնական ուղղութեամբ լողում է։ Այս լողացողի գլուխը աստուածուհու երկու սրունքների մէջ է

Պատկեր թիւ 10 Արտաշէսի դրամները

գալիս, որի ոտքերը սրա երկու թևերին են յենած։ Անտիոքիայի պատկերների տակ Որոնտ գետի աջ ուսն էր պատուանդան ծառայում պատկերին, իսկ այստեղ կրկնակի թևերը։ Անտիոքիայի պատկերը նայում էր դէպի աջ, նկարուած էր

աջակողմը, իսկ Աստղիկը նկարուած է ձախադէմ, ձախ կողմն է երևում զննողին։ Պատկերի ետևը—աջ կողմը գրուածէ ΒΑΣΙΛΕΟΣ (թագաւորին), իսկ ձախ կողմը ΤΙΓΡΑΝΟΥ (Տիգրանի)։

Չորեքդրամի ձախ կողմը Տիգրանի անուան տակ երևում է ΘΕ/ΟΦ տառերը, որ E. Babelon-ը կարդում է ΘΕΟΦΙΛΟΣ Թէոփիլոս-Աստուածասէր) (Տես նրա գիրքը երես CCIII). Այս տիտղոսը ինչպէս երևում է հայերը տուել էին Տիգրանին այն պատճառով, որ նա շարունակ այլևայլ աստուածների արձաններն ու անդրիներն էր տեղափոխում Հայաստան, տաճարներ շինում և սրանց եր-

Պատկեր թիւ 11

Արտաշէսի դրամը

Պատկեր թիւ 12

կրպագել տալիս։ Թէև այստեղ մի ևս նկատել էր Babelon-ը բայց այդպիսի տառ պարզ աչքով չի նկատւում, գուցէ նա արծիւը շփոթել է, տառի է նմանեցրել։

Մարմնացեալ գետի լողացող բաց թևերի տակ կայ ΓΜΣ—342 տարեթիւը, որը ապացուցանում է, որ նախորդ դրամների վրայ եղած ΗΛ—38 նոյնպէս տարեթիւ է, առանց Σ—200 թուանշանին։

13. Չորեքդրամեան.—Վերևը նկարագրուած դրամի մի ուրիշ օրինակը կայ դարձեալ Փարիզի Ազգային Մատենադարանում, որը համանման պատկերներ ու զարդերն է կրում, միայն թէ դրամի վրայ կայ 243 թ. փոխարէն ΑΜΣ—241 թ. իսկ ΘΕ/ΟΦ տառերի փոխարէն էլ Ν և Α տառերն է կրում։

14. Չորեքդրամեան.—Այս դրամի մի ուրիշ օրինակն էլ կայ Բրիտանական թանգարանում, որը դարձեալ 12-րդ չորեքդրամի նկարներն ու զարդերն ունի, միայն թէ ΕΜΣ—242 թ. է կրում։

15. Չորեքդրամեան.—Ալէքսանդրապոլի իրաւաբան պ. Յովհաննէս Մ. Տէր Մարտիրոսեանը ունի մի չորեքդրամեան, որը մասամբ նման է մեր թիւ 7 չորեքդրամին, թէև ոչ միայն տար-

բեր կաղապար ունի, այլ բոլորովին մինչև օրս չը հրատարակուած ձև ունի ինչպէս Տիգրանի անդրին, նոյնպէս թագը։ Պատկերի Բ. երեսին Թագաւորին Տիգրանի արձանագրութիւնից ջոկ, Անտիոքիայի գահոյքի տակ մաշուած թիւ 15 մենագիրը կայ և դափնու տակ O կամ աւելի հաւանականաբար Θ,—Թէոփիլոս—աստուածասէր մենագիրը։

16. Չորեքդրամեան.—Նոյն պարոնն ունի մի ուրիշ չորեքդրամեան, որը Անտիոքիայի աթոռի տակ թիւ 2 մենագիրը ունի, բայց դափնի ճիւղի տակ շատ պարզ նկատելի է թիւ 1 մենագիրը։

17. Չորեքդրամեան.—«Այրարատում» Հ. Ալիշանը հրատարակած է Տիգրանի մի շատ գեղեցիկ, գոհարազարդ թագով չորեքդրամեանը, որտեղ Ա. երեսին Տիգրանի թագը անչափ նրբութեամբ է դուրս բերուած և թագաւորի աջ ականջին օղ կայ նկարած։ Չեմ կարող չը նկատել, թէ մինչև օրս լոյս տեսած Տիգրանի դրամներից և ոչ մէկն օղ չի կրում։ Չը լինի թէ դա նկարչի ձեռքից փախած մի աւելորդ զարդ է։ Մինչև օրս Տիգրանի դրամները նկարագրողներից ոչ ոք չի նկատել նրա դրամների վրայ այդ զարդը։ Ճշմարիտ է Արշակունի Պարթևական պարսիկ թագաւորները բոլորն էլ ականջներին օղ կրում էին, միայն թէ հայ թագաւորների վրայ այդ զարդը չի նկատուել։ Մանաւանդ այս պարագան Աղ. Պետրովիչը հայկական թագաւորների առանձնատուկ մի սովորութիւն լինելն ընդգծած է և նրա ներկայացրած Վաղարշակի, Արշակի, Արտաշէսի և ուրիշների դրամները, հակառակ Պարսկական Արշակունիների դրամներին օղ չեն կրում։ Այս պարագան ի նկատի ունենալով մենք մեծ հաճութեամբ կսպասենք, թէ ինչ կը պատասխանեն այս մասին Մխիթ. Վենետիկի հայերը, արդեօք իսկապէս օղակիր դէմքով դրամ ունի՞ն իրենց թանգարանի մէջ։

Ես Վենետիկի վանքը այցելածս ժամանակ այնտեղ տեսայ 40—50 չափ Տիգրանի չորեքդրամեան դրամներ, այլևայլ տարերով, բայց բոլորն էլ սովորական։ Ես իրաւունք և միջոց չունէի այդ դրամները ուսումնասիրելու, դէպքից օգտուելու և արտաքոյ կարգինների արձանագրութիւնները դեռեղելու իմ ցուցակի մէջ։ Ներկայիս դէպքից օգտուելով չի՞ կարելի խնդրել, որ վերհայրերը այդ արձանագրութիւնները գրի առնէին և հետաքրքրական դրամների պատկերների հետ հրատարակէին «Բազմավէպի» էջերում, որով մենք կունենանք Տիգրանի դրամների ամբողջական ցուցակը։

Նոյնը կարելի է առաջադրել ևս Վիէննայի Մխիթ. վերպ-

հայրերին, որ նրանք էլ լրացնէի այս ցուցակը իրենց ունեցած դրամների արձանագրութիւններով, եթէ նրանք չեն բովանդակում այս ցուցակի դրամները։

Հ. Ալիշանի հրատարակած այս դրամի երկրորդ երեսը բոլորովին նման է մեր ցուցակի 11-րդ չորեքդրամին, միայն թէ թիւ 2 մենագրի փոխարէն թիւ 3 մենագիրն ունի։

Դ Ր Ա Մ Ն Ե Ր

18. Դրամ (արծաթ),—Տիգրանի դրամներն այնքան առատ և բազմազան չեն, ինչպէս էին նրա չորեքդրամեանները և դրա համար, աւելի գնահատելի են քանթ. Տիգրանի սովորական չորեքդրամեանները։ Այս դրամների ընդհանրական դիրքը, պատկերը, գիրը միևնոյնն է, ինչ որ տեսանք չորեքդրամեանների վրայ, առանձնայատկութիւնների մասին կխօսենք ամեն մի դրամը ջոկ-ջոկ արձանագրելով։

պատ. թիւ 13 Տիգրան Մեծի

Ինչպէս ընթերցողը տեսնում է այս դրամի Ա. երեսի դէմքի արտայայտութիւնը, թագի զարդերը, ականջկալ, ուսկալ, ծիրանու ճարմանդ ամենքն էլ համանման են նախորդ չորեքդրամեաններուն, միայն թէ դրամի շրջապատի երիզը մարգարտաշար է, հատ հատ գնդեր և ոչ թէ նախորդների նման երիզական-գլանաձև և գունդ ունի։

Բ. երեսին դարձեալ Անտիոքիան է փաթաթուած իր զարդերի և ծիրանիների մէջ, լայն ուսկալով, որ նման է քահանաների եկեղեցում կրած վակասին, նոյն ժանիքաւոր թագը գլխին, արմաւենու ճիւղը աջում և ոտքերի տակ Որոնտ ջրմայր կոյսը լողալիս։ Դրամի աջ կողմը ΒΑΣΙΛΕΩΣ (թագաւորների), իսկ ձախ կողմը ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ (թագաւորին Տիգրանի)։

14. Տիգրանի պատկերը

Անտիոքիա դիցուհու դէմքի և բըռնած արմաւի ոստի մէջ երևում են ΕΛ—36 տարեթիւը, որը պէտք է կարդալ 235 Սելևկեան թուականը, արմաւի ճիւղի և ձմռանագրութեան մէջ Δ տառը և Որոնտ գետի տակ ΞΟ տա

ռերը, որը պիտի կարդալ ΞΑΝΤΙΚΟΣ ամիսը։ Δ տառը Դիոսպոլիս, կամ Դելփիս պէտք է կարդալ։ Այդ որոշելը առ այժմ դժուար է, բայց թէ անշուշտ այդ երկուսից մէկն է, դրան կասկած չի կարող լինել։

Այս դրամը իր թուականով, մանաւանդ Δ նշանով իր տեսակի մէջ միակն է, որ առաջին անգամ լոյս է տեսնում այս ցուցակում, որը պատկանում է իմ ժողովածուին։ Կշիռն է 3. 95 գր.

19. Դրամ.—Բոլորովին նախորդ 18 դրամին նման է այս դրամն էլ, բայց տարբեր դրամահատութեամբ, միևնոյն արձանագրութիւններով և զարդերով։ Բ. երեսի վրայ տարբերութիւն ունի տարեթուի մէջ, այստեղ ΣΛ—36 տարին է փոխանակ 35-ի. ամսի տեղը կարուած է թրքական մուբայոջիների ձեռքով, իսկ քաղաքի մենագիրն է Η—ΗΡΑΚΛΕΩΝ—գուցէ Հերակլէսն Սիրիայի քաղաքը։

պատկեր թիւ 16

Տիգրան Մեծի

պատկեր թիւ 15

Տիգրան Մեծի

Այս դրամն էլ իր թուականով և Η մենագրով առաջին անգամն է լոյս տեսնում։ Իմ ժողովածուիցն է։ Կշիռն է 3. 45 գր.

20. Դրամ.—Այս դրամը նոյնպէս 18 դրամի թուականն ունի, միայն թէ վրան ամիսն էլ որոշ երևում է ΞΚ է, իսկ քաղաքի մենագիրը Γ—է, որն անշուշտ Փիլիպէի ΓΑΖΑ—Գազա քաղաքին է։

Այս դրամն էլ իր մենագրով առաջին անգամն է լոյս տեսնում դրամագիտական աշխարհում։ Պատկանում է իմ ժողովածուին։ Կշիռն է 4. 05 գր.

21. Դրամ.—Փարիզի Ազգային Մատենադարանում մի դրամ կայ յար և նման մեր թ. 18 դրամի շարքին։ Տարեթիւը 35 է։ Բայց Δ տառի փոխարէն մոնոգրամ ունի Ζ տառը, որի նշանակութիւնը առ այժմ պարզաբանուած չէ։

22. Դրամ.—Ասպետ Ադ. Պետրովիչի ժողովածուի մէջ կայ մի դրամ, յար և նման մեր թ. 18 դրամին, միայն թէ 35 թուականի տակ, արմաւենու ճիւղի մօտ երևում է Β մենագիրը, որը նոյնպէս անվերծանելի է։

23. Դրամ.—Իմ դրամների մէջ կայ մէկը, որ բացի վերոգրեալները, տարբերում է ΖΛ—236 թուականի տակ, գափնիի աջ կողմն ունի Θ—Թէոփիլոս—Աստուածասէր մենագիրը և ΞΟ ամսանունը։ Կշիռը է 3. 90 գր.

24. Դրամ.—Նոյնպէս մի ուրիշը կայ, որ ունի ΖΛ—237 տարեթիւը, առանց մենագրի։ Կշիռն է 3. 75 գր.

25. Դրամ.—Համանման մի դրամ ևս կայ իմ ժողովածուի մէջ, որը ΕΛ տարեթիւն ունի (235) առանց մենագրի և ամսագրի։ Կշիռն է 3. 80 գր.

26. Դրամ.—Համանման մի դրամ ևս ունիմ որտեղ տարեթիւ չկայ, բայց գափնու տակ Ζ տառը և Κ ամիսը որոշ երևում են։ Կշիռն է 3. 75 գր.

27. Դրամ.—Տիգրանի դրամներից ամենից հետաքրքրականն այն է, որ հրատարակուեց 1905 թ. «Հանդէս Ամսօրեայի» 4-րդ թուում, որը պատկանում է նոյնպէս ասպետ Ադ. Պետրովիչի ժողովածուին։ Այս դրամի Ա. երեսը կրում է Տիգրանի պատկերը, նոյն ձևով և դիրքով, ինչպէս որ նկարագրուած է վերոգրեալ նրա չորեքդրամեանների վրայ։ Տիգրանի դրամների շրջանակը, ինչպէս թիւ 18 դրամի մասին յիշեցինք, միշտ մարգարտաշար է եղած, իսկ այս դրամի վրայ պահպանուած է հին հայկական և նախկին Արշակունի թագաւորների դրամներին յատուկ երիզաձև շրջանակը, գնդիկներից և երկայնաձև ուլունքներից կազմուած։ Այս նշանն արդէն պարզ ապացոյց է, որ այս դրամն յատուկ է բուն Հայաստանի (գուցէ Արտաշատի կամ Արմաւիրի) դրամանոցներին, որը պահպանուած է Տիգրանի այն չորեքդրամեանների վրայ ևս, որոնք դրոշմուած են Սուրիայում։

պատկեր թիւ 17

Տիգրան Մեծի

Դրամի երկրորդ երեսին, փոխանակ Անտիոքիա դիցուհուն, կանգնած է հաստատուն հողի վրայ մերկամարմին Վահագնը Հերակլէսի ձևով, աջ ձեռքին լախտ, ձախում առիւծենի, գլուխը մերկ։ Այս դրամը ոչ միայն կապւում է վերևը նկարագրած թիւ 12 դրամի հետ, այլ նա խիստ առնչութիւն է ցոյց տալիս Վա-

զարշակի, Արշակի և Արտաշէսի դրամների հետ, որոնց մասին խօսեցանք վերևը (տես պատկերներ թիւ 10, 11 և 12)։

Բայց ամենից հետաքրքրականն այն է, որ այդտեղ Տիգրանի անունի, Տիգրանի դրամների սովորական արձանագրութեան փոխարէն, գրոշմուած է ճիշդ այն արձանագրութիւնը, ինչ որ ունեցել են նրա երեք նախորդները, ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΥ—*Թագաւորին Արշակի Յունասիրի*։ Այս պարագան մեզ ստիպում է մտածելու, որ այն փողերանոցը, ուր տպուած էին Վաղարշակի, Արշակի և Արտաշէսի դրամներն ու չորեքդրամեանները, սոյն արձանագրութեամբ, յետնակողմը Վահագնի, Աստղիկի, Արամազդի, պատկերներովը, այնտեղ պիտի գրոշմուած լինի և այս դրամը։ (Տես թիւ 1, 10, 11, 12 և 22 պատկերները)։

Ինչպէս թւում է, այս դրամը գրոշմուած պիտի լինի Տիգրանի Ասորիքը նուաճելուց, Սելևկեան գահը իւրացնելուց առաջ, քանի որ մինչ այդ դեռ սկսուած չի եղել Տիգրանի սոսկական անունով դրամ գրոշմուել։ Մանաւանդ, որ Պարթևական սովորութեան համեմատ գահակալը ինչ անուն էլ որ ունենար, այդ բոլորը թողնում էր գահ բարձրանալուց յետոյ և կրում էր մի միայն ԱՐՇԱԿ (Գերահզօր—Աստուածազօր) անունը, որը մի միայն գրոշմուած է պարսիկ Պարթևներից 31 թագաւորի և Հայ Արշակունի թագաւորների դրամների վրայ մինչև Տիգրան Մեծ։

Պարթևներին ժամանակակից Սելևկեան Պտղոմեան, Մակեդոնական և սրանց շրջապատող ազգերի մէջ միշտ դրամը կոչուում էր թագաւորի նախնական անունով, ինչպէս Սելևկոս, Պտղոմէոս, Լիսիմախոս, Անտիոքոս, Դիմետրոս, Կլէոպատրաս և այլն, բայց պարսիկ, հայ և ուրիշ Արշակունի դրամների վրայ բացի ΑΡΣΑΚΟΥ—*Արշակի անունը*, ուրիշ անուն դեռ ևս երևցած չէր։ Շատ հաւանական է, որ եթէ Տիգրանի անունը սովորական չը դառնար նրա շրջանում գրոշմուած դրամների վրայ, այլ մնար սոսկական Արշակ, ինչպէս կայ այս դրամի վրայ, այն ժամանակ այս դրամներն էլ բոլորովին պիտի վերագրուէին որևէ պարսկական Արշակունի թագաւորի։

Այս դրամը Տիգրանին կապում է Արշակունեանց տոհմի հետ, այս դրամով անկասկած կարելի է այժմ պնդել, որ Տիգրանը Արշակունի—Պարթևական սերնդից էր և սխալ է այն յունական կարծիքը, թէ Տիգրանի հօր անունը Տիգրան էր, ոչ թէ Արտաշէս։ Չեմ կարող կասկածել այն սովորութեան վրայ, թէ Տիգրանի հօրն էլ կարող էին հայերը և շրջակայ ազգերը Տիգրան (վագր) անուանել, նրա ոյժը, կորովը արտայայտելու մտքով,

ինչպէս Տիգրանները շարունակուում են Մեծն Տիգրանից յետոյ այն ձևով, ինչպէս շարունակուած էին և պարթևական Արշակունները։ Այլևս կասկած չի մնում թէ Տիգրանը Արշակունի է։

ՊՂՆՁԷ ԴՐԱՄՆԵՐ

28. *Պղնձեայ* (chalgue) *լումաներ.*—Մեր ժողովածուի մէջ ունինք մի պղինձ դրամ, որի Ա. երեսի պատկերը ներկայացնում է Տիգրանին ճիշդ այն ձևով, ինչ որ տեսանք թիւ 8 չորեքդրամեանի վրայ։ Շրջապատը սովորական երիզապատն է։ Բ. երեսին Անտիոքիան է սովորական դիրքով, բայց կոշտ նկարով։ Արձանագրութիւնը նկարի աջ և ձախ կողմը։

ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ—*Թագաւորին Տիգրանի*։

29. *Պղնձեայ լումայ.*—Փարիզի Ազգային Գրադարանում կայ մի ուրիշ լումայ, որ Ա. երեսի պատկերը շատ նման է սովորական դրամների վրայ գրոշմուած պատկերին։ Իսկ Բ. երեսին Անտիոքիան սովորական դէմքով, միայն թէ արձանագրութիւնը մի միայն ձախ կողմն է ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ—*Թագաւորին Տիգրանի*։ Շրջափակը մարգարտաշար։

30, *Պղնձեայ լումայ*—Վիէննայում ասպետ Ադ. Պետրովիչի ժողովածուի մէջ կայ մի լումայ, (տես նրա գիրքը երես 190 թիւ 3), Ա. երեսին սովորական դիմանկարով, շրջափակը երիզաձև, Բ. երեսին պատկերը յաղթութիւնը դէպի աջ է գնում, աջը կարկառուած է պսակով։ Արձանագրութիւնը սովորական է։

31. *Պղինձ լումայ.*—Փարիզի Ազգային Գրադարանի մէջ կայ մի լումայ, որի Ա. երես դէմքը բոլորովին համանման է մեր նկարագրած թիւ 12 դրամին, ինչպէս դիմագծերով, զարդերով նոյնպէս և շրջանակով։ Այստեղ թագի վրայ կայ մի արծիւ և մի ութ թևեան աստղ։ Այս պղնձեայ դրամը բոլորովին պարզում է այն նկարները, որոնք մաշուած ու փչացած էին թիւ 12 չորեքդրամի վրայ։ Բ. երեսը դարձեալ նոյն տիպն ունի, միայն աւելի փոքր դիրքով, դէպի աջ նստած է Աստղիկը, կիսամերկ, իսկ մարմնի ներքին մասը ծածկող նրբին բէհեզի տակից երևում են սրունքները։ Տարածած է աջ թևը և ձեռքի վրայ կանգնած է արծիւը։ Ձախ ձեռքով բռնած

պատկեր թիւ 18

Տիգրան Մեծ

է բաղդի եղջիւրը, սրունքների մէջ էլ Որոտ գետը միևնոյն դիրքով։ Մենագիրը փչացած է։ Շրջանակը երիզաձև։

32. Պղինձ լումայ.—Փարիզի Ազգ. Գրադարանի այս օրինակն էլ միևնոյն է, նախորդին յար և նման, միայն տարբեր կաղապարով և ձախակողմն ունի $\frac{\Theta E}{O\Phi}$ տառերը, Աստուածասէր բառն արտայայտում։

23. Պղինձ լումայ.—Նոյն թանգարանում կայ մի ուրիշ օրինակ, որի Ա. երեսը սովորական դրամների ձևն ունի։ Բ. երեսին աջակողմը ΒΑΣΙΛΕΩΣ (թագաւոր) և ձախակողմը ΤΙΓΡΑΝΟΥ (Տիգրանի) և մէջ տեղը —Անտիոքիայի փոխարէն կայ մի արմաւենու մեծ ճիւղ, որի ստորին մասը զարդարուած է երիզակապով։

Այս դրամի ձախ կողմը Տիգրանի անունի առաջ կայ մեագիրը, իսկ աջ կողմը թագաւոր բառի մօտ ΛΦ տառերը։

Q

Այս դրամն էլ մարգարտաշարով է շրջապատուած։

34. Պղինձ լումայ.—Նոյն թանգարանում, վերոգրեալ լումայի Ա. երեսում կայ մի ուրիշ օրինակ, որի Բ. երեսին յաղթական կոյսը կանգնած է, երեսը դէպի ձախ, գլխին բարձրացած է կողով, աջ ձեռքով յենուած է մի ձողի, իսկ ձախում ունի առատութեան եղջիւր։ Շրջապատուած է մարգարտաշարով։



Արտաշէս Ա.

35. Պղինձ չորեքլումայ.—Բրիտանական թանգարանում կայ մի չորեքլումայ (տես Seleusid Kings of Syria, by Percy Garduer, XXVII, 11)։ Այս պղնձեան հաստատում է վերևը 21 թիւ մէջ նկարագրուած դրամը, ուր նոյնպէս Բ. երեսին կանգնած դիրքի մէջ է Վահագնը, մերկ ամբողջ մարմնով, գլուխը բաց, մազերը կռինճ, աջում լախտ բռնած, ձախ ձեռքում առիւծենի։ Այս երու դրամի վրայի Վահագնի պատկերը նոյնն է, ինչ որ Վաղարշակի չորեքդրամի վրայ ցոյց տուինք պատկեր թիւ 10։

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ԱՏՐՊԵՏԻ

ՅԵՏ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՇՐՋԱՆ

ՄԻՀՐԱՆ

1) Երկդրամ. Աղէքսանդր Մակեդոնացու կարգած Հայաստանի ընդհանուր փոխարքան Միհրանը, 330—320 տ. Ք. ծ. առաջ, ունի իր դրամը, որի պատկերը չկարողացանք ձեռք բերել։ Otto-B[au[1]) Միհրան փոխարքային է վերագրում մի շատ գեղեցիկ երկդրամ, հետևեալ խորագրով։

Ա. երեսին, Ուղղադէմ կանգնած է Աստղիկը, ձեռքը ծառի կոճղին յենած, որի վրայ կանգնած է յաղթականը։

Բ. երեսին. Անահիտը նստած է երկու մարգառիւծ սփինքսից շենուած գահոյքի, ձեռքին մի ծաղիկ, որը մօտեցնում է երեսին.

Այս դրամը, որի մասին երկար վէճեր են եղել, անհաւանական են համարում Հայաստանում կտրուած լինելը, եթէ ուշադրութեամբ քննենք ինչպէս Տրիբազի, նոյնպէս և Զարեհի դրամները, տես պատկեր թիւ 3—12, և 21—24 պիտի հասնենք այն եզրակացութեան որ անշուշտ սա էլ Միհրանինն է և Հայ-փոխարքայի դրամ է։ Դրամի գեղեցիկ քանդակագործութիւնն է, որ կասկածեցնում է եւրոպական դրամագէտներին, վերագրել մի այդպիսի գործ Միհրանին և նրա ժամանակակից Հայաստանին։

Բայց դրամի վրայի մարգառիւծ սփինքսը, եթէ համեմատենք Զարեհի սփինքսների հետ և Անահտին, անկասկած պիտի հասնենք այն եզրակացութեան, որ այս դրամները երկուսն էլ քանդակուած են միևնոյն փողերանոցում, միայն այն տարբերութեամբ, որ Տրիբազի և Միհրանի շրջանում 380—300 թ. Քս. ծ. առաջ քանդակագործութիւնը ընդհանուր քանդակագործական աշխարհի հետ կանգնած էր իր բարձրութեան վրայ, իսկ Ք. ծ. 200 տարի առաջ արդէն սայթաքել էր դէպի անկում։

1) Otto Blau, dans la Numisma Zaitschrift de rienne, t, IX, 1877. Jmhoof-Blumer, monnaies Grécque, r. 372, № 75 es pl. Cy· № 15.

Այս պարագային եթէ նկատի առնենք, որ դրամական քանդակագործութիւնը սկսելով Լիւդիայից հասել էր Փռիւգիա, Կապադովկիա և աստիճանաբար Մալաթիա և Խիոն, որտեղից ճանապարհորդել էր Ծոփի երկրի Արշամուշատ և Արարատեան Արտաշատ քաղաքները, այն ժամանակ կը կարողանանք ըմբռնել, թէ ինչ ուղղութեամբ հնարաւոր է դարձել այս զարգացման հասնելու։

ՀԱՐԱՍՊԷՍ

(316 տ. Քս. ծ. առաջ)

2. Երկփող. Փարիզի Ազգային թանգարանում կայ մի սքանչելի պղինձ—երկփող, որը E. Babelon-ը վերագրում է Հայկական բաժանմունքների թագաւորներից մէկին, որի անունն անծանօթ է։ Հռչակաւոր դրամագէտը այս պղնձի կտորի դրոշմուածքի վերայ, նկարների, մանաւանդ անուն կազմի մէջ գտնում է Հայկականութիւն և Արմենական թագաւորների դրամների շարքին արձանագրելով, ուսումնասիրութիւնը թողնում է ապագային։ Այս դրամի քանդակագործութեան գերազանցութիւնը եթէ նկատի առնենք, այն ժամանակ ոչ միայն նրա նախորդ Միհրանի, Մազայիոսի, Տրիբազի դրամների կտրուած վայրերի մասին աւելի լաւ գաղափար կը կարողանանք ունենալ, այլ գեղարուեստի մեր փողերանոցներում ունեցած առաջադիմութեան մասին կունենանք ստակ ըմբռնում։

Ա. երես. Երկու գլուխ քօլոզաձև խոյրով ծածկուած, որոնք դափնի պսակներով են զարդարուած։ Դէմքերը երիտասարդական են, նայում են աջ, աջակողմեանը երեսը կանացի է, ձախակողմինը մարդու, վզերից ներքև մաշուած։ Շրջանակը մարգարտաշար է։ Միայն այս դրամն է, որ միևնոյն երեսին հայ թագաւորի և թագուհու պատկերը միասին են քանդակուած։

Բ. երեսին. Մի արծիւ է կանգնած երեսը դէպի աջ, ոտքերի տակ շանթեր, որոնք արձակել են լոյս, քառորդ ճառագայթով։ Արծւի առաջը ΒΑΣΙΛΕΩΣ (թագաւոր) և ետևը ΧΑΡΑΣΠΟΥ (Հարասպի) արձանագրութեամբ։ Արդեօք Դիոդորոս Սեկիլիացու նկարագրած Հօրանդէսը (Երանդը) չէ՞։

Դրամի վրայ կայ պատկեր թիւ 2 նկար 31, ME մենագիրը, որը Մէլիտօնը կարելի է համարել.

ԱՐՇԱՄԷՍ

230 տարի Քս. ծ. առաջ

3. Երկփող. Անտիոքոս Հիէրաքսը—Սելևկիայի թագաւորը իր սիրելի Արշամէսին նշանակեց Արմենիայի — աւելի հաւանականաբար Արևմտեան Արմենիայի, Ծոփի երկրի և փոքր Արմենիայի —թագաւոր, որն անշուշտ Մեծ-Հայաստանին չէր կարող իշխել, քանի որ վերջինս Սելևկիան իշխանութիւնից կախում չունէր։

Պատ. թիւ 21

Արշամէս

Ա. երեսին. Արշամէսի գլուխն է, մի այնպիսի գտակով պսակուած, որ յիշեցնում է Հարասպի քօլոզաձև խոյրը, իր արքայական տպառօշով, գեղարուեստի կողմից յիշեցնում է նախորդ փողը և աւելի Տրիբազի դրամները։ Շրջապատն է մարգարտաշար։

Բ. Երեսին. Վերևը ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΜΟΥ, որի տակը ձիաւորն արշաւելով գնում է դէպի աջ, գլխին գդակ և ուսերի ծիրանին քամին ծածանում է։

ԱԲԴԻՍԱՐԷՍ

200 տ. Քս. ծ. առաջ.

4. Երկփող. Այս թագաւորի անունն էլ անծանօթ է առանին և օտար պատմիչներին։ E. Babelon այս դրամները դնում է հայ թագաւորների շարքին այն պատճառով, որ անուն կազմը հայկական է, մանաւանդ որ Քսերքսէսի դրամների հետ, որ սրանցից յետոյ յաջորդաբար կտրուած են, այնքան նմանութիւն ունին, որ անկարելի զանազանել նրանց, եթէ վրայի արձանագրութիւնով չը տարբերուէին իրարից։ Այս շրջանում մի Արտաշիասի—կամ Արտաքսիասի անունն էլ են տալիս օտար պատմաբանները, բայց

այնքան զանազանութիւն կայ այս անուններն մէջ, որ չի կարելի նոյն իսկ համեմատութեան դնել։

Արդիսարէսի, Տրիբազի և Զարիադէսի պատկերների, նկարների կազմի մէջ հետևողականութիւն կայ, մանաւանդ քանդակագործութիւնը սրանց իրար հետ կապում է։

Պատ. թիւ. 21

Արդիսարէս

Ա. երեսին այս երկփողի վրայ դրոշմուած է Արդիսարէսը կիսադէմ, մօրուսաւոր, ընչացքով, Հայկական խոյրը գլխին, որը ականջկալ և վզկալ չունի, բայց որի ետևից կախուած է ապառաջի փոխարէն մի ինչ որ փնջիկ։ Շրջապատը մարգարտաշար է։

Բ. Երեսին, Արծիւը ուղղաձիգ կանգնած է, գլուխը բարձր բռնած, նայում է աջ կողմ, որի առաջ գրուած է ΒΑΣΙΛΕΩΣ և ետևը ΑΒΔΙΣΣΑΡΟΥ. Թագաւորի Արդիսարի։

5. Դանկ (պղինձ) Միևնոյն ձևով և գրով, միևնոյն պատկերներն ու քանդակները, առանց նկարների փոփոխութեան, միայն փոքրացրած։

Պատ. թիւ 23

Հարասպէս

Պատ. թիւ 24

Արդիսարէս

Բ. Երեսին կայ ΛΑΙ... տառերը, որոնք անվերծանելի են։

6. Դանկ. Ա. Երեսը նախորդների նման առանց փոփոխութեան։

Բ. Երեսը նոյն արձանագրութիւնները, նոյն ձևը, միայն արծիւի փոխարէն փորագրուած է մի ձիու սանձուած և կազմ գլուխ։ Այսպիսի նկարներ գտնւում են Սելևկեան և Պարթևական փողերի վրայ նոյն շրջանում։

ՔՍԵՐՔՍԷՍ

170 տարի Քր. ծ. առաջ։

7. Երկփող. Պոլիբոսը պատմում է Քսերքսէսի՝ Արշամուշատի թագաւորի և Անտիոք Սելևկեան թագաւորի մէջ պատահած միջադէպը և իր Անտիոքիա քրոջը Քսերքսէսին կնութեան տալը։ Այս պատմութիւնից երևում, որ Քսերքսէսի հայրը՝ դուցէ ինքը Արդիսարէսը, ենթադրելի է, թէ Արտաշիսեան տոհմից է, երկար ժամանակ չի վճարել Սելևկեաններին վասալական հարկը։ Անտիոքոսը (հաւանականաբար Եպիփանոսը) առանց ուշը դարձնելու շրջապատողներին, ոչ միայն հաշտութիւն է կապում Քսերքսէսի հետ, բաշխում է նախորդ տարիների՝ անվճար հարկերը, այլ նոյն իսկ քրոջը կնութեան է տալիս Քսերքսէսին, խնամութեամբ կապւում է, 300 տաղանդ էլ դրամ է ստանում, հազար ձի ու ջորի և հեռանում է երկրից։

Պատ. թիւ 25

Քսերքսէս

Պատ. թիւ 26

Քսերքսէս

Արդեօք յոյն պատմիչներից հայկական Արտաշիսեան թագաւորների համարուածները այս տոհմերը չեն կազմում։ Արդեօք Արևմտեան Արմենիայի թագաւորներին չեն շփոթել յոյները Արարատեան երկրում նստող իշխաններից։

Այս պատմութեան մէջ մեզ համար հետաքրքրական այն է, որ Քսերքսէսը նստում էր Արշամուշատում, Եփրատ գետի ափին մօտ, որտեղ և կտրուած պիտի լինի հաւանականաբար այս դրամները։ Նախորդի դրամների վրայի արձանագրութիւնը ΑΒΔΙΣΑΡΟΥ և ΞΕΡΞΟΥ եթէ չը լինէր, ամեն մի դրամագէտ նրանց միևնոյն թագաւորի կարող էր վերագրել և Կիլիկիայի մի քաղաքի։

Այս պարագան մեզ ցոյց է տալիս, թէ Եփրատի ափին մօտ ինչպէս որ Արշամուշատում կար այնպիսի փողերանոց, որ այնտեղ

այսպիսի սքանչելի քանդակներով դրամներ էին կտրում. չէր կարող համանման փողերանոցներ և քանդակողներ չը գտնուել Եփրատի միւս ափում՝ Փոքր—Արմենիայում և Այրարատեան Աշխարհի—Արտաշատում. ուր նստող Թագաւորները միշտ մրցել են իրար դէմ ինչպէս զինուորական, նոյնպէս և կուլտուրական ոյժով, որպէս զի իրար ձեռքից յափշտակեն գերիշխանութիւնը։

Մանաւանդ որ քանդակագործութիւնը և փողերանոցը յանկարծական այսպիսի կատարելատիպ դրամներ չէր կարող տալ, եթէ երկար տարիներով փողերանոցներում մարդած քանդակագործներ չը լինէին։ Խերքսէսի դրամները իր նախորդների դրամների հետ քանդակագործական շարքով ետ են գնում և հասնում են մինչև Մազայոս ու Տրիբազ, բացի այն անդառնալի կորած դրամները, որոնք անընթեռնելի են մնացել, կամ ուրիշ երկրների են վերագրուել, կամ թէ սպասում են պեղումների, որ տան իրենց վերջին խօսքը։

Ա. Երես, Խերքսէսի այս երկփողի պատկերի խոյրը յար և նման է նախորդ Արդիսարէսի դրամներին, արքայական ապառօշով, աջակողմեան դէմքով, որի ետևը կայ պատկեր թիւ 2, նկար 28 մենագիր, որն անվերծանելի է եղել մինչև այժմ։

Բ. Երեսին, Յաղթականը ուղղաձիգ գնում է դէպի ձախ, աջում մի պսակ բռնած. որ գնում է Խերքսէսի անուան տառերի գլխին։ Ձախ ձեռքում բռնած է ետևից քղանցքը և բարձրացրած։ Ձախակողմն ունի, պատկեր թիւ 2, նկար 31 մենագիրը։ Արձանագրութիւն ΒΑΣΙΛΕΩΣ է աջ կողմը և ΞΕΡΞΟΥ ձախ կողմը։

8. Դանկ. Միևնոյն տիպը Ա. Երեսին առանց փոփոխութեան միայն փոքրացրած։

Բ. Երեսին. Յաղթականը ուղղուած դէպի ձախ։ Արքայի անուան վրայ պսակ է գնում աջ ձեռքով և ձախում բռնած է Վահանը, որ գետին է դրել։ Ձախակողմն ունի պատկեր թիւ 2, նկար 32, մենագիրը, որ կարելի է բաժանել ΑΡΣΜ. Արշամուշատ կարդալ։

ԶԱՐԷՀ

190 տ. Քս. ծ. առ.

9.) Ստրաբոնի ցուցման համաձայն Սելևկեաններից գլուխ բարձրացրած Արտաքսէրսի ընկերը Զարեհը — ΔΖΑΡΙΑΛ-ը թագաւորել է Ծոփի երկրում (Σοφεν)։ Զարեհի մասին սրանից աւելի ծանօթութիւն չեն թողել մեր պատմագիրները։ Բայց Զարեհը ինքը թողել է այնպիսի դրամներ, որ դրանցով ձգտում է ապրել դեռ շատ դարեր։ Զարեհի սերնդից մի իշխան ևս ունինք, Ծոփացի Արդանէսը!—զուցէ Սրտաւազդը, որ յաղթեց Տիգրան Մեծից և հպատակեց նրա գերիշխանութեան։

Երկփող. Ա. երեսը Զարիադէսի կամ Զարեհի պատկերը, վեղարաձև խոյրով, որ ունի վզկալ և ականջկալները կապած են կզակի տակը։ Ճակատին մի շարք ոսկէզարդեր են երևում, որոնք Էրզրումի գաղթականութեան կիների ճակատոսկուն շատ նման է։ Ծիրանու ծայրերը աջ ուսին հանգուստուած են։ Ընչացք ու պէս ածելուած է։ Այս դրամի պատկերը իր ձևով նման է Տրիբազի և Միհրանի դրամներին, որին հետևել են Տիգրան Մեծի և հետեւորդների դրամների քանդակագործները։ Զարեհի վեղարաձև խոյրը կարելի է տեսնել Արշակունի հիմնադիր Արշակի և Տրդատի դրամների վրայ, որոնք նոյնպէս վեղարաւոր սրածայր խոյրեր էին կրում։ Շրջանակն է մարգարտաշար։

Գատ. թիւ 27 Գատ. թիւ 28

Զարեհ Զարեհ

Բ. Երեսին։ Անահիտը կանգնած է մարգարիտ երկու սփինքսներից կազմուած գահի ետևը, ամբողջադէմ, աջ ձեռքին ծաղիկ բարձրացրած, ձախը կախած։ Սփինքսները աջ ու ձախ են դարձած, որոնց մարդկային դէմքերը ուղղահայեաց, գլուխները վարսակալով են զարդարուած և յետոյքով իրար միացած են։

Անահիտի աջ կողմը ΔΖΑΡΙ — Զարի, իսկ ձախ կողմը ΑΝΙ ΖΑ — ΔΩ։ Վերջին երկու տառը տողի տակն է։ Շրջապատը մարգարտաշար է։ Այս դրամը Բերլինի թանգարանումն է։

10) Զորեքփող. Զարեհի մի փոքն էլ Տիգրանեան ձևի թագով գտնուում է դարձեալ Բերլինի թանգարանում։ Սրա թագը քիչ երկար է Տիգրանի թագերից։ Վրայի նկարները այնքան մաշուած են, որ չեն նշմարուում։

Բ. երեսի թագաւորի դէմքը դէպի աջ հայեացքով, ածիլուած երեսով։ Ձգկալն ու ականջկալը միևնոյն է, ինչ որ է Տրիբազի և Տիգրանի դրամների վրայ։ Արձանագրութիւնն է.

ΖΑΡΙΑΔΟΥ — *Զարիադի*

Բ. երեսին, փայլակ-կայծակի խորհրդանշանը, որն առաջին անգամն է պատահում հայ-դրամների շարքին։ Այս խորհրդանիշի վրան ΒΑΣΙΛΕΩΣ *և տակը, որ ամենազարմանալին է* ΒΑΣΙΛΕΩΝ։

Ինչպէս երևում է Հայ-թագաւորների մէջ գերագոյնութեան կռիւը այնտեղ է հասած, որ ամեն մի գահակալ տքնում է թագաւորների-թագաւոր լինել։ Անշուշտ այս դրամը կտրուած է Փոքր-Արմենիայում, կամ Ծոփի երկրում, որտեղ արևելեան Հայաստանի իշխանները չէին կարողացել իրենց գերիշխանութիւնն հաստատել։ Նրանց հակառակորդ Զարեհն էլ ուզում է գերիշխանութիւնը իւրացնել դրամի վրայ գրելով։ Այս պարագան ցոյց է տալիս, թէ ինչքան շատ նիւթ կայ եղել մեր պատմահօր՝ Խորենացու ձեռքը, որը Մորփիւլիէսի հետ Վաղարշակի պատերազմի պատմութիւնը մեզ տալիս է, որը ոտնձգութիւններին վերջ տալու, ներքին հակառակութիւնները ջնջելու համար անարգութեամբ կախել է տալիս այդ իշխանին։ Գուցէ այս կռիւն է եղել, որ Հայ բնիկ թագաւորները տքնել են Արշակունի Վաղարշակին Հայաստան բերել, միանալ, ոյժ կազմել և խաղաղել։

11. փող. Թիւ 9 երկփողի մի փոքրիկ օրինակն էլ կար դարձեալ Բերլինում։

Ա. երեսը միևնոյն ձևն ունի, ինչ որ նախորդ 9 համարումն էր, միայն թէ պատկերի դէմքի արտայայտութիւնն ու ձևը քիչ տարբեր է նախորդից։ Այնտեղ թագաւորը ծեր է և յետ ընկած կզակ ունի, իսկ այստեղ երիտասարդ և դուրս ցցուած կզակ։

Բ. երեսը ձիաւոր է, ճիշտ Արշամի դրամի ձիաւորի նման։ Երիվարը սրընթաց գնում է, որի ճանապարհը կտրել է ինչ որ մի տաք երկրի ծառ—արմաւենի։ Ինչպէս երևում է խորհրդաւոր է այս շատ խելացի խորհրդանշանը, որն ակնարկում է Սելևկեաններին, գուցէ և հարաւից եկած Հայ-Արշակունիներին։

Ձիաւորի գլխի խոյրը Զարեհի խոյրից չի տարբերւում, որի վրայ գրոշմուած ΔΣ — ΑΡΙΑ...։ *Առաջին երկու տառը գտնուում է ձիու ոտքի տակ, իսկ միւս տառերը գլխին։ Շրջանակը չի երևում։*

Այս դրամների և նախորդների մէջ կայ մեծ տարբերութիւն քանդակագործութեան կողմից, այստեղ գեղարուեստը բնականաբար ընկած է։

ՄՈՐ—ՓԻՒԼԻՔ

148—150

12 Փող. Մար—Փիւլիք, կամ Մոր-փիւղիկէս համարուում է Զարէհի յաջորդը Ծոփի երկրում, որը թագաւորում էր այնտեղ Քս. ծ 150—148 տարի առաջ։ Այս այն շրջանն է երբ Հայ-նախարարները Հայ-թագաւորները տքնում էին միանալ մի գահի շուրջը, ոյժեղանալ և այնպիսի դիրք գրաւել, որ երկիրը հիմնաւորապէս խաղաղուի։ Վաղարշակ Ա. Արշակունին ամբողջ Մեծ-Հայքին թագաւոր կոչուելով, ուզեց Փոքր—Արմենեան էլ միացնել և մի հզօրութիւն կազմելով այնպիսի դիրք բռնել, որ ամբողջ Հայաստանի մէջ խաղաղութիւն և անդորրութիւն հաստատուի։ Սա այն Վաղարշակն է, որին Յուստինոս պատմիչը Բօգաղիս Bogasis *է անուանում, որը կարողացաւ իսկապէս Հայաստանը միացնել և դիրք գրաւել։*

Գատ. Թիւ 29

Զարէհ

Գատ. Թիւ 30

Մոր—փիւլիք

Վաղարշակի պատերազմի հակառակորդ Մորփիւլիկէսի դրամը, ապացուցանում է ոչ միայն նրա գոյութիւնը, այլ պատերազմի եղելութիւնը։

Ա. երեսին. Թագաւորի պատկերը համանման է Զարէհի փողին, իր ամբողջ կազմով, միայն աւելի երիտասարդ։

Բ. երեսին. Անահիտը կանգնած է ուղղաղէմ, ամբողջ հասակով, աջ ձեռքին մի ծաղիկ բարձրացրած։ Անահիտի աջ թևի տակով Η տառը, իսկ ծախ կողմը ΣΑΡΙ *և տակը* ΜΟΡΙ։

ԿՈՄԱԳԷՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ

Շ Ա Մ Է Ս

140 տ. Քս. ծ. առջ.

1. Երեկփող. Ծոփի երկրի հարաւային կողմը. Փոքր—Ար-

մենիայի և Կիլիկեայի արևելեան կողմը—Եփրատի երկու ափերին եղած երկրում հաստատուած էր մի հայ թագաւորութիւն, որը զուգընթացաբար թագաւորել է Ծոփի, Փոքր—Արմենայի և Մեծ Հայքի թագաւորների հետ։ Եւ ինչպէս երևում է Կոմմագենի տոհմական հայ իշխաններն էլ, Հայկական միւս իշխանների նման ձգտել են իրենց անկախութիւնը ձեռք բերել և դուրս գալ Սելևկեանների հարկաւորութիւնից, ուր ընկել էին շնորհիւ Աղէքսանդր Մակեդոնացու յաղթութիւնների։

Այս թագաւորի անունը չի յիշատակւած և ոչ մի հայ պատմագիր, միայն նրա երկու պղինձ փողերն են, որ նրան անմահացրել են և դրել են հանրամարդկային պատմութեան առաջ, որ Աղէքսանդրից յետոյ, նոյնիսկ Հայկական փոքրիկ—գաւառների թագակիրները փողերանոց պահպանում և դրամ էին դրոշմում։ Ինչպէս երևում է Շամէսի փողերանոցը Շամուշատուն էր։

Ա. երես. Վիեննայի թանգարանում կայ մի երկփող, որի խոյրը յիշեցնում է Շամուշատի թագաւոր Արշամի խոյրը, միայն թէ Արշամը խոյրի վրայ վեղար չունէր, որ ծայրերը վիզն ու ականջները ծածկէին, իսկ այստեղ վեղարը իր ամբողջութեամբ փորագրուած է հմուտ քանդակագործի ձեռքով։ Երեսը դէպի աջ է, ածիլուած և մարգարտաշար շրջանակ ունի, իսկ վեղարի եռևը մի հասկ է երևում ցորեն թէ բրինձ չի զանազանւում։

Գաս. թիւ 31

Շամէսի

Գաս. թիւ 32

Շամէսի

Բ. Երեսին. Հերոսի նիզակը առաստութեան եղջիւրների հետ հիւսուած։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΜΕΣΟΣ Թագաւորին Շամէսի ΘΕΟΔΕΒΟΔΥΚ ΑΙΠΔΚΑΙΟΥ Աստուծոյ իմաստնի և Արդարադատի։ Շրջանակը փչացած է.

2. Փող. Ա. երես. Շամէսի գլուխը վարսակալով և ճառագայթներով զարդարուած. երեսը դէպի աջ, ածելուած, շրջանակն է մարգարտաշար։

Բ. երես. Յաղթանակը գնում է դէպի ձախ, աջում տարածած ունի մի պսակ, իսկ ձախով քղանցքը վերբռնած։ Յաղթականի ոտքերի տակ երևում է ΓΛ տառերը. որոնք Սելևկեան 133

թուականն են ցոյց տալիս։ Ճշմարիտ է 100 ցոյց տուող Ρ տառը պակասում է, բայց այդ ժամանակները սովորական էր դարձած, ինչպէս այս մասին Տիգրան Մեծի դրամների առթիւ մանրամասն ցոյց եմ տուել. առանց հարիւրերորդը գրելու 33 թուերը կարդում էին զօրութեամբ հարիւրն աւելացնելով։ Յաղթանակի թևի տակ մի Θ կայ, որը պէտք է ΘΕΥ=Աստուծոյ կարդալ։ Բայց որովհետև 133 թուականը չի համապատասխանում 172 Սելևկեան թուին, այդ պիտ լինի Γ Π, որը 173 թուականն է ցոյց տալիս և լրացնում է թուականը։ Π-ը շփոթուած է Λ-ի հետ։

ՄԻՀՐԴԱՏ Ա. ԿԱԼԼԻՆԻԿՈՍ

96—70 Քս. ծ. առաջ.

3. Փող Ա. Երես. Մեհրդատի գլուխը, ածելուած աջադէմ, գլխին հայկական խոյրով, ինչ որ տեսանք Տրդատի, Զարէհի դրամների վրայ։

Բ. երեսին. Աջ կողմը ΒΑΣΙΛΕΩΣ և ΜΙΘΡΑΔΑΤΗΣ ΚΑΛΛΙΝΙΚΟΥ ձախկողմը։ Աթենասը ձախ կողմն է գնում ամբողջ մարմնով, ձախ ձեռքով Վահանին կրթնաց։

Գաս. թիւ 33

Գաս. թիւ 34

Միհրդատ Ա. Կալլինիկոս

4. Փող. Ա. երես. Թեատարած Արծիւ։ Արմաւենին կտուցում, թեկնած ձախ թևին։

Բ. Երես Թեատարած վիշապապատ գաւազան։ Արձանագրութիւնն է. ΜΙΘΡΑΔΑΤΟΥ ΚΑΛΛΙΝΙΚΟΥ ձախ կողմը և ΒΑΣΙΛΕΩΣ աջ կողմը։ Մաշուած է շրջանակը։

5, Փող. Ա. Երեսը. Միենոյնն է, ինչ որ նախորդի վրայ։ Բ. Երեսին նոյն արձանագրութիւնը, միայն խորհրդանիշը փոխուած է Արմաւենու տերևով։

ԱՆՏԻՈՔՈՍ I ԹԷՈՍ

69—34 Բ. Ծ. առ.

6. Փող. Ա. Երես. Անտիոքի դէմքը, ածելուած, գլուխը Տիգրանեան

Պատ. թիւ 35 *Պատ. թիւ 36*

Միհրդատ Ա. *Անտիոքոս*

թագով զարդարուած, որը նման է Զարեհի թագին ևս։ Մարգարտի շրջանակով։

Պատ. թիւ 37

Փրիապատ պարսկ. Պարթեւ թագաւորի դրամները

Բ. Երես. Առիւծը դէպի աջ գնալիս։ Առիւծի ներքեւ վրայ ΒΑΣΙΛΕΩΣ *և տակը* ΑΝΤΙΟΧΟΥ.=*Անտիոքի։*

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ՎԱՂԱՐՇԱԿ

1. Զորեքդրամ. W. Wroth-ը հրատարակելով Պարթևական թագաւորների դրամները, 1903 թ., մի խումբ արծաթ և պղինձ դրամներ չի կարողացել որոշել, թէ որ թագաւորին վերագրէ։ Այդ դրամները բոլորն էլ կրում են ΑΡΣΑΚΟΥ—ԱՐՇԱԿԻ անունը. հետևաբար անկասկած է, որ դրանք պատկանում են Արշակունեան Արշակներին, բայց թէ որին, նա մնացել է անորոշ դրութիւն մէջ։ Այս անորոշութիւնից ազատուելու համար դրամագէտը դրամներն անուանել է Period of Mitherdates—*Միհրդատեան շրջան* և էլ առաջ չի կարողացել գնալ։

Այս դրամները Միհրդատեան շրջան անուանելու մեծ իրաւունք ունի պ. Wroth-ը, քանի որ դրանց վրայ նկատելի է Սելևկեան ΓΟΡ—173 թուականը, երբ թագաւորում էր Պարթև—Պասկական Միհրդատ Մեծը, այն հզօր Պարթևը, որ Սելևկեաններից ետ առաւ ամբողջ Պարսկաստանը մինչև Եփրատ գետը։ Եւ քանի որ այդ դրամների վրայ դրոշմուած պատկերը, որի շատ սքանչելի պահուած և անչափ գեղեցիկ քանդակուած օրինակները կան Բրիտանական Մուզէում, չէ կարողացել նմանեցնել Միհրդատ մեծին վերագրուած դրամներին, ուստի նախապատուութիւն է տուել դրանք Միհրդատեան շրջանի դրամներ անուանելով անցնելու։

Այս դրամները եթէ Միհրդատ Մեծինը չէ, հապա որին պէտք է վերագրել, քանի որ այդ թուականին Արշակունի պարթևները մի միայն մի Արքայից—Արքայ ունէին և պատմութեան մէջ հակաթոռ չի նկատուած։

Հետևեալ տարին ասպետ Ադ. Պետրովիչը հրատարակելով իր Արշակունի դրամների ժողովածուն Վիէննայում, նա այդ դրամները վերագրեց Հայ—Արշակունի Վաղարշակին, Արշակին՝ Արտաշէսին և Արտաւազդին։ Այս դրամները Արշակունի առաջին այս երեք թագաւորներին վերագրելու անչափ իրաւունք ունէր բազմաշխատ դրամագէտը։ Նախ որ նրանք արքայի պատկերվ

տիպով, քանդակագործութեամբ և ուրիշ մանրամասնութեամբ ոչնչով նման չէին Պարթևական Արքայից—Արքային՝ Միհրդատ Մեծին։ Նրանք կրելով Միհրդատի ժամանակակից թուական, լիովին տարբեր մի թագաւորի պատկեր էին կրում։ Ադ. Պետրովիչը չի կարողանում ևս հաշտուել այն մտքի հետ, թէ Խորենացին որևէ դրական աւանդութեան վրայ հիմնած չը լինի Միհրդատի եղբօրը՝ Վաղարշակ Ա. Արշակունու Հայաստանի վրայ թագաւորելը։ Ինչպէս կարող էր երևակայութեամբ մի օտար դինաստիա Հայաստան մտցնել պատկառելի պատմագիրը, լռութեան մատնելով ընիկ թագաւորներին։ Միհրդատ Մեծի ժամանակակից միայն Արշակունի թագաւորը կարող է լինել Խորենացու յիշած Վաղարշակը, որից ջոկ ուրիշ Արշակունի թագակիր չի կարելի գտնել այդ շրջանում։

Հեղինակը այս եզրակացութեան հասել է դարձեալ այն պատճառներով, որ Հայ-Արշակունիներին վերագրուած բոլոր դրամները աջադէմն է քանդակուած, իսկ պարսիկ պարթևականներինը՝ ձախադէմ։ Պարթևական պարսիկ դրամների շրջանակն է մարգարտաշարը, Հայկականը՝ երիզաձև, գլանաձև և գունդ։ Պարսկ. դրամների վրայ արձանագրութիւնները անպատճառ պահպանած են սովորական դարձուածքները 7—8 տողից կազմուած, իսկ Հայկականը պարզ է—մեծ մասը *թագաւորին Արշակի*, կամ «*թագաւորին մեծի Արշակի*» և կամ ամենաշատը «*թագաւորին մեծի Արշակի յունասիրի*»։ Պարսիկ Արշակ թագաւորները կրում են ականջի օղեր, այն ինչ Հայկական թագաւորների դրամների վրայ երբէք չի նկատուած։

Պարսկական դրամների ետևը մինչև այսօր երբէք չի նկատուած Վահագնը (Հիրակլէս), Դիմեարը (գուցէ և Աստղիկը), Զևսը և ուրիշ դիւերի ու դիցուհիների պատկերներ, այն ինչ Հայկական Ա. երեք թագաւորների դրամների վրայ պարսկական Արշակ Մեծի աղեղնաւոր պատկերը չկայ այլ, փոխարինուած է Սելևկեան և արևմտեան երկրների նման դիցուհիների պատկերներով։

Մանաւանդ այս դրամներն այնպիսի մենագիրներ ունին, որոնք երբէք տեսնուած չեն Պարս. Արշակունիների դրամների վրայ։ Սրանց վրայ կարելի է աւելացնել և այն պարագան, որ յայտնի դրամագէտ և կոմս Պրոկէշ Օստէնը (Compt Prokesch Osten, mémoires de la Société Françaaise de Numismatique etc. Paris 1874—5.) ուսումնասիրելով այս դրամների զանազանութիւնները, հիմնական տարբերութիւնները և բաղդատելով Միհրդատ Մեծի դրամների հետ, հասել էր այն եզրակացութեան, որ Միհրդատի մահուանից յետոյ էլ այդ դրամները շարունակուել են։ Այս պարագան դիտնական դրամագէտին ստիպել էին համոզուելու, որ այդ դրամները եկել էին հաստատելու Մովսէս Խորենացու նկարագրած Վաղարշակ Ա. գոյութիւնը։

Այս բոլոր պարագաները ուսումնասիրելուց յետոյ, ամենից շատ մեզ հետաքրքրեց Վաղարշակին վերագրուած դրամների մենագրերը, որոնք, ինչպէս մեծ հմտութեամբ նկատել է Ա. Պետրովիչը, իրենց նմանը չունին որևէ հարևան երկրների դրամների վրայ։ Թէ Ա. Պետրովիչի, թէ Բրիտիշ Մուզէի Վաղարշակին ընծայուած չորեքդրամների և դրամների վրայ աչքի են ընկնում մեր պատկեր թիւ 1, մենագիր 24, որի տառերը անդամահատելով, մենք գտնում ենք ΑΡΤΣ, որոնք կազմում են Հայաստանի մայրաքաղաքի—Արտաշատ-ի տառերը։ Եթէ այս մենագրիս վրայ լըրջութեամբ ուշադրութիւն դարձնենք, ինչպէս ամեն մի մենագիր գրաւում է Փարիզի Ազգային մատենադարանի վարչի՝ E. Babelon-ի ուշադրութիւնը, քննենք նրա կազմը, տառերը և անշուշտ պիտի համոզուենք, որ այս մենագրով բացի Արտաշատ բառը, չի կարելի ուրիշ քաղաքի անուն կարդալ։

Ճշմարիտ է յոյները Արտաշատը գրում էին ΑΡΤΞΑΤ և ոչ ΑΡΤΑΣΑΤ, բայց եթէ նկատի առնենք, որ դրամը կտրուած է մի այնպիսի քաղաքում, որոնք առանց դժուարութեան Արտասատ կամ աւելի ճիշտ Արտաշատ կարող էին արտասանել, ոչ թէ յոյների նման Արտաքսատ, այն ժամանակ Ξ և Σ տառի տարբերութիւնը կարող է չքանալ քննողի աչքում։ Մանաւանդ որ մենագրերի ծածկագրերում այսպիսի զարտուղութիւնները ներելի է։

Դրամների Ա. Երեսի քանդակագործութիւնը թէև նման է Միհրդատ մեծի և Նոյնիսկ Դիմեարոս II-ի երկրորդ թագաւորութեան շրջանում կտրել տուած դրամներին, բայց քանդակագործը կարող է նկատել, որ այդ դրամների վրայ բոլորովին այլ տիպար կայ։ Համեմատեցէք Վաղարշակի մօրուսի ձևը Տրդրազի դրամների վրայ քանդակուած Վահագին մօրուսի հետ, քթի փորագրութեան ձևն ու կնճիռները, իրար հետ (տես պատկեր թիւ 8, նկար 1,) և շատ նմանութիւններ պիտի գտնէք, մանաւանդ ունքերի և ճակատների մէջ։ Նոյնպէս եթէ համեմատենք Փսերքսէսի և Արդիսարէսի նկարների հետ (տես պատկեր թիւ 23—24 նկար 1 և 2.) մենք կը հասնենք այն եզրակացութեան, որ նրանք իրար հետ մեծ յարակցութիւն ունին։

Մանաւանդ մեծ նմանութիւն կայ չորեքդրամի Բ. երեսի Վահագնի պատկերների, դիրքի, ձևի, Տրդրազի դրամների վրայ գըտնուած դրամների Վահագնի ընած դիրքի մէջ։ Դրամների Բ. երեսին դահոյքի նստած Արամազդի պատկերը, աջում ասսան, ձա-

խում բաղէն թէևն նմանութիւն ունի ժամանակակից Սելևկեան դրամների վրայ քանդակուած պատկերներին, բայց այնպիսի առանձնայատկութիւններ ունեն, որ իսկոյն աչքի են ընկնում իրենց մենագրերով, որ լիովին զանազանւում է նրանցից։

Վաղարշակի վերագրուած դրամներից մի քանիսը չորեքդրամեանի մենագիրն ունին, մի քանիսը մեր պատկեր թիւ 1-ի 26 մենագիրն են կրում, որը դարձեալ ΑΡΤΣ տառերից է կազմուած, թէև նախորդից բոլորովին տարբեր ձևով։

Պատ. թիւ 40

Վաղարշակ

Վաղարշակ Ա. հանրածանօթ չորեքդրամի Ա. երեսին Վաղարշակի դէմքն է, Արշակունի թագաւորների նման սանրուած բոլորշի մազերով, որոնք շրջապատում է վարսակալ եռաձող երիզը, որի ծայրերը ապառաջի նման վայր են կախուած ետևից մինչև թիկունքը։ Թագաւորի անդրին երևում է մինչև ուսերը, որոնց վրայ օձիքն ու մանեակը գեղեցիկ կերպով դուրս են բերուած։ Դէմքը նայում է աջ կողմը, ընչացքը չափաւոր, մօրուսը կարճ, թաւ և վայելուչ դարսուածքով։ Բաց աչքերը կենդանի և վեհ հայեացք ունին, քիթն ուղիղ, ողորկ և ուղղանկիւն դարձուածքով։ Դրամի շրջանակն է երիզաձև, գլանաձև երկար և գնդաձև շարքով։

Բ. երեսը Վահագնը կանգնած է, նայում է դէպի ձախ, բաց գլխին կռինճ մազերով, անմօրուս, ուղղաձիկ հասակով, ջղուտ մկաններով, որոնք ամբողջ մարմնի խաղերն ու մասերը ցոյց են տալիս զննողին։ Մարմինն ուղղադէմ է և երևում է ինչպէս մերկ կուրծքն ու փորը, նոյնպէս ազդրներն ու սրունքները։ Աջ ձեռքում բռնած է գինու կօշը, ձախում լախտը, նոյն թևին առուծի մորթը, և աղեղը։ Աջ ոտքը հաստատ գետին դրած, ձախի մատներն են գետին։ Արձանագրութիւնն է. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΥ։ Վահագնի ոտքերի տակ ΓΟΡ=173 Սելևկեան թուականը, 140—139 Ք. ծ. ա.։ Մենագիրն է պատկեր թիւ 1—նկ. 24, որը կարդում ենք ΑΡΤΣ Արտաշատ։

Վահագնի այս ձևով պատկերը կարելի է տեսնել Տիգրանի թագաւորութեան սկզբնական շրջանում կտրել տուած մի դրամի վրայ, ուր Տիգրանը դեռ չէր խրախուսուած իր անուամբ դրամներ կտրել, այլ Արտաշատի դրամատանը հին սովորութեան համաձայն կտրուած է ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΥ. Վահագնի պատկերի ձևն ու արձանագրութիւնը Տիգրանին կապում է Արշակունի Վաղարշակի, Արշակի և Արտաշէսի հետ։

2. Չորեքդրամ. Բրիտանական թանգարանում կայ միևնոյն դրամը, միևնոյն նկարներով և արձանագրով. ΔΟΡ—174 թ. (137 Ք. ծ. ա.)։ Մենագիրը փչացած է։

—

Պատ. թիւ 41

Վաղարշակ

3. Չորեքդրամ. Բրիտանական թանգարանում կայ միևնոյն դրամը. միևնոյն պատկերով, ետևի նկարով և արձանագրութեամբ, միայն թուական չունի և մենագիրը պատկեր թիւ 1, նկար 26 է, որը կարդում ենք ΑΡΤΣ Արտաշատ։

Պատ. թիւ 42

Վաղարշակ

5) Չորեքդրամ. Ս. Պետերբուրգի Էրմիտաժի թանգարանում կայ միևնոյն դրամը, միևնոյն արձանագրութեամբ և պատկերով, միայն մենագիրն է պատկեր թիւ 1. նկար 25. այս

մենագիրը կարելի է կարդալ ΘΕΥ. թէոս, որը կարելի է տեսնել Տիգրանի դրամների վրայ, քիչ տարբեր և բարդ կազմով։

—

6.) Դրամ. Նախորդ չորեքգրամի մի փոքրիկ օրինակը կայ, նոյն փոքրիկ թանգարանը։

Ա. երեսը միևնոյն պատկերով, ինչ որ էր չորեքգրամեանների վրայ անփոփոխ։

Բ. երեսին Վահագնի փոխարէն Արամազդը նստած է գահին, աջ ձեռին բազէ, ձախը յենած է աստային։ Գլուխը բաց, մերկ մարմնով, կիսից վայր մի թափանցիկ շղարշի մէջ է փաթաթուած, սրունքներն ու ազդրները երևում են շղարշի միջից։ Ձախ կողմը պատկեր 1. նկար թիւ 24—ΑΡΤΣ. Արտաշատ մենագիրը, առանց թուականի։

—

Պատ թիւ 43

Պատ. թիւ 44

Վաղարշակ

7. Դրամ. Միևնոյն դրամը և երկու կողմը միևնոյն պատկերը, միայն մենագիրը գահոյքի տակն է, պատ. թիւ 1., նկար 24 մենագիրը։

8. Դրամ. Միևնոյն դրամը, միայն մենագիրը ձախ կողքին, իսկ աթոռի տակ ΓΟΡ=173. (140 Ք. ծ. ա.)։

—

9. Դրամ. Միևնոյն դրամը, միայն առանց մենագրի և գահի տակ ΔΟΡ=164 թ.։

10.) Դրամ. Վաղարշակի արծաթ դրամների մէջ մի տիպ կայ, որը անսովոր է նրա դրամներին։ Ա. երեսը Վաղարշակի պատկերն է ճիշտ այնպէս, ինչպէս տեսանք նախորդ չորեքգրամների և դրամների վրայ։

Բ. երեսը նստած է Արշակ Մեծ Պարթևը ճիշտ այն դրու-

թեամբ, ինչպէս որ նկատելի է սովորական դրամների վրայ։ Արշակը նստած է պորտաքարի, հագնուած և զինուած է պարթևական տարազով աղեղնաւոր, երեսը դէպի աջ։

Այս դրամի արձանագրութիւնն է. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ. Ոչ թիւ ունի, ո՛չ էլ մենագիր։

11.) Դրամ. Երկրորդ օրինակի տարբերութիւնը նախորդից այն է, որ գրութիւնը երեքի է բաժանուած, Արշակի ետևը ΒΑΣΙΛΕΩΣ, գլխին ΜΕΓΑΛΟΥ և առաջը ΑΡΣΑΚΟΥ.

—

Այս երկու դրամները գալիս են հաստատելու դրամագէտների կարծիքները։ Վաղարշակն անշուշտ այս դրամները կտրել է տուած ճանապարհին, Հայաստան հասնելուց առաջ, ինչպէս սովորութիւն էր պարսիկների մէջ զօրքին վարձատրելու համար բանակում դրամ կտրել, և կամ Հայաստան հասնելիս անմիջապէս դրոշմուած են։ Բայց երբ նա հաստատուեց երկրում, իր անկախութիւնը ձեռք բերեց, այլ ևս Արտաշատի փողերանոցի վարպետները դուրս վանեցին պարթևական նկարները Հայկական դրամներից։ Մանաւանդ որ պարթևները չըկարողացան երկար ժամանակ իրենց ձեռքը պահել Հայաստանը և Վաղարշակը հիմնեց անկախ միացեալ թագաւորութիւն Մեծ և Փոքր Արմենիայի։

—

12.) Դրամ. Ս. Պետերբուրգի Էրմիտաժի միւզէի վարչի Марковъ-ի 1892 թ. հրատարակած Պրոկէշ Օստէնի դրամների յաւելուածի մէջ կայ մի արծաթ դրամ, յար և նման վերջին երկու դրամին, որոնց վրայ կայ պատկեր թիւ 2—նկար 32, որը կարելի է կարդալ. ΘΕΥ—Աստուծոյ։

Պատ. թիւ 45

Արշակունի հիմնադիր Արշակի և որդու Տրդատ Ա.ի դրամների վրայ նկատելի է այս տիտղոսը, թէու (աստուծոյ, կամ — թէոս։ Արշակունիները այս անունով, որպէս Աստուածային յայտնութիւն, անմիջական հնազանդութիւն պահանջեցին բոլոր պարսիկներից և այդպիսի դիրք ձեռք բերելով, ժողովրդին այնպիսի հլու հպատակութիւնը վաստակեցին, որ ազատեցին Արիների աշխարհը Սելևկեանների լծից, որի տակ ճնշուած էր ամբողջ Պարսկաստանը։

13.) Դրամ. Պրոկէշ Օստէնի Արշակունի դրամների շարքին կայ մի ուրիշ դրամ, որը նման է բոլորովին նախորդներին, միայն

ունի պատ. 2, նկար 33 մենագիրը, որը կարելի է կարդալ. ΘΕΥ Աստուծոյ։ Միևնոյն ձևն է, ինչ որ էր նախորդ դրամի վրայ, քիչ փոխուած, որը կատարուում էր միշտ քանդակագործների ձեռքով, քանի որ նրանք չէին սիրում միօրինակութիւն։ Վաղարշակը արևելքից որպէս աստուածային յայտնութիւն է գալիս դէպի արևմուտք, որպէս զի անմիջապէս հպատակեցնէ հայերին և յաջողացնում է շատ մեծ հմտութեամբ։

Պատ. թիւ 46

Պատ. թիւ 47

Վաղարշակ

14.) *Լումայ* (obole). արծաթ. Վաղարշակի դրամների շարքին կան արծաթ լումաներ (մի վեցերորդ դրամ), որոնց Ա. երեսին շատ գեղեցիկ կերպով կարելի է տեսնել թագաւորի պատկերը, երիզաւոր շրջանակով։ Պատկերը այն է, ինչ որ նկարագրեցինք չորեքդրամի վրայ։

Բ Երեսին. Մի գլուխ, վեղարաձև գտակով, որի միջից երևում է մի ընչացքով, մօրուսով դէմք։ Այս գլուխը կարելի է նմանեցնել Միհրդատ Մեծին, կամ մի ուրիշին, ինչպէս ենթադրում է Wroth-ը։ Բայց հետաքրքրականն այն է, որ վեղարը կարելի է նմանեցնել Զարեհի, Մորփիւղիկէսի, Քսերքսէսի խոյրերին։ Իսկ վզկալն ու ականջկալը շարունակւում է Տիգրան Մեծի և յաջորդների թագերին կցուած վզկալ-ականջկալներով։

—

Պղնձի դրամներ

—

15.) *Չորեքփող*. Վաղարշակի պղինձների մէջ աւելի գեղեցիկ պատկերներ կան, քան թէ արծաթների վրայ։ Քանդակագործութեան կատարելատիպեր կան այս պղինձների մէջ, այնպէս որ կարող են ընդօրինակութեամբ հրաշալի օրինակ դառնալ։

Ա. Երեսի վրայ Վաղարշակի պատկերը գրեթէ նոյն ձևով է, ինչ որ տեսանք չորեքդրամների վրայ։

Բ. Երեսին. Երկու ձիաւորներ, դիոսկուրնեա (քոլոզաուոր) գտակներով սրարշաւ գնում են դէպի աջ։ Ձիերի առաջի ոտքերը օդի մէջ են և կարծես թռչում են, ձիաւորները կպած են և սլանում։ Ձիաւորների գլխին ΒΑΣΙΛΕΩΣ և տակը ΑΡΣΑΚΟΥ։

Պատ. թիւ 48

Վաղարշակ

16 *Չորեքփող* Ա. երեսի պատկերը նման է նախորդը դրամին։

Բ. Երեսին. փիղ, կնճիթը մեկնած, գեղեցիկ քանդակագործութեամբ, որը յիշեցնում է Սելևկ. Անտիոքոս մեծի չորեք դրամների վրայ քանդակւած փղերին։ Փղի գլխին ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ և տակը ΑΡΣΑΚΟΥ։

—

Պատ. թիւ 49

Վաղարշակ

17 *Երեքփող* Ա. երեսը նման է նախորդներին, նոյն շրջանակով։

Բ. Երեսին բաղդը զոյգ ձի կառքով գնում է դէպի աջ։ Սքան-

չելի քանդակագործութիւն, բայց ցաւալի է որ երեքփողը մաշած է և հազիւ նշմարւում է պատկերը։ Ճակատին արձանագրւած է ΒΑΣΙΛΕΩΣ և տակը ΑΡΣΑΚΟΥ։

—

Պատ. թիւ 50

18. Երկփող Ա. երեսը նախորդ դրամների տիպն է անփոփոխ։

Բ. Երեսին. Ձիու գլուխ, դէպի աջ, սանձած։ Արձանագրութիւնն է. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΑΛΟΥ։

19 Երկփող Ա. Երեսը Վաղարշակի պատկերը նոյն դիրքով ինչպէս տեսանք նախորդ դրամների երեսներին։

Բ. Երեսին խաղողի ողկոյզ, նման Տրիբազի ողկոյզաւոր դրամներին, որոնք տեսանք երես 222։ Այս դրամը կապում է Արտաշատի փողերանոցի քանդակակագործութիւնը 250 տարի առաջ կարւած այն դրամների հետ, որոնք մենք վերագրեցինք Փոքր-Հայքին։ Եթէ խաղողի ողկոյզից կազմած խորհրդանիշը վաղուցեան սովորութիւն չը լինէր, հազիւ թէ մենք Վաղարշակ Արշակունի թագաւորի դրամի վրայ տեսնէինք այս ողկոյզը։

Պատ. թիւ 51

Պարթեական, Սելևկեան թագաւորներից և ոչ մէկի դրամի վրայ չի գտնւում խաղողի ողկոյզի նշանը, քանի որ նրանցից ոչ մէկը չէր կարող պարծել այնպիսի խաղողով, ինչպիսին ունէր, թէ Մուրադի ափերը Ծոփի երկիրը, Փոքր-Արմենիա և թէ մանաւանդ Արաքսի ափերը, որոնք յայտնի էին ոչ միայն Հերոդոտի, Քսէնոփոնի և Սարաբոնի ժամանակներից, այլ նրանցից էլ հազար տարի առաջ։ Այս պարագաներն են, որ մեզ ստիպեցին ենթադրելու, թէ Սօլիին նուիրուած դրամները ոչ թէ

Պոմպէյապոլիս-Սոլին պիտի վերագրել, այլ Եփրատի ափերում պիտի որոնել նրա տեղը։ Արձանագիրն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ թագաւորի Մեծի Արշակի։

—

20 Փող Ա. Երեսը նման է նախորդներին և բաւականին լաւ պահւած։

Բ. Երեսը Մեղու, որը նոյնպէս երկրի բերքի արտայայտութեան խորհրդանիշն է։

Հայաստանի մեղրի առասպելական նկարագիրը (Հերոդոտ, Ստրաբոն) պիտի ստիպէր փողերանոցի քանդակագործներին մեղուն ևս մտցնել դրամահատական խորհրդանիշների շարքը։ Արձանագիրն ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ։

21. Փող Ա. երեսը նախնթաց դրամների նման։

Բ. Երեսը Մի թագաւորի գլուխ, մօրուսաւոր և վեղարաձև խոյրով։ Արձանագրութիւնը միևնոյնն է։

—

22 Փող. Աղ. Պետրովիչն ունի մի լումայ, Ա. երեսը նման է նախընթաց պղնձներին։

Բ. երեսին փղի գլուխը վերցուած ժանիքներով և կնճիթով։ Արձանագրութիւնը միևնոյնն է։

—

23 Փող. Միևնոյն դրամը և արձանագրութիւնը երկու երեսին, միայն խորհրդանիշն է փղի ժանիք։

—

Պատ. թիւ 52

Պատ. թիւ 53

24. փող Ա. Պետրովիչի մօտ կայ մի լումայ, որի առաջին երեսը յար և նման է մեր թիւ 21 դրամին։

Բ. Երեսը նոյնպէս նման է այդ դրամին միայն մի մեծագիր ունի, որը չի կարդացւած մի չև օրս։ տես պատկեր թիւ 2 նկ. 34

25. փող. Իմ ժողովածուի պղնձների մէջ կայ մի փող Ա. երեսը նման է նախորդներին. լաւ պահւած է։

Բ. երեսին փիղը գնում է դէպի աջ, որի վերին մասում

կամարաձև գրուած է ΒΑΣΙΛΕΟΣ ΜΕΓΑΛΟΥ և ոտքի տակ ΑΡ-ΣΑΚΟΥ և մի մենագիր որ անվերծանելի է։ Տես տախտակ 2, պատկեր թիւ 35։

—

26.) Փող. Դարձեալ իմ ժողովածուից, որի Ա. երեսը նման է նախորդներին։

Բ. Երեսին. Ցաղթութիւնը ձեռքին պսակ, գնում է դէպի աջ։ Շատ մաշուած է և տառերը չեն նշմարւում։

ԱՐՇԱԿ Ա.

1.) Չորեքդրամ. Արշակի դրամներն այնքան բազմազան չեն, ինչպէս էին Վաղարշակի դրամները։ Բայց գեղարուեստական տեսակէտով նրանից յետ չեն մնալ։

Պատ. թիւ 54

Արշակ Փրիապատ պարսկ. Արշակ

Արշակի ա. չորեքդրամեան Ա. Երեսին նրա անդրին նոյն ձևն ունի, ինչ որ նկարագրեցինք Վաղարշակ Ա.-ի առթիւ։ Աջադէմ, բոլորակ սանրուած մազերով, եռաշերտ երիզով, որոնց ծայրերը ապառօշանման վայր են ձգուած, թիկունքին, քառաշար մանեակ, որի ծայրին նկատելի է ձիու գլուխը։ Մօրուն ու ընչացքը հօրը տիպարի ձևն ունի, բայց աւելի երիտասարդ։ Թիկնոցի օձիքի և ուսերի զարդերը նման են Միհրդատ Մեծի թիկնոցին։ Ականջին օղ է նշմարւում, որ հազուադէպ է Հայկական դրամների վրայ։ Շրջանակը երիզաձև և զոյգ գնդիկներով ընդհատուած։

Բ. Երեսին. Ոսկիամայրը նստած աթոռի, աջ ձեռքին ունի յաղթութեան հրեշտակը, որ պսակում է Ոսկիամօր գլուխը, ձախով բռնած է առատութեան եղջիւրը։ Ոսկիամայրը հագուած է բէհէղի կտորներ, որի ծալքերը ցրուած են աթոռի շուրջը։ Գահի ոտքերի զարդերն են յուշկապարիկներ, որոնք բռնած են Ոսկիամօր աթոռը իրենց գլխի վրայ։ Ոսկիամօր աջ թևին տակ արձանագրուած է ΘΕ, որն անշուշտ Վաղարշակի և Տիգրան Մեծի դրամների ΘΕΥ կամ ΘΕΟΦΙΛΟΣ—Թէոփիլոս (աստուածասէրն բառն է։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ։

Ոսկիամօր աթոռի յատակը կայ ΗΠΡ—187 Սելևկեան թուականը, իսկ Արշակի արձանագրութեան մօտ, ձախ կողմը մենագիր պատկեր թիւ 1, նկար 16։

Մենագիրը ցոյց է տալիս, որ փողերանոցում քանդակագործներու միտքը չէր դադարել գործելուց, ամեն արքայի և ամեն դրամի համար նորանոր մենագրեր և նորանոր կաղապարներ էին պատրաստում։ Այս մենագիրը անդամահատել կարելի է հետևեալ ΑΡΤΞ կամ ΑΡΤΣ տառերով, որոնք դարձեալ Արտաշատն են յիշեցնում։

Պատ. թիւ 55 Պատ. թիւ 55

Արշակ

Այս չորեքդրամը Ա. Պետրովիչին է, որ պատկերը ներկայացրել ենք վերևը։

—

2.) Չորեքդրամ. Միևնոյն չորեքդրամեանի մի ուրիշ օրինակը կայ Բրիտանական թանգարանում, երկու կողմն էլ հաւասարապէս, առանց որևէ տարբերութեան, միայն թէ ΘΕ մենագիրը չունի։

3.) *Զորեքդրամ.* Միենոյն չորեքդրամեանի մի ուրիշ օրինակը կայ Բերլինի թանգարանում, միանման երկու երեսով վերևը նշանակուած դրամներին, որի տարբերութիւնը մի միայն երկու մենագիրն է, տես պատկեր թիւ 1, նկար 13 և 17, որոնք անդամահատելով, կարելի է կարդալ ΑΡΤ և ΑΡΤΣ տառերը, որ պարզ Արտաշատն է ծածկագրով։ Տարբերութիւն չունի։

—

Պղինձ

4.) *Փող. Ա. Երեսին,* Արշակի անդրին նման է, վերևի չորեքդրամին։

Բ. Երեսին. Սաղաւարտ, լախտ, վահան, այն զէնքերը, որոնցով զարդարուում էր ռազմիկը յաղթանակելու գնալիս։ Արձագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ։

Ա. Պետրովիչի ժողովածուին է պատկանում։

ԱՐՏԱՇԷՍ Ա.

1.) *Զորեքդրամ.* Բրիտանական մուզէյի Արշակունի դրամները, W. Wroth-ի հրատարակութեան տախտակ V—թիւ 9—10 դրամները, որը վերագրել է պարսկական Հրահատ բ. կնոջն Հիմերուային։ Բայց այդ դրամները բնաւ առնչութիւն չունին Հրա-

Պատ. թիւ 56

Արտաշէս

հատ Բ.-ի շրջանի հետ, այնպէս որ դրանք պարզապէս պիտի վերագրել Արտաշէս Ա. Թագաւորին։ Այս եզրակացութիւնը Ա. Պետրովիչինն է, բայց նկարների զննութեամբ կարելի է հասնել այն եզրակացութեան, որ նրանք Արտաշատի փողերանոցի քանդակիչների գործերի շարունակութիւններն են կազմում։

Ա. Երեսը. Արտաշէսի պատկերը, առանց ընչացքի, շատ թեթև մօրուսով, քառաշար մանեակով, երիտասարդ հասակով, մազերի սանրուածքը Վաղարշակի և Արտաշէսի դրամների նման։ Շրջանակը նախորդ դրամներից տարբերութիւն չունի։

Բ. Երեսը. Ոսկիամայրը նստած է աթոռի, որին իրենց գլխին են պահում յուշկապարիկները, բէհէզի շորեր, որոնք իրենց ծալքերով զարդարում են սրունքներն ու աթոռը։ Աջում յաղթականը որ պակում է Ոսկիամօր գլուխը, ձախում առատութեան եղջիւրը։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ աջ կողմը և ΕΠΙΦΑΝΟΥΣ ΦΙΑΕΛΛΑΝΟΥΣ ձախ կողմը։

Մենագիրն է ΤΥ և տես պատկեր թիւ 2, նկար թիւ 36։ Այս մենագիրը կարելի է անդամահատել և ստանալ հետևեալ տառերը. ΑΡΤΣ Արտաշատ։ ΤΥ—Տիւր. գուցէ դիցամօր Տիւրի անունն է։

Պատ. թիւ 57

Արտաշէս Ա.

2.) *Զորեքդրամ.* Բերլինի թանգարանում կայ մի չորեքդրամեան, որի *Ա. Երեսի* պատկերը անչափ նման է վերևի նկարագրուած չորեքդրամին, քիչ աւելի տարիքով, ածելած ընչացքով և կզակով, փոքր մօրուս ականջակողմերին։ Գլխի սանրուածքը, ապառօշը, շրջանակը և ձևը տարբերութիւն չունին նախորդից։

Բ. Երեսին. Պորտաքարի վրայ նստած է Ապօլոնը, մերկամարմին, աղեղ նետը գետին է յենած ձախ ձեռքով, իսկ աջում բռնած է մատիտ, որը դրուած է Արշակի անուան տառերի մէջ։ Արձանագիրն է ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ *Թագաւորին Արշակի։* Ձախ կողմն ունի մենագիր պատկեր թիւ 2, նկար. 32 որն անդամահատելով կարելի է գտնել—ΑΡΤΣ և ΘΕ որոնք հնարաւոր է միայն Արտաշատ և Թէոս կարդալ, որով այս դրամն էլ կապւում է Վաղարշակ ա. և Տիգրան Մեծի դրամների հետ։

Այս դրամը Wroth-ը համարում է Պարթև Պարս. Հրահատ բ-ին, բայց ոչ միայն ընդհանուր գծերը, այլ արձանագրութիւ-

նը, մենագիրը, ընչացքի և կղակամօրուսի բացակայութիւնը լիովին հակառակ է Հրահատի դրամներին։ Մանաւանդ որ վերջին հետազօտութիւններով դրականապէս հաստատուած են Հրահատ Բ.-ի դրամները, որոնց ոչ մի նմանութիւն չունի այս դրամը։ Այս դրամի վրայ կայ երկրորդ մենագիր, կամ երկու տառ, որոնք Wroth-ը համարում է BA կամ BΔ. գուցէ Βαβιλεως Αρμενως թագաւոր հայոց։

3.) Դրամ. Բրիտ. թանգ. պարթ. դրամների շարքին է դասել Wroth-ը այս թագաւորին վերաբերեալ մի դրամ, որի պատկերը նոյնն է, ինչ որ թիւ 1, վերևը նկարագրած չորեքդրամեանը։

Ա. Երեսին. Անդրին է Արտաշէսի ամբողջ կազմով և տիպարով նման չորեքդրամին, առանց որևէ փոփոխութեան։

Բ. Երեսին. Անահիտի պատկերն է ամբողջ հասակով կանգնած, երեսը դէպի ձախ, վերնազգեստով, գօտին մէջքին ամրացրած և մինչև ոտքերը ծածկուած քղանցքով, որի ծալքերն անգամ սքանչելի քանդակագործութեամբ դուրս է բերուած։ Անահիտի աջ ձեռքին մի պսակ որը ΑΡΣΑΚΟΥ / ΝΙ ΚΗΦΟΡΟ բառի միջոցից դուրս է անցել, իսկ ձախում արմաւենու մի մեծ ճիւղ, որի ծայրը ծածկում է արձանագրութեան բառերը, (թագաւորի, մեծի, Արշակի և Յաղթողի)։

Այս դրամի վրայի Անահիտի և Զարեհի դրամի Անահիտի պատկերների մէջ մեծ համանմանութիւն կայ, որով ոչ միայն այս պատկերը անկասկած կարելի է Անահիտին համարել, այլ այս դրամով Նախարշակունի թագաւորների դրամները կապել վերջինների հետ։

Դրամի տակ գտնուած մենագիրը, որ թէ Wroth-ը և Պետրովիչը պատկեր թիւ 1, նկար 18 են համարում, մենք կարծում ենք, որ մասամբ երկուսն էլ սխալւում են, այլ մենագիրը ինչպէս ցոյց է տալիս բնագիրը, պատկեր թիւ 2, նկար 34, որը Արտաքսատի անունն է։

Դրամի վրայ կայ մի ուրիշ մենագիր, կամ տառ—ձախ կողմը, Ξ տես պատկեր թիւ 2, նկար. 36։

—

4. Դրամ. Մի ուրիշ բոլորովին նման օրինակը կայ սոյն դրամի Բերլինի թանգարանում։ Պրոկէշ Օստէնը ΠΘΡ=189 Սել. թուականն է կարդում, որը համապատասխանում է 123 Ք. ծ. առ. թուականին։ Այդ թուականին թագաւորում էր Արտաշէսը։

—

5.) Դրամ. Մի ուրիշ դրամ ունի Պետրովիչը, որը շատ նման է այս դրամներին, միայն ոչ երկրորդ պատկերի թիւ 2, նկար 36 մենագիրն ունի և ոչ էլ թուական։

—

Պղինձ

6.) Փող. Ա. Պետրովիչի գրքի մէջ երևում է մի պղինձ, որը Ա. Երեսին ունի Արտաշէս Ա.-ի դէմքը, նման նախորդներին։

Բ. Երեսին. Մի փիղ դէպի ձախ գնալիս։ Այնքան մաշուած է, որ ոչ միայն տառերը չեն երևում, այլ փղի պատկերն էլ շատ խաւար է։

—

ԱՐՏԱՒԱԶԴ

Չորեքդրամ. Արտաշէսի մահից յետոյ գահակալական խռովութիւններ է առաջ գալիս, ուր Տիգրան Մեծը վինու ոյժով ընկճում է Յուստինոսի ակնարկած Արտաւազդ թագաւորին։ Այս Արտաւազդի անուան մի չորեքդրամ կայ Բրիտ. թանգ. Արշակունի դրամների շարքին, Wroth-ի հրատարակութեան (երես 10 թիւ 29, տախտակ Ш, թիւ 1.) մէջ։

Պատ. թիւ 58

Արտաւազդ.

Այս դրամը վերագրում են դրամագիտական աշխարհում Արտաւազդին, որը թէև կարճատև թագաւորեց, բայց իր պատկերն անմահացուց սոյն դրամով։

Ա. Երեսին. Արտաւազդի պատկերը կարճ ճակատով, բոլորշի սանրած մազերով, որի մի մասը ծածկում է վզկալի նման ծոծրակը, երկար մօրուսը և ընչացքը, եռաշար երիզաւոր վարսակալը և ծայրերը ապաոշաձև կախուածքը բոլորովին տարբերւում

է Արշակունի նախորդների դրամներից։ Շրջանակը երիզաձև գըլանակ—գնդիկներն են, որոնք հաղիւ նշմարւում են։

Բ. Երեսին. Ոսկիամայրն է բազմած աթոռի, ճիշտ Արշակ Ա.-ի դրամի նման, աջին յաղթանակը, որ գլուխն է պսակում, ձախում առատութեան եղջիւրը։ Աթոռի տակ յուշկապարիկներ, որ կրում են նստարանը։

Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ թագաւորին Արշակի։ Ամիսոս, անչափ մաշուած է, տառեր, մենագիր, գուցէ թուականը բոլորն էլ սրբուել են։

Այս Արտաւազդին ընկճելու համար ժամանակակից Միհրդատ Բ Պարթև Արշակունի թագաւորն օգնել է Տիգրան Մեծին։

ՅԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ

ԱՐՏԱՒԱԶԴ Ա.

56—30 տարի Քս. ծ. առաջ

Մեծն-Տիգրանին յաջորդում է Արտաւազդ Ա. որը պատերազմում է ինչպէս Պարթևական Միհրդատ Դ. և Որոտի հետ, նոյնպէս Հռոմայեցի Կրասոս և Անտոնիոս կոնսուլների հետ. վերջինս նըրան բռնեց, շղթայեց և Փոքր-Հայքը տուեց Պոնտոսի թագաւոր Պոլեմոն Ա.-ին։

Պատ. թիւ 61

Արտաւազդ

1. Դրամ. Արտաւազդ առաջինի այս դրամը շատ հազւադէպ է և գտնւում է ընդամենը 4—5 օրինակ։ Ա. երեսին ունի Արտաւազդի պատկերը, որի անդրին նկարուած է աջադէմ մինչև կուրծքը։ Հօրը նման ածիլուած է, գլխին Տիգրանեան թաղ ունի, միայն առանց ականջկալի, որին փոխարինում է լայն վզկալը և ապառաջը։ Վզին մանեակ ունի, ծիրանին շրջապատած է ուսերը։ Դրամի շրջապատը մարգարտաշար է։

Բ. երեսին թագաւորը քառաձի կառքով սրարշաւ գնում է դէպի ձախ, աջում յաղթականը բռնած։ Արձանագրութիւնն է վերևը ΒΑΣΙΛΕΩΣ (թագաւորին) կառքի տակը ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ — թագաւորների Արտաւազդի։ Ձախ կողմը կայ պատկեր թիւ 2 մենագիր 28 — միայն երկուսի փոխարէն երեք շարք գծով, իսկ ձիերի գլխի Ι.-Ծ տառը, որը հաւանական է Ծոփի դրամատան նշանն է։ Վերոյիշեալ մենագիրը նախ-Աղէքսանդրեան շրջանի Մազայոսին վերագրուած դրամների վրայ ևս նկատուած, բայց չի բացատրուած։ Թւում է թէ կապ ունեն իրար հետ։

Պատ. թիւ 62

Արտաւազդ

2. *Երկփող.* Փարիզի ազգային թանգարանում կայ մի պըղինձ, որը նկարագրել է E. Babelen-ը. *Ա. երեսին* Արտաւազդի անդրին, հայկական թագով և արքայական ապառոշով դէպի աջ։ Անդրու եռևը նշմարւում է A տառը, որը ցոյց է տալիս դրամահատական քաղաքը—ΑΡΤΑΣΑΤ։ (?)։

Բ. երեսին. Յաղթականը գնում է դէպի ձախ, աջում պըսակ բռնած։ Առաջը ΒΑΣΙΛΕΩΣ և եռևը ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΟΥ.

Այս երկու դրամներն ապացոյց են այն վէճին, որով Արտաւազդը տքնում էր Միհրդատ Գ.-ի և Որոտ Ա.-ի դէմ Թագաւորների Թագաւոր տիտղոսի համար, որոնք սեփականել էին պարս. պարթևները և իրենց դրամների վրայ արձանագրել։

—

ՏԻԳՐԱՆ Բ.

3. *Երկփող.* Տիգրան Բ. Արտաւազդ Ա. որդին էր, որին հայերը Օգոստոս կայսրից խնդրեցին Արտաշէս Բ. իր եղբօրից յետոյ։ Արտաւազդի կալանաւորումից և տարագրութիւնից յետոյ Հայաստանը կառավարում է Արտաւազդի աւագ որդին Արտաշէսը։ Բայց վերջինից դրամ չունենք և նրան հեռացնելու պատճառներն էլ անորոշ են։

Պատ. թիւ 63

Տիգրան Բ.

Երկփող Ա. երես. Միակ երկփողը այս թագաւորի նկարագրած է E. Babelon-ից, որը Փարիզի Ազգ. Թանգ. սեփականութիւնն է կազմում։ *Ա. երես.* Թագաւորը Տիգրանեան թագով, աջադէմ, վզկալով, ականջկալով և ապառոշով, մօրուսաւոր։ *Բ. երեսը.* Ոսկեամայրը նստած է դէպի ձախ, գահի վրայ, աջում սկիհ ունի, ձախում առատութեան եղջիւր։ Այս նկարի վրայի քանդակները տքնել են Տիգրան Մեծի դրամներին նմանացնել. տես 21 հատոր «Ազգագրական Հանդէս»-ի, երես 121, պատկեր թիւ 18։

—

ԱՐՏԱՒԱԶԴ Բ.

5. *Դրամ.* Օգոստոս կայսեր հետ տպագրուած մի դրամեայ բրիտանական թանգարանում, որը վերագրում են Արտաւազդ Բ.-ին։

Պատ. թիւ 64



Արտաւազդ Բ.

Այս դրամի Ա. երեսը Արտաւազդի և միւս կողմը Օգոստոսի պատկերն է, երկուսն էլ բաց գլխով և ածելուած։ Այս դրամը Արտաւազդ Ա. Թոռի, Արտաշէսի որդու Արտաւազդ Բ.-ին կարելի է վերագրել, որը Օգոստոս կայսեր կողմից Հայաստանի վրայ թագաւոր էր նշանակուած։ Թէև կան օտար պատմիչներ, որոնց հետևելով և Babelon-ը կարծում է թէ սա Մարական Արիոբարզանի որդի Արտաւազդինն է, որը Արևելեան-Հայաստանի թագաւոր էր, բայց նրանք շփոթում են։

Ա. Երես. Արտաւազդի պատկերը, բաց գլխով, մազերի վրայ կրում է վարսակալ, որի ծայրերը ապառոշի նման եռևը հանգուստուած և կախուած են։ Աջադէմ է անդրին, ածիլուած, վիզը զարդ չունի։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΤΑΒΑΖΔΟΥ—*Թագաւորին մեծի Արտաւազդի։* Դրամի վրայ Γ—Գ. տառը դրոշմած է, որ չի բացատրուած։

Բ. երես. Օգոստոս կայսեր պատկերն է, բաց գլխով, պըսակ վարսակալով աջադէմ։ Արձանագրութիւնն է. ΘΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ. Աստուծոյ կայսեր բարերարին։ Այս դրամը կարուած է մօտաւորապէս Քս. ծ. առաջին տարին։

—

ՏԻԳՐԱՆ Գ.

4. *Երկփող.* Ա. երես Տիգրան Գ.-ի դրամը ձախադէմ, ա հմական թագով, ապառոշով և մարգարտաշար շրջանակով։ Բ. ե-

Պատ. թիւ 65

Տիգրան Գ.

Արձանագիրն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ *թագաւորին մեծի* ΤΙΓΡΑΝΟΥ *Տիգրանի (Գ.)*

րես. Յաղթականը առաջ է գնում դէպի աջ, ձեռքին արմաւենի։ Երկու մենագրերն անընթեռնելի են։

5. Երկփող Ա. երեսը. անփոփոխ է։

Բ. երեսը. Մի հսկայ դէպի աջ կանգնած է, երկարայուն քօլողը գլխին, մի կարճ պատմուճան հագին, ձախով նիզակին յառած, աջով որսական բազէն ձեռքին։

Պատ. թիւ 66

Արձանագիրն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ թագաւորին մեծի

ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕΝΗΝΟ Տիգրանի (Գ.) Յունասիրի

Տիգրան Գ.

6. Մի փող Ա. երես Տիգրան Գ-ի գլուխը թագով, աջադէմ, ապառաջով։ Բ երեսին, մերկ ձին դաշտում ուղղած է դէպի ձախ, սրընթաց քայլերով ոտքից մէկը գետնից բարձրացրած։

Պատ. թիւ 67

ΒΑΣΙΛΕΟΣ ΜΕΓΑΛΟΥ թագաւորի մեծի

ΤΙΓΡΑΝΟΥ Տիգրանի (Գ.)

Տիգրան Գ.

—

ՏԻԳՐԱՆ Գ. ԵՒ ԵՐԱՏՈՎ ԹԱԳՈՒՀԻ

Տիգրան Գ-ի մի դրամը կայ Փարիզի Ազգային գրադարանում, որի Ա. երեսին Տիգրան Գ-ի պատկերն է թագով, ապառաջով, մանեակով և ծիրանու ուսնոցներով։ Արձանագրութիւնն է ΒΑΣΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΗΣ.—թագաւորին թագաւորների Տիգրանի (Գ.)

Պատ. թիւ 68

ΕΡΑΤΟ ΒΑΣΙΛΕΩΣ

Երատոյ թագուհի

Տիգրան Գ. Երատով

Բ. երեսին. Երատով թագուհու գլուխը, ձախադէմ, մազերը ամփոփած գլխի վրայ։ Արձանագրութիւնն է ΑΔΕΛΦΗ.

—

ՎՈՆՈՆ (16 թ.)

Որովհետև Պարթև-պարսկական Վոնոն թագաւորը Հայաստան ապաստանելուց յետոյ, Հայաստանում մի առ ժամանակ թագաւորեց, մինչև Հռոմայեցիք հեռացրին նրան երկրից, ուստի

Պատ. թիւ. 69

Վոնոն

Վոնոնի դրամներից մէկի պատկերը—որպէս Հայոց թագաւորի պատկեր—կցում ենք այս ցուցակին։

Ա. երես. Զորեքդրամ ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΟΝΩΝΗΣ, թագաւորի անդրին պսակաւոր։

—

Բ. երես. ΒΑΣΙΛΕΥΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΕΥΕΡΓΕΤΟΥ ΔΙΚΑΙΟΥ ΕΠΙΦΑΝΟΥΣ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ. Յաղթականը պսակը ձեռքին դէպ ձախ ուղղուած։ Թուականն է ΓΚΤ—323. Սելևկեան։

—

ԱՐՏԱՇԷՍ—ԶԵՆՈՆ—ՊՈՆՏԱՑԻ

Գերմանակոսը Տիբեր կայսեր հրամանաւ Արտաշատում

Պատ. թիւ 70

Հայաստանի թագաւոր պսակեց Պոնտոսի Պոլեմոն թագաւորի որդուն Զենոնին—Արտաշէս անունով (Բ.)։ Սրա դրամի մասին ակնարկում է Գաթրճեանը Բ. հատորում Տիբերիոս կայսեր մի դրամը, որ Բ. երեսին յաղթականը գնդի վրայ, դափնեայ պսակ ձեռքին։

—

ՏՐԴԱՏ ԿԱՄ ՏԻՐԻԹ Ա.

Երբ խաղաղութեան դաշն կապեցին պարթևներն ու Հռոմայեցիները, Տրդատ գնաց Հռոմ Ներոնից թագաւոր պսակուեց,

58 թուականին, որի աղագաւ Ներոն կարել տուեց դրամը իր պատկերով, որի Բ. երեսին ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՒԱՃՈՒԱԾ. Յաղթականը աջ ձեռքին. արմաւենի պսակ։

Տրդատի որդի Արտաւազդի, Երուանդի, Աշխադարի Պարթամասիրի և Պարթամասպի անունով դրամ մինչև այժմ—83—140թ. —չեն նկատուած։

—

ԱՔԵՄԻՆԻԴ (Որդի Պարթամասպատի) 140—159 թ.

Սրա անունով մի դրամ կայ Անտոնիոս Օգոստոսի կարել տուած, 143 թ. որտեղ կայսրը պսակում է Աքեմենիդին Հայաստանի թագաւոր։

Ա. երեսին. Կայսեր անդրին և շրջապատը. Antonius Cos III Augustus. իսկ Բ. երեսը Rex Armeniis.

—

ՍՈՅԵՄՈՍ (159—169 որդի Աքեմենեայ)

Դրամ. Վերոս կայսրը գահին բազմած, զօրականները շրջապատած, որոց մէջն է Սոյեմոսը, որի գլխին Վերոսը դնում է հայկական թագը։

181—216 թ. Սանատրուկի, Վաղարշի, Արգարի և Տրդատ Բ-ի մասին ոչ մի դրամական յիշատակարան դեռ ևս չի գտնուած։

—

ԿՈՄՄԱԳԷՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

1. Ինչպէս յայտնի է պատմութիւնից, Հռոմէացիները արևմուտքից, պարթևները արևելքից, մանաւանդ ներքին իշխանութիւններն ու նախարարութիւնները այնպիսի ընթացք բռնեցին, որ Վաղարշակի միաւորած և Տիգրան Մեծի աշխարհակալած երկիրները բաժան բաժան եղան։ Տիգրան Մեծի օրով նոյնիսկ ոչ միայն Միջագետքը, Սուրիան, Փիւնիկէն, Հրէաստանը դուրս եկան Հայկական իշխանութիւնից, այլ Փոքր-Արմենիայում և նոյն իսկ Մեծ-Հայքի մասերում նորանոր թագաւորութիւններ հաստատեցին հռոմայեցիները, իրենց սկզբունքի համաձայն, «բաժանիր, որ տիրես», որպէսզի Հայկական այն հզօրութիւնը, որից սարսափում էր նոյնիսկ Կիկերոն հռետորը, ջախջախեն և իրենց առաջնորդման արգելքներն անհետացնեն։ Ինչպէս Արևելքից Արևմուտք արշաւողները իրենց զէնքի ոյժը փորձում էին Հայկական երկրներում, նոյնը կատարել են Արևմուտքից Մակեդոնացին, Հռոմայեցիները և ապա Բիւզանդացիները։

Այս նորահաստատ պետութիւններից մէկն էլ Կոմագենի

թագաւորներն էին, որոնց դրամները, ինչպէս մենք տեսանք, մեծն Տիգրանից առաջ նոյնը մենք գտնում ենք նրանից յետոյ։ Անտիոքոս Ա. Թէոսից՝ Կոմմագենի թագաւորից մօտ 70 տարի յետոյ, նոյն երկրի իշխան Անտիոքոս IV Եպիփանոսը կարել է տալիս իր անունով դրամներ։

Անտիոքոս Ա-ը Տիգրանի յաղթելուց յետոյ, դաշնակցում է Լուկուլլոսի և ապա Պոմպէոսի հետ, շարունակում է իշխել Սամուշատում, Կոմմագենի սահմանները դէպի Միջագետք, Ծոփք և Մալաթիա ընդարձակւած։ Թէև Հռոմայեցիները հանգիստ չեն թողնում նոյնիսկ իրենց դաշնակից Կոմմոգէնին։ Քս. ծ. 30 տարի առաջ այնտեղ իշխում է Միհրդատը, Անտիոքոսի որդին, Հռոմայեցիները իրենց ստացած հարկ-կաշառքների շնորհիւ վերցնում են և Միհրդատ Բ-ին, տեղը դնելով եղբօրը՝ Անտիոքոս Բ-ին։ Քս. ծ. 20 տարի առաջ, մենք հանդիպում ենք Միհրդատ Գ-ին և ապա Անտիոքոս Գ-ին Քս. ծ. 17 տարի յետոյ։ Այս չորս իշխաններից և ոչ մի դրամ մինչև օրս չի նկատուած։ Տիբեր կայսրը Կոմմագենը վերածեց մի Հռոմէական նահանգի, որը պրետորներով էր կառավարւում։

Կալիգուլլան ոչ միայն վերահաստատեց Կոմմագենի թագաւորութիւնը, յանձնեց Անտիոքոս Դ-ին, այլ նրա պետութիւնը ընդարձակեց աւելացնելով Կիլիկիան։ Անտիոքոսը իր զօրքերով օգնեց Ներոնի զօրավարներին պարթևական պատերազմում, որի համար ստացաւ Արևմտեան Հայաստանի մի մասը։ Բայց և այնպէս՝ Կոմմագենի թագաւորը երբէք նենգաւոր

Պատ. թիւ 71

Հռոմայեցիների վրայ վստահութիւն չունէր և ուզում էր վերականգնել Տիգրան Մեծի պետութիւնը պարթևների օգնութեամբ։ Այս պատճառով էլ Վեսպասիանոս կայսրը ջնջեց Կոմմագենի թագաւորութիւնը և կազմեց մի Հռոմէական նահանգ։

Զորերդրամ. Անտիոքոս Դ-ի գլուխը դէպի աջ, վարսակալով, որ ծայրերը ապառաջի նման իջնում են վզի վրայ։ Դէմքն ածիլուած է և դրամը մարգարտաշար շրջանակով։ Արձանագրու-

թիւնն է. ΒΑΣΙΛΕΥΣ. ΜΕ. ΑΝΤΙΟΧΟΣ. ΕΠΙ. *Թագաւորին մեծի Անտիոքի Եպիփանոսի։ Մեծի և Եպիպանոսի բառերը կրճատուած են։*

Բ. Երեսին կարիճ, վրան պսակ, դրամի շրջապատը մի ուրիշ պսակ ներսից և դրսից մարգարտի շարքով։ Արձանագրութիւնն է ΚΟΜΜΑΓΗΝΩΥ—*Կոմմագէնի։*

—

2. Միւնոյն դրամը առանց զանազանութեան երկու կողմն էլ, միայն Α—Ν *տառերով աւելի է արձանագրութիւնը։*

—

3. Երկփող. Անտիոքոսի անդրին միւնոյն ձևով, միւնոյն արձանագրութեամբ։

Պատ. թիւ 72 *Պատ. թիւ 73*

Բ. երեսին. Այծեղջիւր աջադէմ, որի թիկունքից երևում է մի աստղ և յատակին Սելևկեան խորհրդանշանը՝ խարիսխ։ Շրջապատը դափնեայ պսակ, ուրիշ պսակով կապուած ներքին և արտաքին մարգարտաշարով։

—

4. Երկփող. Անտիոքոսի անդրին նախորդների նման և արձանագրութեամբ։

Բ. երեսին. Երկու առատութեան եղջիւր իրար վրայ դարձրած։

—

Պատ. թիւ 74 *Պատ. թիւ 75*

5. Երկփող. Միւնոյնը, ինչ որ էր թիւ 1 դրամի վրայ։

Բ երեսին. Բացի Կոմմագէնը ևս արձանագրւած է ΛΑΚΑΝΑΤΩΝ *քաղաքի անունը ուր դրոշմուած է։*

6. Երկփող. Միւնոյնը, ինչ որ էր նախորդը և Բ. երեսին Լականատօնի փոխարէն ΣΕΒΑΣΤΗΝΩΝ *և կարիճի փոխարէն բաղդը մերկամարմին, դէպ ձախ ընթացքով։ Աջում գաւազան և ձախով մի արմաւենի։ Դրոշմուած է Սեբաստիա քաղաքում։*

7. Երկփող. Նախորդի նման, նոյն արձանագրութեամբ։ Մերկամարմին բաղդը ձախ թևին բռնած է մի քղամիդ։ Դրոշմուած է Սէբաստիա։

—

ԱՆՏԻՈՔՈՍ Դ. ԵՒ ԵՈՏԱՓԷ

8. Երկփող Ա. երեսին. Անտիոքոսի անդրին, բաց գլխով և վարսակալով։ Անորոշ մի բառ է արձանագրուած, որը Անտիոքոս Դ-ի անունն է, իսկ միւս տողին ΕΠΙΦΑΝΗΣ—*Եպիպանոզ։*

Պատ. թիւ 76

Բ. երեսին. Եոտափէ թագուհու վարսակալով գլուխը, որի տառերը մաշուած են։

9. Ա. երեսին երեքդրամ. Անտիոքոսի անդրին բաց գլխով։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ *թագաւորին մեծի։ Բ. երեսին. Եոտափէն նըստած է գահի, մերկամարմին, ազդերը և ոտքերը նուրբ բէհէզով պատած, դէպի ձախ դարձած, ձեռքին սկահ։ Մաշուած է փողը և արձանագրութիւնն է—*ΒΑΣΙΛΙΣΣΑ ΙΩΤΑΠΗ ΣΕΒΑΣΤΝΟΗΝ—*թագուհի Եոտափէ Սեբաստենոն։*

Պատ. թիւ 77

—

ԵՈՏԱՓԷ

Ա. երեսին երկփող. Եոտափէ թագուհու անդրին աջադէմ, գլուխը վարսակալով զարդարուած, մարգարտաշար շրջանակով։ Արձանագրութիւնն է. ΒΑΣΙΛΙΣΣΑ ΙΩΤΑΠΕ ΦΙΛΑΔΕΛΦΟΣ.

Բ. երեսին. Կարիճ շրջապատուած դափնեայ պսակով, որը

պատկուած է մի ուրիշ պատկով, ներսից շրջանակ և դրսից մարգարտաշար։ Արձանագրութիւնն է ΚΟΜΜΑΓΗΝΟΝ—Կոմմագենս։

—

Պատ. թիւ 78

11. Ա. երեսին երեփող։ Միհնոյնը, ինչոր էր նախորդի վրայ։

Պատ. թիւ 84

Պատ. թիւ 85

Բ երեսին. Կոմմագէնի փոխարէն ΛΑΚΑΝΑΤΩΝ—Լականատոն։

Պատ. թիւ 79

—

ԵՊԻՓԱՆՈՍ ԵՒ ԿԱԼԼԻՆԻԿՈՍ 72 թ.

12. Ա. երես, երկփող. Եպիփանոսի գլուխը վարսակալով աջադէմ և մարգարտաշար շրջանակով։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΕΠΙΦΑΝΗΣ. Թագաւորին մեծի Եպիփանոսի։

Բ երեսին. Կալլինիկոսի անդրին վարսակալով, աջադէմ։ Արձանագրութիւնն է—ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΚΑΛΛΙΝΙΚΟΣ, Թագաւորին մեծի Կալլինիկոսի։

Պատ. թիւ 80

Պատ. թիւ 81

13. Ա երեսին երկփող. Երկու մանուկ թագաւորները ձիաւորուած դէպի ձախ են գնում։ Մարգարտաշար շրջանակով։ Դրամն յիշեցնում է Շամէսի դրամները։ Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΥΙΟΙ...

. երեսին. Մի այծեղջիւր դէպի աջ ուղղուած, վերևը աստղը և տակը Սելևկեան խարիսխ խորհրդանշանը։ Արձանագրութիւնն է ΚΟΜΜΑΓΗΝΩΝ—Կոմմագէն։

14. Ա երես, երկփող. Մի խարիսխ երկու առատութեան եղջիւրների մէջ գետեղուած, որոնց միջից դուրս են եկած երկու մանուկ թագաւորների գլուխները։ Ներքևը երևում է մի աստղ։ Արձանագրութիւնն է ΒΑCΙΛΕΩC ΥΙΟΙ։ Թագաւորիներիցի։

Պատ. թիւ 82

Պատ. թիւ 83

Բ. երեսին. Արքայական թագը, որը մէջտեղը կարիճով է զարդարուած, շրջապատն դափնի պսակ, և մարգարտաշար։ Արձանագրութիւնն է ΚΟΜΜΑΓΗΝΩΝ—Կոմմագէնոն։

15. Ա. երես. Միհնոյն պատկերն ու արձանագրութիւնը։

Բ. երեսին. Նոյնպէս, միայն Կոմմագէնոնի փոխարէն—ΛΑΚΑΝΑΤΩΝ Լականատոն արձանագրութեամբ։

16. Ա. և Բ. Երեսները բոլորովին միանման 14 թ. միայն Կոմմագէնոնի փոխարէն ΛΥΚΑΟΝΩΝ—Լիկաոնոն արձանագրութեամբ։

ՀԱՅ ՀԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ա. ՂԼՏՃԵԱՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆՈՒՏԻՐՈՒԹԻՒՆԸ

§ 4.

ՏԱՆ ԵՒ ՏՈՒՆՈՒՏԵՂԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Հայկական ընտանիքի մասին մեր շարադրութիւնը հաստատեց որ կրակարանը (օճախ) մի տունուտեղի հիմնական ենթադրութիւնն է. այսինքն, ուր կրակատուն կայ՝ այնտեղ կայ և տուն ու տեղ. և ընդհակառակն, ուր տունուտեղ կայ, այնտեղ հաստատապէս ենթադրւում է կրակարան։ Այս հիմնական սկզբունքը իշխող է բոլոր արիական ազգերի ընտանեկան իրաւունքի մէջ, և ի մասնաւորի ընտանեկան կազմակերպութեան հիմն է կազմում։ Կրակարանի սրբացումն արիական ազգերի մէջ մէկից շատ աւելի պատճառներ ունի։ Նա գլխաւորագոյն պատճառն է, ըստ հին հասկացողութեան միշտ, ընտանիքի գոյութեան պահպանութեան, նա է կերակրում ամբողջ ընտանիքը. նա, օրինակ հայերի մօտ, շինւում է տան—հացատան—մէջ տեղը, ու նրա վրայ եփւում է օրական կերակուրը։ Այդ կերակուրը ինքնին զոհի մի մասն է, որ արւում է կրակարանին—ընտանիքի սուրբ սեղանին—և միևնոյն ժամանակ կրակարանի կողմից մի նուէր, մի ողորմութիւն է, որ արւում է ընտանիքի ֆիզիքական գոյութիւնն այս կեանքում պահպանելու համար։ Նա է նաև հիւրասիրութեան հիմը—նա կերակրում է ընտանիքի հիւրերին, թափառական անցորդներին, պաշտպանութեան կարիք ունեցող օտարականին և ընտանիքի շէմքը դիմող մուրացիկին։

Բոլոր արիական ազգերի իրաւունքի համաձայն, ինչպէս այդ ցոյց են տալիս հին հնդիկների մասին հնդկական օրէնսգրքերը օրինակ Manu-ի օրէնքները, ընտանիքի և ընտանեկան կազմակերպութեան գլխաւոր հիմը հարսանիքն է, ամուսնութիւնը։ Հայ-

քումն էլ լիովին հաւատացած են լինում, որ մարմնի այս մասը իշխանութիւն և միջոց կըտայ ինքս հասցնելու այդ մասի տիրոջ ամբողջ էութեան։ Առաջին իսկ խօսքերը, որով դիմում է ձեզ կախարդը՝ այն պահանջն է որ բերէք նրա զոհի մազերից կամ եղունգներից, և կամ հանդերձի մի կտորը, որ տոգորուած է այն հոտով, որ համարւում է նմանօրինակ նրա ոգուն, իսկ սրանից յառաջանում է այն՝ որ իւր ստրուկի առամը կամ մատի յօդը և կամ մինչև անգամ նրա մազերից մի ծամ պահող տէրը ամէն ժամանակ կարող է տանել դրանց կախարդին, ենթարկելու անհնազանդ ստրկին հիւանդութեան, չարչարանքի, մահի։ Եւ այս պատճառով էլ ստրուկը երկիւղից արտայայտում է հնազանդութիւն։

Այսպէս կարելի է բացատրել և այն հայկական սովորութիւնը, որ սիրահարուած երիտասարդներն իրենց սիրած աղջկայ մազերից կտրելով համայիլ են շինել տալիս, այսինքն մազը փաթթում են մի թանգագին կտորի մէջ, եռանկիւնաձև ծալում, ասղնագործով և կամ արծաթով պատում և իրենց մօտ պահում։

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԴՐԱՄՆԵՐԸ

ԱՏՐՊԵՏԻ

Տիգրան Մեծը այնպիսի դեր է խաղացել ոչ միայն Հայոց, այլ և ընդհանուր ազգերի պատմական անցեալում, որ նրա մասին գրած ամեն մի տող մեծ հետաքրքրութիւն է յառաջացնում։ Տիգրանի դիրքը այնքան մեծ է եղել ոչ միայն հայերի այլ նոյնիսկ ժամանակակից Հռոմայեցիների համար, որ նրա մասին մեծ ակնածութեամբ են գրել նոյնիսկ հակառակորդ ազգերի տարեգիրները։ Այնքան նշանակալից է Տիգրանի յիշատակը, այնպիսի ներգործութիւն է ունեցել նրա գործունէութիւնն, որ այ-

Պատկեր թիւ 1



Վաղարշակ Ա. Արշակունի

սօր ոչ միայն բազմաթիւ մագաղաթների, ձեռագրերի և գրքերի էջերի վրայ ընդարձակ տեղ է գրաւել, այլ և բազմաթիւ քննութիւնների առարկայ է դարձել նրա պատմութիւնը։ Ինչքան որ հայ պատմագիրներին, հնագէտներին և ազգագիրներին նիւթ է մատակարարել Տիգրանը, տասն անգամ աւելի նրա գործերով զբաղուել են օտարները։

Տիգրան Մեծի դրամները այնքան տարածուած են, այնպէս բազմազան և ցրիւ, որ ես վաղուց մտածում էի այս մասին հետաքրքիր հասարակութեան մի քանի խօսքով ծանօթութիւն տալ։

Պ. Երուանդ Լալայեանը 1910 թ. Վանի ռուսական փոխ-հիւպատոս պ. Օլֆերիեվ Սերգէյ-Պետրովիչից Տիգրանի մի ոսկէ դրամը նուէր էր բերել հանգուցեալ Մատթէոս Բ. ամենայն Հայոց կաթո-

ղիկոսին, որի կարգադրութեամբ այդ դրամը զետեղուեց ս. Էջմիածնի վանքի տաճարի ներքին թանգարանում։

1911 թ. յունուարի սկզբներին ուղևորուեցի Էջմիածին տեսնելու այդ ոսկի դրամը։ Հռոմի Վատիկանի թանգարանի մէջ գտնուած Տիգրանի ոսկէդրամը չկարողացայ տեսնել, (քանի որ թանգարանի դրամական մասի ընդհանուր կառավարիչը բացակայ էր, բանալին հետը վերցրած), բայց Էջմիածնի թանգարանում հնարաւոր եղաւ թէ լուսանկարելու և թէ կնքամոմով կաղապարներ հանելու։

Այս մասին յատուկ շնորհակալութիւնս եմ յայտնում Գերապատիւ սրբազաններին, որ չը զլացան արտօնելու հրատարակել այդ թանգագին դրամի պատկերը, որը միակն է իր տեսակի մէջ, Հռոմի ոսկի դրամից յետոյ, եթէ միայն վերջինս իսկապէս գոյութիւն ունի, կեղծ չէ և լաւ պահուած է։

Ս. Էջմիածնի թանգարանին նուիրուած այս դրամը ստատեռ է, սովորական ստատեռի կշռով (մի քանի դրամ աւելի, բայց ծաւալով Տիգրանի չորեքդրամեանների մեծութիւն ունի և բարակ է)։

Այս դրամը նախ ընկել է Մուզաֆէր-էդ-դին շահի ձեռքը, որը կախել էր բաւական երկար ժամանակ իր ժամացոյցի բրելոկների հետ ու մաշել էր, այնպէս որ դրամի կշիռը աւելի պիտի լինէր, եթէ մաշուած չը լինէր։ Մուզաֆէր-էդ-դինը դրամը բաշխել էր աւագ որդուն՝ Մահմէդ-Ալի-Միրզային, որից նուէր է ստացած եղել պ. Օլֆերիեվը։

Ներկայացուած օրինակից էլ, ինչպէս պիտի նկատեն ընթերցողները, դրամի Տիգրանի դէմքի կողմը քիչ մաշուած է, բայց գրութեան կողմը բոլորովին մաքուր է մնացել և տառերը այնպէս պարզ են, որ կարծես թէ դրամատնից նոր հատուած դուրս տրուած լինի։ Ցաւալի է, որ դրամը բրելոկների հետ կախելու համար թագի վերին մասից ոսկի օղակ են կպցրել, որ կցեն ոսկեայ շղթայի, այս պատճառով թագի վերին ծայրերը և բ. երեսի Որոնտ Գեսի մարմնացեալ պատկերը մասամբ փչացել է ոսկերիչների տափակերանի և բարկերանի ներգործութեան տակ։

Ինչպէս ասացի, այսօրուան ոչ միայն Եւրոպայի թանգարանները չունին այս եղակի դրամի օրինակը, ոչ միայն Ասիական որևէ թանգարանում չկայ Տիգրանի ոսկի դրամը, այլ և նոյն իսկ մինչև օրս ոչ մի տեղ նկարագրուած չէ այս դրամը, ուստի Տիգրանի դրամների շարքերի մասին տալիք տեղեկութիւններս հարկ եմ համարում սկսել նոյնիսկ այս դրամից։

1. ՈՍԿԻ ՍՏԱՏԻՐ

Ա. երես. Տիգրան Մեծի անդրին, նրա գեղեցիկ դիմանկարով, որի դիմագծերը աւելի երիտասարդական են, քան թէ մինչև օրս հրատարակուած արծաթի և պղնձի դրամների վրայ։ Աչքերի մէջ կենդանութիւն կայ, որը նման չէ ուրիշ դրամների վրայ եղած վէս հայեացքին։ Գլխին թագ ունի, որը եզակի է իր ձևով և շարունակուած է նրա և իր յաջորդների դրամների վրայ։

Պատկ. թիւ 2 Տիգրանի Մեծի

Թագի ետևից կախուած ապառաջը, հասնում է մինչև վիզը։ Անդրին ներկայացուած է մինչև ուսերը։ Թագի վերին մասի արծաթի դրամների մի կողմի վրայ երևացած հինգ պարզ ժանիքների փոխարէն ունի հինգ մարգարտեայ ժանիքներ, որոնցից բարձրները մանր մարգարիտներ են, միջինները միջակ, իսկ թագի վերին եզրին կպածները բոլորովին խոշոր։ Ինչպէս այս եզրը, այնպէս և թագի չորս եզրը մարգարտաշարով է զարդարուած, որոնք շրջապատում են ինչպէս ականջկալները, նոյնպէս և վզկալը։ Խոյրի աջ ականջակողմի վրայ կայ ութ թևեան մի աստղ, որը յենած է երկու բազէների, որոնք կանգնած են զոյգ ոտքերի վրայ՝ աստղի աջ ու ձախ կողմը։ Ճակատի երիզի վրայ կայ մի երկրորդ երիզ, կրկնակի մարգարտի շարքերով, որը միանում է աստղի տակ և մի շարքով միանում թագի ստորին շրջանակի երիզի հետ։ Ականջկալները և վզկալը, որոնք թագի ետևի կէս մասին են կցուած, սկսած քունքերից, ամբողջապէս միացած են թագին, վար կախուած մասը սուր եռանկիւնի բացուածք ունի, որոնց բացուածքից երևում է արքայական մանեակը և ծիրանու ուսակապը։ Դրամը շրջապատուած է գլանաձև և գնդաձև մի երիզով. որոնք փոփոխակի իրար են յաջորդում։ Ցաւալի է, որ այս շրջապատի երիզը տեղ տեղ կտրուած է, և ամբողջականութիւնը կորցրած, թագը զարդարուած է և գոհարներով։

Տիգրանի այս ոսկի դրամը իր մանրամասն կազմութեամբ մեզ յիշեցնում է իր նախորդների դրամները, որոնք իշխել են Հայաստանի ինչպէս արևելեան, նոյնպէս և արևմտեան մասերում, ինչպէս անկախ, նոյնպէս և Սիլևկեաններին հարկատու։ Տիգրան մեծի գլխի թագի մօտաւոր ձևը կարելի է տեսնել Արդիսարէսի, Քսէրքսէսի, Զարեհատէրի, Մորփիւղիկէսի դրամների վրայ, որոնց դրամները գտնւում են Փարիզի, Բէրլինի և Լօնդօնի մուզէյներում։ Տիգրանի դրամի ականջկալն ու վզկալը բոլորովին տարբերութիւն չունի Զարեհատէսի դրամի նոյն մասերից։ Ապառաջը փոխարինում է Արդիսարէսի, Քսերքսէսի խոյրերի ետևից կախուած փնջերին, որն անշուշտ պիտի մտած լինի Արշակունիների շրջանում, որոնց թագաւորների դրամների վրայ անրաժանելի զարդ էր։

Պատկ. թիւ 20 Զարեհատէս

Տիգրանի դէմքը ածելուած է, ինչպէս և նրա յաջորդներինը, քանի որ ժամանակակից Ալէքսանդր Մակեդոնացուց սկսեալ, Սելևկեան, Պտղոմեան, Յունական և Հռոմէական բոլոր իշխանապետների դէմքերն էլ ածելուած էին։ Բայց ածելուած դէմքը անսովոր չէ հայ դրամագիտութեան մէջ. Խարասպի դէմքն էլ ածելուած է իր դրամի վրայ, որը գտնւում է Փարիզի բիբլիոտէկ նասեոնալում։



Պատկ. թիւ 19 Արշակ մեծ

Ինչպէս երևում է, շատ հին սովորութիւն է ինչպէս հայերի, նոյնպէս և արևելեան ազգերի մէջ վզկալի և ականջկալի զարդածութիւնը։

Դեռ այսօրս հայոց եպիսկոպոսների և կաթողիկոսի խոյրի ականջկալը կարելի է տեսնել վակասի ետևից կախուած, որը անշուշտ հին ժառանգութիւնն է եկեղեցական դասի։

Տիգրանի թագի այս զարդերը եթէ ուշադրութեամբ զննենք կը գտնենք Պարթևական Արշակ Ա-ի և նրա որդու Տրդատ Ա-ի դրամների վրայ ևս, որոնք ոչ միայն Տիգրանի նման ընչացքն և մօրուսն ածելած են, այլև վզերն, ականջները մինչև այտերը ծածկած են։ (Տես թիւ 19 Պարթևական Արշակ մեծ հիմնադրի պատկերը։) Թագաւորը—որպէս «Գերագոյն Յայտնութիւն» երկրի վրայ անմատչելի էր ինչպէս ժողովրդին, նոյնպէս և պալատականներին։ Ինչպէս չէին կարող մահկանացուները նրա դէմքը տեսնել, այդպէս էլ նրա դէմքը մասամբ ծածկուած էին ներկայացնում դրամների վրայ, ընդհանուր օրէնքին ենթարկուելով։

Տիգրանի ստատեռի պատկերը ներկայացուած է աջակողմեան կիսադէմքով, որը բոլորովին ներհակ է Արշակունի պարսկական

թագաւորների ընդհանուրի դրամների ձևին, որտեղ ամենքն էլ ձախ կիսադէմքով են ներկայացուած։ Այստեղ պէտք է աւելացնել, որ Տիգրանի նախորդներին վերագրուած արծաթ և պղինձ դրամներն էլ ընդհանրապէս աջակողմեան կիսադէմքով են դրոշմուած և այդպէս էլ շարունակուած է յաջորդների ժամանակ։

Տիգրանի այս ոսկի դրամի Բ. երեսը՝ յետսակողմը մի այնպիսի նորութիւն ունի, որ մինչև այսօր ոչ մի տեղ չի հրատարակուած։ Երկու տող արձանագրութիւն ունի յունարէն—ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ թագաւորին Տիգրանի, որոնց մէջը աթոռի վրայ նստած է Անտիոքիան (Սիրիայի պաշտպան դիցուհին). երեսը դէպի աջ, լայն շորերի մէջ պճնուած, գլուխը քաղաքի պարիսպների նման բրգաւոր թագ դրած, աջ ձեռքով ոսկեայ սափոր բռնած, որ կարկառում է Սուրիային տիրողին։ Տիգրանի դրամների վրայ Անտիոքիան միշտ ներկայացուած է արմաւենու ճիւղով, կամ միայն արմաւենի. կամ յաղթական դիցուհին ձեռքին պսակ, նոյնիսկ Անահիտը, Աստղիկը, Վահագնը, բայց Անտիոքիան ձեռքին ոսկեայ սափոր առաջին անգամն է, որ լոյս է տեսնում։

Անտիոքիայի ոտքերի տակ Որոնտ գետը կոյսի դիրքով մարմնացած. վերնամասը լողալու ձև է ընդունած, աջը Անտիոքիայի գահոյքի տակն է, իսկ ձախով բռնած է դրամը շրջապատող դափնի պսակը։

Կշիռն է 8 գր. 60, որտեղ դրոշմուած լինելն անյայտ է։

---

2. Տասնդրամեան (արծաթ).—Տիգրանի սոյն տասնդրամեանը հրատարակուած է Փարիզում 1890 թ. Th. Reinach-ի «Միհրդատ Եւպատորոս Պոնտոսի թագաւոր» գրուածքի մէջ։ Այդ

պատկ. թիւ 3

Տիգրան Ա. մեծ

դրամը թէ որ միւզէյումն է գտնուում, մենք չենք կարող ասել, բայց համարձակ կասենք, որ այդ դրամը իր տեսակի մէջ եզակի է։ Նրա կազմը, ձևը (ա. երեսի) բոլորովին նման է նախորդ ոսկի

դրամի հետ։ Սովորականից աւելի խոշոր դիրք ունենալով, ժամանակի քանդակագործութեան մասին ընթերցողները աւելի լաւ գաղափար կարող են կազմել զննելով մեր մէջ բերած նկարը (թիւ 4 և 21 պատ.)։ Համեմատութեան համար մենք գնում ենք նոյնպէս Աղէք-

Մեհրդատ Ա.

171—138 Ն. Ք. Ա.

Հրահատ Բ.

138—128 Ն. Ք. Ա.

Որոտ Ա.

87—37 Ն. Ք. Ա.

Վաղարշ Դ.

147—191 Ք. Ծ. Ե.

սանդր մեծի տասնդրամեանը, որը 250 տարի աւելի վաղ է փորագրուած քանթէ այս դրամը, երբ քանդակագործութիւնը դեռ ևս իր գերազանց շրջանումն էր։ Այս համեմատութիւնը աւելի դրական լինելու համար անհրաժեշտ ենք գտնում դնել նոյնպէս Պարթևական թագաւորներից Միհրդատ I-ի, Հրահատ II-ի, Որոտ

I և վաղարշ VI-ի չորեքդրամեանների պատկերները, (թիւ 21 պատկեր), ուր պարզ կերպով նկատելի է, թէ ինչպէս գեղարուեստը աստիճանաբար ընկել է և բարբարոսական շրջան է մտել։

Պատկեր թիւ 4

Աղէքսանդր Մակեդոնացի

Թէև Տիգրանը ապրել է գեղարուեստի քանդակագործութեան անկման շրջանում (décadance), բայց և այնպէս նրա դրամների վրայ ընդհանրապէս և Տասդրամեանի վրայ յատկապէս երևում է, որ դեռ գտնուել են արհեստաւորներ, որոնք կենդանութիւն են տուել դրամների համար պատրաստուած կաղապարներին ուր արուեստը եթէ, գերազանցութեան մէջ չէ, բայց գեղեցկութիւնից և արտայայտութիւնից հեռու էլ չէ։

Պատկեր թիւ 5

Մենագրեր-Monograme

Տիգրանի բազմաթիւ դրամների վրայ, ինչպէս արծաթ, նոյն-

պէս և պղինձ, նկատելի է այնպիսի համանմանութիւն, որ նոյն իսկ ոչ վարժ աչքն էլ կարող է առաջին հայեացքով ճանաչել այդ աշխարհակալի պատկերը որտեղ էլ որ պատահի։

---

3. Չորեքդրամեան (արծաթ).—Սրանից հինգ տարի առաջ Բաթում Թուրքիայից գաղթած մի լումայափոխից գնեցի Մեծն Տիգրանի մի շատ հազուադիւտ չորեք-դրամեանը, որը առաջին անգամն է հրատարակվում «Ազգագրական Հանդիսի»

Պատկեր թիւ 6

Տիգրան Մեծի

էջերում (տես պատ. թիւ 6)։ Այս դրամի մի օրինակը գտնվում է Փարիզի Բիբլիոտեկ Նասիոնալում, (տես E. Babelon-ի աշխատասիրութիւնը Les Rois de Syrie, d'Armenie et de Cammogene, 1890 թ. երես 215—23 դրամ)։ Այս չորեքդրամի ծաւալը Մեծն Տիգրանի սովորական չորեքդրամեաններից մեծ է, թէև կշիռը այնքան տարբերութիւն չունի։ Ա. երես։ Այս դրամի վրայ թագաւորի անդրին աւելի փոքր է, քան թէ սովորական չորեքդրամեանների վրայ և ինքը աւելի երիտասարդ ու կայտառ պատկեր ունի, խրոխտ հայեացքով։ Թագի, ապառաջի, վզկալի, ականջկալի ձևերը համարեա թէ նոյնն է, ինչ որ էր ոսկի դրամի վրայ, զարդերը, մարգարիտները, բազէները աստղը անփոփոխ է, միայն թագը չունի մարգարտեայ երեք քարերից կազմուած ժանիքներ, այլ մանր գոհարներից և մարգարտից զարդարուն ժանիքներ են կազմել, ծայրերին հատ հատ մարգարիտներով։ Անդրին նոյն երիզանման շրջանակն ունի, բայց տարաբաղդաբար ընկել է ոսկերչի մուրճի տակ և ներքին մասը մի քանի հարուած ընդունելով հարթուել է, փչացել։

Բ. երես. Յեսսակողմը նոյն Անտիոքիան նստած է ժայռի վրայ. նոյն դիրքով, միայն բարձր վակասով, և ձեռքին բռնած է արմաւի ճիւղը, որ կարկառում է յաղթող Տիգրանին։ Ոսկի դրա-

մի վրայ արձանագրութիւնը միայն—Թագաւորին Տիգրանի էր, իսկ այստեղ—ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ ԹԱԳԱՒՈՐԱՑ Թագաւորին Տիգրանի է, որով պատմական այն փաստն հաստատում է, թէ Տիգրանը Սելևկիան, Ասորիքը նուաճելուց յետոյ, երբ Պարթևներին էլ նեղը դրեց, ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ Թագաւոր տիտղոսը նրանցից խլեց։ Բաւական չէ, որ այստեղ արձանագրուած է այդ տիտղոսը, արմաւենի ճիւղի վերի մասում արձանագրուած է նոյնպէս յունական տառերի Սելևկեանների ΗΛ—38 Թուականը՝ որը սկսում է Քս. ծ. 320 տարի առաջ, Սելևկեան իշխանութեան հաստատութեան հետ։ Այս դրամն արդէն թուականով հաստատում է ինչպէս Տիգրանի իշխանութեան շրջանը, նոյնպէս և նրա տիրապետութեան սահմանները։

Բայց այստեղ ուշադրութեան արժանին այն է, որ փոխանակ թուականը լինելու ΗΛΣ—238, գրուած է միայն ΗΛ—38, որը շփոթութիւն է առաջացնում։ Թէ ի՞նչ է պատճառը, որ ΗΛΣ-ի փոխարէն միայն ΗΛ-ը մենք հասել ենք սոյն եզրակացութեան, որը հաւանական կը թուի ընթերցողին. եթէ նա նկատի առնի, որ համանման դէպք էլ պատահած է Սելևկեան Փիլիպպոս Փիլադելփոսի դրամների թուականների շարքին (տես Er. Babelon-- Les Rois de Syrie, d'Armenie et de Commogène աշխատասիրութիւնը 1890 թ. Փարիզ—երես 203)։ Այս դրամների շարքին (այնտեղ. թիւ 1541—1545), իւրաքանչիւր դրամի վրայ փոխանակ դրոշմուած լինելու ΘΙΣ ΚΣ, ΑΚΣ, ΒΚΣ, ΔΚΣ, մենք պատահում մի միայն ΘΙ, Κ, ΑΚ, ΒΚ, ΔΚ թուանշաններին, որոնք, ինչպէս երևում է՝ Տիգրանի ժամանակակից սովորական մի ձև էր դարձած

Մինչև այժմ էլ արևելքում սովորական է թուական գրելիս ջնջել, չգրել հազարերորդ թիւը։ Նոյնիսկ շատ անգամ հարիւրերորդ թիւը բաց են թողնում և 890, 895, 905, փոխանակ 1890 ևն. ևն. կամ ուղղակի 90, 95, 11-ին փոխանակ 1890 թ. 1895, և կամ 1911 թ.։ Թուագրութեան միայն միաւորն ու տասնաւորը յաճախ գործածական է իսլամ աշխարհում, ուր գործածվում է արաբական տառերի հետ արաբական թուանշանները։

Ոմանք ենդաթրում են, որ Տիգրան Մեծը իր թագաւորութեան սկզբից սկսել է նոր թուական համրել տալով հասել մինչ-իր թագաւորութեան 42-րդ տարին, բայց սա չի կարող հաւանականութիւն գտնել, քանի որ ինչպէս ներքև պիտի տեսնենք, Տիգրանի դրամների վրայ դրոշմուած են Սելևկեան ΑΜΣ, ΒΜΣ և ΓΜΣ —241 242 և 243 թուականները։ Եթէ աչքի առաջ ունենանք և այն պարագան, որ Սելևկեան թուականը այնպիսի քաղաքականութիւն էր գտած ամբողջ արևելքում, որ նա ոչ միայն դրամ-

ների, այլ արքունի հրովարտակների վրայ էլ գործածական էր, այն ժամանակ պիտի համոզուենք, որ Տիգրանը յատուկ թուականութիւն չէր կարող ունենալ։

Ճմարիտ է, շատ հին ժամանակներից սովորութիւն էր և մինչև օրս նոյնիսկ Օսմանեան սուլթանների և ուրիշ գահակալների հրովարտակների վրայ գործածական է գահակալների թագաւորութեան թուականը, բայց այդ թուականը, դրոշմել են միայն Օսմանեան սուլթանները իրենց դրամների վրայ, իսկ ուրիշ տեղ դեռ նկատուած իրողութիւն չէ։

Այս չորեքդրամի Բ. երեսի շրջապատը դափնեայ պսակ չէ, ինչպէս որ է վերևը նկարագրուած ոսկի դրամի վրայ, այլ հայկական դրամի սովորական երիզաձև շրջանակն է, երկար և գունտ մարգարիտների շարքը։ Կշիռն է 15.85 գրամ։

Դրամի ստորին մասը, ինչպէս ընթերցողը տեսնում է—նկարից, փչացած է, Որոնտ գետի մարմնացեալ մասի գլուխը, ձախ թևը և մասամբ կուրծքն է երևում։

4. Չորեքդրամեան.—Վերևը նկարագրուած չորեքդրամի օրինակը կայ միայն Փարիզի Բիբլիոտէկ Նասիոնալում, որը երկու կողմով էլ բոլորովին նման է մեր չորեքդրամին, միայն տարբեր կաղապարով է դրոշմուած։ Բիբլ. Նասիոնալի դրամի ներքին մասում, Որոնդ գետի տակ նկատում ենք յունական երկու տառ ΞΚ. որը հաւանական է թուում, թէ պիտի լիներ և մեր դրամի վրայ, քանիոր ինչ որ մի հետք կայ, բայց տառերը որոշ չեն նշմարվում։ Այս տառերը պէտք է համարել Մակեդոնացիներից մնացած այն ամիսների անուններից մէկը Ξανθικος, որոնց արձանագրութիւնը սովորաբար գործածական էին դարձած Տիգրանի ժամանակակից նոյնիսկ Պարթևական Որոդէս I և Հրահատ IV թագաւորների չորեքդրամեանների վրայ (տես, թիւ 21, և Samlung Petrowicz Arsacidenmünzen. Wien 1904 թ- երես 87)։ Ամիսները նուիրուած լինելով որոշ Աստուածների և Աստուածուհիների, նրանց հովանաւորութեան էին յանձնուում թագաւորողների բաղդը։ Դեռ այսօրս պարսիկների մէջ ամիսների առասպելական նշանակութիւնը մնապաշտութեան մեծ նիւթ է մատակարարում և ամեն մի գործ որոշ ամսում սկսելը, վերջացնելը շահաւէտ են համարուած։ Այս պատճառով փողերանոցներում, մանաւանդ առանձնաշնորհեալ—ինքնավար քաղաքների դրամների վրայ պահպանուած են այս սովորութիւնները։ Միւս արձանագրութիւնները, զարդերը համանման են նախընթաց դրամի հետ։

5. Չորեքդրամեան.—Այս պատկերով ներկայացուած չորեքդրամեանն էլ մեր ժողովածուից է, որտեղ Ա. երեսին Տիգրան Մե-

ծի պատկերը թէև բոլորովին համանման է նախընթաց դրամների հետ, միայն թէ աւելի մեծ գիրքով է կիսադէմը և աւելի գեղարուեստական է քանդակագործութիւնը։ Բ. երեսին արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ թագաւորին Տիգրանի։ Անտիոքիան

Պատկեր թիւ 7

Տիգրան Մեծի

և Որոնտ գետի պատկերները, արմաւենի ճիւղը միևնոյն ձևն ունին, ինչ որ նախորդ դրամների մէջն է, միայն առաւելութիւնն այն է, որ Անտիոքիայի աջ ձեռքի արմաւենի ճիւղի տակ դրոշմուած է Սելևկեանների զինանշաններից մէկը—խարիսխը, որը Տիգրանը Սելևկեան իշխանութիւնը նուաճելուց յետոյ իւրացրել էր։ Տիգրանի դրամների մէջ շատ հազուադէպ է խարիսխ զինանշանով դրամ։

Այս դրամի մի ուրիշ առաւելութիւնն էլ այն է, որ վրան ունի մենագիր 3 թիւը (տես պատկեր 5 monograme)։ Ժամանակակից Պարթևական, Սելևկեան և ուրիշ երկրների, առանձնաշնորհեալ քաղաքների դրամների վրայ նկատելի են այլևայլ մենագրեր, որոնք որոշ նշանակութիւն ունին։ Այս մենագիրը դրոշմուած է նոյնպէս Սելևկեան Անտիոքոս X Եւսէբիոսի դրամի վրայ (տես E. Babelon երես 200, դրամի թիւը 1526), որը Մեծն Տիգրանի ժամանակակից էր։ Այս մենագիրը աւելի հաւանակապար Սիրիական Սելևկիա Պիրէա քաղաքի դրամատան յատուկ էր, որը դրամ կտրելու առանձնաշնորհ ունէր վաղուց ի վեր։ Հետևաբար վստահութեամբ կարող ենք ասել, որ Սիրիայի առանձնաշնորհեալ քաղաքներն էլ, գտնելով Հայկական իշխանութեան և հովանաւորութեան տակ, Տիգրանի անունով և պատկերով դրամներ են դրոշմել, ինչպէս մի ժամանակ դրոշմում էին Սելևկեան ու Պարթևական թագաւորների անունով ու պատկերով, երբ գտնվում էին նրանց իշխանութեան և հովանաւորութեան ներքև։ Կշիռն է 15. 80 գրամ.

Մենագրերն այնքան բազմաթիւ են ինչպէս Սելևկեան, Պարթևական, նոյնպէս նրանցից հին և նոր ազգերի դրամների վրայ

որ նրանց մասին դրամագիտութիւն դեռ չի կարողացել ասել իր վերջնական խօսքը։ Բայց մենագրերից շատերի համար արդէն այնպիսի հաւանական բացատրութիւններ են տուած, որ հետաքրքրողը աւելի քան համոզեցուցիչ է համարում այդ ենթադրութիւնները։ Այս պատճառով մենք դրականապէս չենք կարող շեշտել, որ այս դրամը կտրուած է Սելևկիա-Պիրէայում, գուցէ և կտրուած լինի մի ուրիշ քաղաքում, բայց Անտիոքիա դիցուհին, Որոնտ գետը ցոյց են տալիս, որ իրենց շրջանի մօտ քաղաքում պիտի դրոշմուած լինի այս դրամը։

Դրամի Բ. երեսի շրջանակը դափնեայ պսակ է, ճիշտ այն ձևով, ինչպէս որ նկարագրուած է թիւ 1 դրամը։

6. Չորեքդրամեան.—Նախորդ խարիսխաւոր դրամի մի ուրիշ օրինակը կայ Փարիզի Բիբլիոտէկ Նասիոնալում, որի երկու երեսն էլ թէև բոլորովին համանման են, ինչպէս պատկերները, նոյնպէս և մենագիրը, բայց տարբերւում է միայն Տիգրանի թագի վերին ժանիքները, որոնք մեր թիւ 1 ոսկէ դրամին եռաշար մարգարտեայ ժանիքներն ունին։ (Տես E. Babelon-ի գիրքը, երես 213, թիւ 12. և նկարներիտախտակ XXIX, պատկեր 8-ը։ Բացի այս նախորդ դրամի մէջթիւ 3 մենագիրը լոկ դրուածէր, իսկ այստեղ նրա երկու կողմը երկու գծեր ևս կան, որոնք մեզ տալիս են աւելի դրական փաստ թէ դրամը կտրուած է Սելևկիա Պիռէա քաղաքում։

7. Չորեքդրամեան.—Այս չորեքդրամեանը բոլորովին նման է № 5 դրամին, ինչպէս Ա., նոյնպէս Բ. երեսով. միայն թէ տարբեր երկու մենագիր ունի։ Առաջին մենագիրը նախորդին նման Անտիոքիա դիցուհու աթոռին տակն է, բայց բոլորովին տարբեր ձևով է. մենագրի թիւ 7 (տես պատկեր 5). իսկ երկրորդը դիցուհու ձեռքին բռնած արմաւի ճիւղի տակն է (տես մենագրի թիւ 5) և կազմուած է ΑΡΣ տառերից, որը պէտք է կարդալ ըստ Babelon-ի, Սիւրիայի Փիւնիկեան ափերին մօտ Արադոս քաղաքը և կամ Արմենիա։ Բայց վերևը յիշուած աթոռի տակի մենագիրն Արադոսից աւելի յիշեցնում է Անտիոք քաղաքի մենագիրը, (տես Babelon-ի գրքի երես, CLXXXI և մեր մենագիրների տախտակ թիւ 5։ Այս պարագան մեզ տիպում է գերադասութիւն տալ Անտիոք քաղաքին Արադոսից, քանի որ այս մենագիրը քաղաքների մենագրերի տեղն է դրուած, իսկ ΑΡΣ տառերին յատուկ մենագրերի անը գրուած լինելով, կարելի է կարդալ Արշակ, կամ

Պատկեր թիւ 8

Տիգրան մեծի

Արտաշատի տիտղոսները, որոնց երկուքն էլ Տիգրան Մեծը կրում էր հաւասարապէս։ Այդ դրամն էլ պատկանում է մեր ժողովածուին։ Կշիռ 15. 50 գր.

8. Զորեքդրամեան.—Սոյն դրամի մի ուրիշ օրինակը կայ Փարիզի Ազգային Մատենադարանում, որը բոլորովին համանման է նախորդին, միայն տարբեր դրամահատական կաղապարով։ Զանազանութիւնը այնտեղ է, որ քաղաքի մենագիրը, որը գտնւում է դիցուհու աթոռի տակ, մասամբ տարբեր է, թիւ 7 մենագրի փոխարէն այնտեղ դրուած է թիւ 15 մենագիրը, որը պէտք է համարել Հերակլէոն քաղաքի դրամահատական տան նշանը։

9. Զորեքդրամեան.—Այս չորեքդրամեանը, որ գտնվում է Փարիզի Ազգային Մատենադարանում, նախորդից զանազանւում է Ա. երեսին ապառաջով, որը ոչ թէ նախորդների նման միայն վար է թողնուած, այլ մասամբ ծածանւում է օդում։ Իսկ Բ. երեսին Անտիոքիա դիցուհու թէ աթոռաքարի տակ և թէ արմաւի ճիւղի տակ տարբեր մենագրեր են նկատւում։ Աթոռաքարի տակ թիւ 2 մենագիրն ունի, որ կազմուած ΤΓΡ տառերից պէտք է կարդալ Տիգրանակերտ քաղաքի անունը, որի մասին ինչպէս Babelon-ը, Նոյնպէս և նրա նախորդ անգլիացի և գերմանացի դրամագէտները միևնոյն կարծիքին են հասած։

Անտիոքիա դիցուհին Տիգրանի դրամների վրայ դիտմամբ է պահպանուած Տիգրանակերտում, Սելևկեան իշխանութեան նուաճման յիշողութեան համար։ Մանաւանդ որ Տիգրանը տիրելով Սելևկեան մեծ իշխանութիւնը և այնտեղ բնակուած ազգերը, նրանց պաշտամունքներն էլ իրեն պաշտամունք արաւ, որ կարողանայ գրաւել հելլէնական քաղաքակրթութեան յառած ժողովրդի սէրը։ Եթէ Տիգրանը Յունաստանից բերել է տալիս Աֆրոդիտէի, Հերայի, Աթէնասի և ուրիշների արձանները, նրան հաճելի պիտի լինէր իր վերաշէնած Տիգրանակերտ քաղաքի փողերանոցում կտրուած դրամների վրայ տեսնել Սուրիայի պաշտելի դիցուհու պատկերը, կենսաբեր Որոնտ գետի ափերին նստած, որով նա տէր էր դարձել Սելևկեան գահին։

Արմաւի ճիւղի տակի թիւ 1 մենագիրը չի կարելի բացատրել։ Նա կազմուած Ω և Ι տառերից, որոնց նշանակութիւնը դեռ չեն կարողացել տալ դրամագէտները։

10. Զորեքդրամեան.—Այս չորեքդրամի մի ուրիշ օրինակն ունի ասպետ Ադ. Պետրովիչը, բոլորովին նման նախորդին, բացի արմաւե իի ճիւղի տակ գտնուած մենագիրը, որը տարբերվում է նախորդից։ Թիւ 6. Մենագիրն ունի, որ դարձեալ անվերծանելի է։

11. Զորեքդրամեան.—Փարիզի Ազգային Մատենադարանում

կիայի վերատեսչութիւնը յանձնուան չի եղել Տրիբազին, սակայն Եւրոպայի դրամագէտները Կիլիկիայի քաղաքներին են վերագրում Տրիբազի անունով և պատկերով տպագրուած մի շարք դրամներ։ Նոյնիսկ E. Babelon-ը կարծում է, որ պարսկական սովորութեան համաձայն, այդ դրամները Տրիբազը կտրել է տուել բանակում, երբ նա կռւում էր կիպրացիների դէմ, այս պատճառով էլ այդ դրամները կրում են Կիլիկիայի քաղաքների անունները։

Թէև մենք մասամբ համաձայն չենք վերոյիշեալ դրամագէտների հետ, բայց ընդունելով որ Տրիբազը Արևմտեան Արմենիայի թագաւոր է, նրա անունով կտրուած դրամները, որտեղ, որ քաղաքումն էլ որ կտրուած լինին, պիտի Հայ-թագաւորի դրամ համարել ուստի և անցկացնում ենք այս ցուցակում։

Կան մի շարք փողեր—պղինձ—, որոնք մինչև օրս անորոշ են մնացած, թէ ուր են կտրուած, ումն են պատկանում, նախընթաց մի ուրիշ կարգ փողերի հետ, որոնք Տրիբազի անունն են կրում, բայց սխալմամբ ենթադրուած են թէ Կիլիկիայի Իսսուս, Մալլոս և Սոլի քաղաքներումն են կտրուած։ Այս դրամների ուսումնասիրութիւնով կարելի է հասնել այն եզրակացութեան, թէ այդ փողերը պատկանում են Փոքր-Արմենիային, շատ սխալ կարդացուած քաղաքների անուններն ու տեղերը կարելի է ուղղել և կարդալ Փոքր-Արմենիայի մի քանի քաղաքների անունները։

Անշուշտ գիտական աշխարհը չի հասել այս եզրակացութեան, ինչ մենք առաջադրում ենք ուսումնասիրութեան, բայց փաստերն այնքան ակներև են, որ ստիպուած ենք մեր ենթադրութիւնները դնել գիտութեան սեղանի վրայ և մասնագէտների լուրջ ուշադրութիւնը գրաւել։

Գատ. թիւ 3

Տրիբազ

Հ. Ղ. Ալիշանը հրատարակել է Արարատի մէջ մի դրամ (արծաթ), որի Ա. երեսը Արտաշէս Ոքովի պատկերն է Որմզդական ձևով, գլուխը թագով, մերկ մարմնով մինչև պորտը, երեսը դէպի աջ, բայց կուրծքն ու փորը ուղղահայեաց են, աջ ձեռքին նետ, ձախում բաղէ բռնած։ Պորտից ներքև ունի Որմզդական Արծաթի թևերն ու պոչը, իսկ արքայի մարմնին կպուած է գլուխը ու աչքերը այնպիսի առեղծուածային ձևով, որ կարծես Արքայից-Արքայի ծանրութիւնից ճնշուած է թռչունը, թէև մեծ ճիգ է գործ դնում նրան դէպի ամպերը բարձրացնելու։ Շրջանակը երիզաւոր է, բայց մաշուած։

Բ. երեսին կանգնած է Տրիբազը, բայց ոչ պարսկական տարազով, այլ մերկամարմին Վահագնի ձևով, գլուխը բաց, երեսը դէպի ձախ, պսակաւոր, խճճուած մազերով, ծիրանին ձախ ուսից իջնում է և աջ կողմը դառնալով պորտի տակից անցնում է քամակով և միանում է կապով դարձեալ ձախ ուսի վրայ։ Մերկ աջ թեւը կրում է ձեռքին կանգնած արծիւ, իսկ ձախ ձեռքով յենուած է նիզակին։ Ծիրանին գեղեցիկ ծալքեր ունի և քանդակագործութիւնը դարի ընդհանրական շնորհն է կրում։ Այնքան գեղեցիկ է, որ կարող է օրինակ ծառայել։ Տրիբազի աջ թեւի տակ կայ T տառը, իսկ նիզակի ետևը փիւնիկ-արամէական տառերով ՊՅՀԳ Տրիբազ է գրուած։

Մաշուած շրջանակն է մարգարտաշար։

—

2. Երեքդրամ. E. Babelon-ի Աքեմենեան շրջանի դրամների գրքի մէջ, երես 21, թիւ 156, նկարագրուած է սոյն դրամի մի ֆուրիշ օրինակը, որի Ա. երեսին դարձեալ Արքայից-արքայի Որմզդական պատկերն է, միայն գլուխը մերկ, մօրուսաւոր, դէպի աջ նայուածքով, աջ ձեռքին պսակ, ձախում մի լուտասենի։ Մերկ մարմնով կրծքի կողմը ուղղակի կանգնած, իսկ պորտից ցած նոյն Որմզդական թեւերը և գլուխը, ինչպէս որ նկարագրեցինք նախորդ երեքդրամի վրայ։

Պատ. թիւ 4

Տրիբազ

Բ. Երեսին. Նոյնպէս Տրիբազը Վահագնի պատկերով, դէպի ձախ նայուածքով, բաց գլուխ, մազերը կուինճ, կիսամերկ, ծիրանին ձախ ուսից աջ թեւի տակից դառնում և կապւում է ձախ ուսին։ Աջ ձեռքին արծիւը և ձախը գաւազանին յենուած։ Գաւազանի երկայնութեան Փիւնիկ-Արամ. տառերով Տրիբազ։ Մարգարտաշար շրջանակով։

—

3. Երեքդրամ. Babelon-ը նկարագրում է նոյնտեղը այս երեքդրամը, որի Ա. երեսին Տրիբազի պատկերն է Վահագնի կերպով նոյն ձևով ինչ նախորդ դրամների երկրորդ երեսին, գրեթէ առանց որևէ նկատելի փոփոխութեան։ Այս երեսին աջ թեւի տակը

դրամագէտը տեսնում է և ենթադրում է հարցական նշանով (ΙΣ ?) յունական այս երկու տառերը, որը ΙΣΙΩΝ Կիլիկեան քաղաքի կրճատումն համարելով, նախընթաց և յետագայ դրամները նոյնպէս դասաւորում է Իսոս քաղաքի դրամների շարքին։ Այս տառերը ինչպէս տեսնում են ստորև պատկերից ընթերցողները ΙΣ-ի չեն նմանում, այլ այդտեղ KP տառերի հետքերն են նշմարւում, որ գուցէ Մէլիտօնի մօտ գտնուած KOPNA քաղաքինը լինի։

Պատ. թիւ 5

Տրիբազ

Այս ընթերցանութեան վրայ չենք կարող պնդել, քանի որ երեք դարուց իվեր ոչ մի դրամագէտ այս քաղաքին և ոչ մի դրամ չի վերագրել, բայց աչքի առաջ ունենալով այն պարագան, որ Տրիբազը և ոչ մի կապ չունէր Իսոսի հետ և եթէ Կիպրական պատերազմի համար Կիլիկիայում դրամ է կտրել տուել, Իսոսում նա չէր կարող գործ ունենալ, որ դրամ կտրել տար, այլ նա կը լինէր որևէ ծովափնեայ քաղաքում։ Կամ առանց քաղաքի էլ կարող էր դրամ կտրել տալ, ինչպէս որ ուրիշ պարագային կատարուել է։

Բայց մի պահ եթէ ենթադրենք, թէ իսիապէս Babelon-ը չի սխալւում, այլ տալիս է իսկական ΙΣ տառերը, ինչ որ իր փորձառութիւնը ցոյց է տալիս, բայց ի՞նչի չի կարելի ենթադրել, որ ΙΣ տառերը ΙΣΙΩΝ-Իսիոն քաղաքին է, որը գտնւում է Փոքր Արմենիայում, և անշուշտ պիտի վերագրել Կիլիկիան Իսոսին։ Մի առ ժամանակ կարելի է հակաճառել դրամագէտի հետ և ΙΣ սկզբնաւորական տառերը տալ Փոքր-Արմենիայի Իսիոն քաղաքին։

Բ. Երեսին. Վահագնի պատկերն է, ամբողջ մարմինը կրծքի կողմից ուղղահայեաց, գլուխը դէպի աջ, աջ ձեռքին իր փշապատ լախտը, որին կրթնած է, ձախում աղեղն ու թեւից վար է կախուած առիւծի մորթին։

Շրջանակը փչացած է։

—

4. Հումայ (արծաթ). Ա. երեսին սանրուած մի գլուխ մահիկաձև, դէպի աջ, մօրուսով միայն ականջների մօտ, ընչացք և կզակ ածիլած.

Բ. Երեսին Վահագը մերկամարմին, դէպի ձախ նայուածքով, աջում թեատարած արծիւ ունի, ձախով նիզակին կրթնած։ Աջակողմը Փիւնիկ-ա-բամէական Տրի—որ Տրիբազ է կարդացուում։ Աջ կողմը ունի մի մենագիր, խաչ—ողակով տես պատկեր թիւ 2, նկար 38։

Պատ. թիւ 6

Տրիբազ

—

5) Երեքդրամեան. E. Babelon-ի Տրիբազ թագաւորին նուիրած դրամներից մի խումբն էլ Կիլիկիան Մալի կամ Մալլոս քաղաքին է ենթադրուած, տես երես 22, թիւ 164—166։

Այս շփոթութիւնն առաջացել է նրանից, որ դրամներից երկուսի վրայ ΜΑΛ և մէկի վրայ էլ ΜΑΛΛΩΤΩΝ տառերն են դրոշմուած, որը դրամագէտը վերագրում է Կիլիկեան Մալի քաղաքին։ Բայց եթէ լրջութեամբ քննենք Մալլոտոն անունը Մալի կամ Մալլիւսի հետ, կարելի է հասնել ուրիշ եզրակացութեան, թէ Մալլիւսը ենթադրական է, ոչ թէ իրական։ Եթէ նկատի առնենք, որ Մալլիւս քաղաքը երբէք չէր ընկած Տրիբազի իշխանութեան և այնտեղ նա ոչ մի յարաբերութիւն չունէր, այն ժամանակ մեր կասկածներն աւելի կըզօրանան։

Այս պատճառով ΜΑΛ տառերը պէտք է կարդալ ΜΑΛΛΩΤΩΝ, ինչ արձանագրուած է թ. 165 դրամի վրայ, որ ամենայն հաւանականութեամբ Փոքր-Արմենիայի Մալաթիա քաղաքն է, որ այն ժամանակ մեծ դիրք ունէր, յայտնի էր արդիւնաբերութեամբ, վաճառականութեամբ և որից անցնում էին Արևելքից Արևմուտք ու հակառակը ինչպէս մեծամեծ բանակները, նոյնպէս և կարաւանները։ Քսենոֆոնի նկարագրութիւններից կարելի է ենթադրել, որ ոչ միայն բանակը գտնուում էր Մալաթիայի դաշտում, այլ նոյնիսկ բանակի կառավարիչը և փոխանորդները։

Գուցէ ΜΑΛΛΩΤΩΝ և ΜΕΛΛΙΤΟΝ անունների մէջ զանազանութիւն գտնեն ընթերցողները և ուսումնասիրողները, չըկարողանան հաշտուիլ մեր ենթադրութեան հետ, բայց եթէ մտածեն, որ ΜΑΛΛΩΤΩΝ-ը չի կարելի և ոչ մի կերպ ΜΑΛΛΥΣ-ի փոխադրել, այն ժամանակ նրանք աւելի պիտի նախապատուութիւն տան նախորդին, քան թէ վերջինին։

Մալլոս քաղաքի անունը պատմագիրները միանման ΜΑΛΛΥ են գրում, իսկ դրամի վրայ գրուած ΜΑΛΛΩΤΩΝ-ը Մալլոսին յայտնացնելու համար ΜΑΛΛΩΤΙΣ գաւառ են գտնում դրամագէտները և նրան նմանեցնում։ Այն ինչ յայտնի է, որ ինքնավար քաղաքները դրամի վրայ միայն քաղաքի անունն էին արձանագրում, և

ոչ թէ գաւառի, հետևաբար ΜΑΛΛΩΤΩΝ ոչ մի կերպ Մալլիւս չի կարելի դարձնել։

Պատ. թիւ 7

Տրիբազ

Ա. երեսին դրոշմուած է Անահիտի պատկերը, աջակողմ հայեացքով, ականջին օղ, մարգարտաշար մանեակը վզին, վարսակալով, որ գեղեցիկ ճակատնոց ունի և վզի վրայ ամփոփուած գընդիկ մազերով։ Շրջանակը մարգարտաշար է։

Բ. Երեսին. Տրիբազի գլուխը դէպի աջ, փոքրիկ մօրուսով, զարդարուն գլխարկով, որի ականջկալները կապուած են կզակի տակ, վզակալ ունի և երիզի կապ—վարսակալի և ապառաջի նման գտակի շուրջը։ Վզին երկշար մարգարտի մանեակ ունի։ Արձանագրութիւնը աջ կողմը ΜΑΛ որը մենք վերագրում ենք Մալաթիային։

—

6. Երեքդրամ. Ա. և Բ. երեսով համանման, միայն արձանագրութիւնն է ΜΑΛΛΩΤΩΝ։ Այս դրամը նոյնպէս Մալաթիային ենք վերագրում։

Այս դրամի վրայ կայ մի երկրորդ դրոշմ, որ մի ցուլ է ներկայացնում, վրան փիւնիկեան տառերով, որը կարելի է կարդալ Փոքր-Արմենիայի Իսիոն քաղաքը։

Պատ. թիւ 8

Տրիբազ

7. Երկդրամ. Ա. երես. Վահագնի աջադէմ գլուխը կոնճ մազերով, մերկ պարանոցով, առիւծի մորթու մնացորդ մասը ուսերին շրջապատուած։ Մարգարտի շրջանակով։

Բ. Երես. Տրիբազի աջադէմ գլուխը, մօրուսով, որի գլխարկալը, ականջկալը, վզկալը յիշեցնում է Քսերքսէսի և Տիգրան Մեծի դրամների զարդերը, երկշար մանեակ ունի, երիզակապով։ Արձանագրութիւնն է ΜΑΛ—Մալ։

8. Երեքդրամ. Տրիբազի հինգ դրամները թիւ 159—163, որոնք իրենց նշաններով բոլորովին չեն զանազանւում նախորդ 7 կտոր դրամներից, E. Babelon-ը վերագրում է Կիլիկիայի Սոլի քաղաքին, իրենց վրայ ունեցած ΣΟΛ, ΣΟΛΙΚΟΝ և ΣΟΛΕΩΝ անունների պատճառով։ Սրանք էլ ենթադրւում են պատերազմի ժամանակ Տրիբազի դրօշմել տուածը Կիլիկիայում։

Պատ. թիւ 9

Տրիբազ

Սոլի քաղաքի անունն ընդհանրապէս գործածել են հին պատմագիրները ΣΟΛΟΙ կամ ΣΟΛΟΝ, իսկ այս դրամների վրայ ΣΟΛΕΩΝ և ΣΟΛΙΚΟΝ, որը բաւական տարբեր է ընագրից։ Այս պատճառով կարելի է մտածել, թէ դրամագէտների ենթադրած քաղաքը չէ, որ դրոշմւած է այդ դրամների վրայ, այլ մի ուրիշ քաղաքի դրամ է շփոթուած Սոլիի հետ։

Տրիբազի ժամանակ կտրուած այս հինգ դրամները բացատրելու համար, հարկաւոր է ետ գնալ և Սոլի քաղաքին վերագրուած և, 450—360 թուականը Քս. ծ. առաջ կտրուած, թիւ 147—152 դրամները ուսումնասիրել, որպէս զի մենք կարողանանք աւելի հիմնաւորապէս ծանօթանալ այդ քաղաքին վերագրուած դրամների հետ։ Այս հինգ կտոր դրամների վրայ մենք նկատում ենք որպէս խորհրդանշան խաղողի ողկոյզներ։ Պարզ է, որ այդ քաղաքում խաղողի որթը պիտի մեծ ծաւալ ունենար, իր գաւառով, որպէսզի մի այսպիսի խորհրդանշան կազմէր։

Պատ. թիւ 9

Տրիբազ

Եթէ ինկատի առնենք, որ Կիլիկիայի Սոլիւս քաղաքը չի ունեցել երբէք, չունէր և չունի ներկայիս այգեստաններ, այն անապատական ափերը չէր կարող որթեր աճեցնել, այգեգործութեան նպաստել, որի մասին լռել են ինչպէս Հերոդոտը, Ստրաբոնը, Քսենոֆոնը, նոյն իսկ այդ քաղաքի անունն անգամ չեն յիշատակել, այն ժամանակ կասկածելի պիտի թւայ, թէ այդ դրամները Սոլիի մէջ կտրուած լինեն։ Մանաւանդ պատմութիւնը վկայում է, որ Կիլիկիա գինի և խաղող բերում էին Կիպրոսից և Մելիտոնից—Մալաթիայից, այս պարագան աւելի պիտի համոզէ

քննադատին, որ ոչ թէ Մալլոսում, այլ Մալաթիայում են կտրուած այդ դրամները։ Ընդհակառակը ինչպէս Հերոդոտը, նոյնպէս Քսենոֆոնը և Ստրաբոնը Եփրատի հովտի, Մալաթիայի դաշտի խաղողին այնպիսի նկարագրութիւն են տուել, որ ոչ միայն զօրքերի կերակրի, այլ տակառներով մինչև Բաբելոն տանելու մասին մեզ տեղեկութիւններ են հասցրել։ Այս պարագան նկատի առած ժամանակ աւելի կը պարզուի ընթերցողի համար, որ Կիպրական պատերազմին գնացող Տրիբազը Կիլիկիան Սոլիում չէր կարող դրամ կտրել տալ, այդ դրամները կտրուած են մի այնպիսի քաղաքում, անշուշտ Եփրատի ափերում և Մալաթիայի մօտերքը, որի անունը և խաղողը յայտնի է դարձած մինչև օրս։

Պատ. թիւ 10

Սոլիին վերագրուած դրամներ

Պատ. թիւ 9

Տրիբազ

Պատ. թիւ 11

Սոլի քաղաքին վերագրուած դրամներ

Այս պարագայից յետոյ, քանի որ Սոլիին վերագրուած այդ դրամները Տրիբազի անունն ու պատկերն են կրում և խաղողի ողկոյզները շարունակուած են խորհրդանիշ կազմել հայկական յետագայ դրամների վրայ, մենք այս դրամների նկարագրութիւնն էլ տալիս ենք հայ

թագաւորների դրամների շարքին, ապագային թողնելով աւելի դրական և անհերքելի փաստերով պարզելուն։

Պատ. թիւ 12

Տրիբազ

Ա. երես. Վահագնի դէմքը դէպի աջ, առիւծի մորթը ուսին, գանգուր մազերով։ Մարգարտաշար շրջանակ։

Բ. երես. Տրիբազի գլուխը, նախորդ դրամի պատկերի նման, դէպի աջ ,շուրջը ΣΟΛΙΚΟΝ.—Սոլիկոն։

—

9) Լումայ. Ա. երես Վահագնի գլուխը դէպի ձախ։

Բ. երեսը. Անահիտը ուղղադէմ կանգնած, գլուխը քօղով, որի ծայրերը զարդարուած են երիզով և ծածկում են մինչև ուսերը։ Գլխին վարսակալ ունի. նման է Զարեհի Անահիտի պատկերին։

Երկու հետաքրքիր դրամ ևս կայ ΜΑΛ կամ Մալիս քաղաքին վերագրուած, որոնք բոլորովին հակապատկերներն են նախորդ դրամների։ Այդ դրամները անշուշտ հինգերորդ դարից առաջ, կամ սկզբները պիտի կտրուած լինին, որոնք նուիրուած են արքայից արքային Արտաշէս Պ Մնեմոնին, կամ նոյնիսկ Արտաշէս Երկայնաբազուկին։ Այս դրամները առնչութիւն չունին մեր վերևը խօսած դրամների հետ, մենք դրանք ներկայացնում ենք, որպէս զի ուսումնասիրողը գաղափար կազմէ այն տարբերութեան մասին, որոնք գոյութիւն ունին սրանց և նախորդների մէջ։ Թէև այս դրամների վրայ—ΜΑΛ յունական տառերը և ԻՍ փիւնիկարամ. տառերը կան, բայց չի կարելի սրանք վերագրել որևէ Փոքրը-Հայքի կամ Կիլիկիայի թագաւորներին, քանի որ երկուսն էլ կտրուած են յատկապէս արքայից-արքայի անունով։

Պատ. թիւ 13

Արքայից արքայի

Որովհետև արքայից-արքայի — Դարեհական կոչուած դրամներին նմանութիւն չունին, այս պատճառով դրամագէտները սրբանք ևս վերագրել են Մալիին և Իսոսին։ Մենք կարծում ենք, որ այդ դրամները պատերազմական շրջանում-բանակի մէջ կտրուած են, ընիկ արհեստաւորների ձեռքով։

Մանաւանդ այս դրամին վրայ, ուր Հերքուլէսը—կամ Վահագնը յանդգնել է առիւծի (Արեաց աշխարհի իշխանապետի) հետ պայքար մտնել։ Անշուշտ Եփրատից արևմուտք գտնուած նահանգում է դրոշմուած այս դրամները, բայց թէ ΜΑΛ-ը Մալի է թէ Մալթիա, պիտի որոշէ ապագան։ Մանաւանդ սոյն դրամի վրայ դրոշմուած «ցուլը» արդեօք երկրագործ նահանգի խորհրդանիշը և պաշտամունքը չէ։

Պատ. թիւ 14

Արքայից արքայի

ԴԱՏԱՄ ԼԿԿԻ

1. Երեքդրամ. Մի շարք դրամներ կան E. Babelon-ի Աքեմենեան և նրանց Սատրապների ցուցակներում, որոնք դրամագէտը ենթադրութեամբ Դատամին—Կապադովկիայի Սատրապին է վերագրում, որը նստում էր Փոքր-Արմենիայում և իշխում էր Կիլիկիայի հիւսիսային մասից մինչև Սև ծովի ափերը։ Քանի որ Դատամի իշխանութիւնը, 378—372 Քս. ծ. ա. տարածւում էր Արևմտեան Արմենիայի բոլոր գաւառներում, մենք աւելորդ չըգտանք սրան վերագրուած դրամները ևս ներկայացնել ընթերցողներին մեր բացատրութիւններով։

Դատամին վերագրուած դրամների վրայ ընդհանրապէս փիւնիկ—արամէական տառերով գրուած է, որը E. Babelon-ը, հետեւելով M. Waddington-ին, կարդում է ԴԱՏԱՄԷ։ Բայց սրանց հակառակ են կարդում գերմանացի գիտնականներ Blau և Six և ֆրանսիացի յայտնի դրամագէտ Luynes։ Գերմանացիները տառացի կերպով կարդում են ՏԱՐԿԱՄՈՒ, քանի որ վերևի Փիւնիկ-Արամէական տառերի մէջ որոշ երևում են Տ. Ր. Կ. Մ. ՈՒ տառերը, որոնց մէջ աւելացնելով բաղաձայններ, ստանում են Տարգամու։ Իսկ Luynes կարդում է Dernes։ Թէ Six-ի և թէ Luynes-ի ընթերցուածքով դուրս բերուած անձնաւորութեան անունը բոլորովին անյայտ է պատմութեան, այն ինչ Waddington-ի և Babelon-ի ընթերցմամբ պատմական Դատամի անունն է դուրս գալիս, որը Կարիացի Կամիսարէսի թագաւորի որդին ու յաջորդն էր։

Բայց եթէ Babelon-ը Դատամի Սինօպում կտրել տուած դրամի պատկերները—տես նրա գրքի երես 28 և թիւ 199—200, տախտակ IV պատկեր 21—22-ը համեմատէր իր գրքի երես 26,

թիւ 187—197 միևնոյն տախտակի 15—20 թիւ դրամների հետ, նա պիտի հասնէր այն եզրակացութեան, որ այդ դրամները երբէք միևնոյն իշխանի, միևնոյն դարի ու շրջանի չի կարելի վերագրել, քանի որ հիմնաւորապէս իրարից տարբերւում են։

Եթէ ի նկատի առնենք, որ անգլիացի հռչակաւոր դրամագէտ Կոննիմգէնը սխալւում է և ԿՂԲԿՂ — Փրատափէրնէսը կարդում է «Փառասպէս», Գարդնները միևնոյն բանը՝ «Փադիփադ» (Տէր-տէրանց), ինչի չի կարելի ենթադրել որ «Թորգոմմո) անունն էլ Babelon-ն ու Wadedinqton-ը կարող էին սխալւել և «Դատամէս» կարդալ։ Մանաւանդ որ Թ. Ր. Գ. Մ. Ո. տառերը շատ որոշ երևում են դրամների վրայ և դրանց ձայների մասին երկու կարծիք չի կարելի կազմել։

Հետևելով Six-ին մենք կարդում ենք դրամի վրայ ոչ Տարկամոս—ը, որը բոլորովին պատմական անուն չի արտայայտում այլ եբրայական բիբլիայի մէջ յիշատակւած Թորգոմա անունը, որը վերին Եփրատ—Արածանու և Սև ջրի խառնուրդի նահանգն է կազմում, որի մասին յիշատակութիւն տալիս է,—Ասորական, Քաղդէական և Եգիպտական արձանագրութիւններին հետևելով Մորգանը, տես նրա Les Premiéres Civilisations—1909 Paris, երես 381 և 424, ուր այդ նահանգը անուանում են Tilgarimmou (Թիլ գարիմմու) և կամ Torgomma Թորգոմա։

Հետևաբար նախապատութիւն պիտի տալ ամբողջական, ոչ թէ բաղաձայն տառերի բաց թողնելով ընթերցման։

Եթէ բազմահմուտ դրամագէտը աւելի ուշք դարձնէր դրամի վրայ գրուած երկրորդ արձանագրութեան, ԱՆԱ— ԱՆԱ որը ինքը նկատել է և թողել է առանց բացատրութեան, այն ժամանակ պիտի ենթադրէր, որ կամախի Անի բերդի անունն է, որ արձանագրուած է այդ դրամի վրայ։ Որովհետև դրամի փոքրիկ տառերի վրայ շատ դժուար է Ա-և Ի-ն իրարից որոշել և մի քանի դրամների վրայ շատ որոշ Անի է երևում և ոչ Անա— ԱՆԱ այն ժամանակ կարելի է ասել, որ դրամը պատկանում է ոչ թէ Դատամին, այլ Թոլգարիմու կամ Թորգոմա նահանգի Անի բերդին։

Եթէ մտածենք, որ Թոլգարիման հազար տարուան ընթացքում փոփոխութիւններ կրելով, եկել հասել է Մ. Խորենացուն Դարանաղիի վերածուած, այն ժամանակ նահանգի անունն էլ կը պարզուի։

Բայց միայն այս տառերը չեն, որ մեզ առաջնորդում են դէպի այս խոհերը։

Դրամի Բ. երեսին տաճարի մէջ գրուած ատրուշանը, որ բաժանում է մերկամարմին Վահագնին կիսամերկ Արամազդից,

Պատ. թիւ 15

Դատամի Սինօպի դրամները

որի ծիրանին ձախ ուսից իջած ծածկել է պորտից ներքև և գարձել էր աջ թևի տակից, կապուել ուսի վրայ։ Ատրուշանը, Վահագնը, Արամազդը արդէն բաւական են ցոյց տալու, թէ դրամը բոլորովին յունականութեան դրոշմը չի կրում իր վրայ։ Մանաւանդ որ Վահագնի ետևը գրուած=Անի բառը իսկ կասկածները փարատում է։ Արամազդի առաջ գրուած Թորգոմմա բառը երբէք չի կարելի Դատամէ կարդալ։

Ցայտնի բան է ժամանակը և քննութիւնները պիտի պարզեն մի օր այս մթին խնդիրը։ Բայց եթէ նկատի առնենք Հայկական պատմութեան «Թորգոմեան տոհմին» անունը, Եբրայական գրականութեան Թոգարմա երկիրը, Մասպէրօյի և Մորգանի եգիպտական և ասորական արձանագրութիւններից դուրս բերած «Թիլգամմու» երկիրը, որոնք միաձայն նշանակում են քարտէզների վրայ Եփրատ գետի վերին վտակների—Հայկական արևմտեան նահանգներում, որն սկսում է Կամմոգէնից, ընդունում է իր մէջ Ծոփի, Մալլազգերդ, Եկեղեաց նահանգները իր Դարանաղի, Մանանաղի գաւառներով, այն ժամանակ կը պարզուի, որ Դատամին վերագրուած դրամը պատկանում է Թորգոմա երկրին, Անի—Կամախ բերդին։

Եթէ վերցնենք այս դրամների անբաժան խորհրդանիշը խաղողը—Մալլադդու և Ծոփի նահանգների ցորենը—Դարանաղու հարստութեան նշանները, այն ժամանակ մեր ենթադրութիւնը աւելի համոզեցուցիչ կը դառնայ, քանի որ Կիլիկիան երբէք չէր կարող պարծիլ և իրեն խորհրդանիշ ընդունել իր չունեցած խաղողի ողկոյզն ու ցորենի լի հասկը։

Դրամներից երկուսի վրայ շատ որոշ և գեղեցիկ կերպով քանդակուած են Հայկական նահանգների առատ մեղրի խորհրդանիշ «Մեղուն», որի մասին ամենահին յոյն պատմիչները ակնարկած են, բաւական են ապացուցանելու, որ դրամները Եփրատի վերին հովտին են պատկանում։

Պատ. թիւ 16

Անի-բերդի

Եթէ լրջութեամբ ուսումնասիրենք Հաթական ժայռաքանդակի խաղողի ողկոյզները և Թագաւորների խոյրերը սոյն դրամների ողկոյզների և կազմի հետ, մենք կարող ենք դարձեալ նոյն համոզման հասնել։ Հաթական խաղողը Կիլիկիայում չէր աճում, այլ Եփրատի ափերում։

Այս դրամները իրենց արտաքին կազմով, շրջանակի զարդերով այնպիսի եզակի դիրք ունեն, որ դրանց երբէք չի կարելի Դատամի ժամանակաշրջանին վերագրել, դրանք մի դարով աւելի հին են, քան թէ Դատամի Սինոպում կտրել տուած դրամները։ Այստեղ բացի քանդակագործութիւնն ու խորհրդանիշերը, տառերը էլ ցոյց են տալիս, որ դեռ հին շրջանը չեն թափանցել յունական ձևի նոր տառերը։ Սինոպի դրամի վրայ ոչ միայն տառերը շարուած են ձախից աջ—ինչպէս ներկայիս ամբողջ Եւրոպայում, այլ ΔΑΤΑΛ բառի մէջ երկու ձայնաւորներն էլ կան։ Այնինչ վերևը նկարագրուած դրամների վրայ ոչ միայն տառերը հին փիւնիկեան—արամէական ձևով աջից ձախ են շարուած, այլ ոչ մի ձայնաւոր չը կայ։ Դատամ բառի մէջ 3 բաղաձայն տառ կայ, այն ինչ սոյն դրամների վրայ հինգ բաղաձայններ Թ. Ր. Գ. Մ. ՈՒ.

Յայտնի բան է հին ժամանակ էլ այս տառերը գործածողները Եգիպտացիների, Արաբների, Ասորիների, Բաղդէացիների

նման բաղաձայնների մէջ զօրութեամբ ձայնաւորները աւելացնում և կարդում էին։ Ահա այս պարագայիցն է, որ միևնոյն բաղաձայն տառերի շարքերը իրար հետ կապելու համար գիտնականների ներմուծած ձայնաւորները իրար չեն համապատասխանում։ Երբայեցերէնի Թորգոմը, ոմանք Թարգամ են կարդում ուրիշները Թարգամ, Թարգուամ, Թիրգամմու և այլն։ Այս ձայնաւորների ներմուծումից ու դասաւորումից այնքան է տուժում իրականութիւնը, որ երբեմն նոյնիսկ չեն էլ գտնում իսկական անունը և ընկնում են մոլորութիւնների մէջ։

Դրամի առաջին երեսին Արամազդի նկարը, նստած գահի, կիսամերկ, քղամիտով ծածկած մէջքից ներքև մինչև սրունքներն ու ոտքերը, դիրքը, զարդերը, Ատրուշանը, մանաւանդ ԻԿՐԱՍ Բահալտարս—Բահաղու արձանագրութիւնը աւելի հաստատում է մեր ենթադրութիւնը։

Դեռ ևս Ասորա-բաբէլական գերիշխանութեան թողած հետքերն այնքան ամուր էին, որ Բահաղի պաշտամունքը չէր անհետացած և Բահաղի անուան տակ երկրպագում էին երկրի իշխանապետները։

Ա. երես Բահաղը դէպի աջ նստած է գահի, մորուսաւոր, կիսամերկ մինչև մէջքը և սրունքները քղամիտով ծածկուած, ձախում բռնած է ցորենի հասկ և խաղողի ողկոյզ, աջում գաւազան որի ծայրին բազմած է մի արծիւ։ Բահաղի ձախ կողմը երևում է Ատրուշան խնկաման, գահի տակ մի լուտասի ծաղիկ։ Շրջապատը Անի բերդի պարսպի ժանիքներից կազմուած մի շրջանակ ունի, որ եզակի է դրամագիտական աշխարհում։

Բ. երես. Թագաւորը գահին բազմած է աջաղէմ, ձեռքում մի նետ ունի, որը կարծես թէ ուղղում է։ Գլխի տափակած վեղար գդակը հայկական է, վզկալով և ականջկալով, ծիրանին ուսերին է գցած, աղեղը ծնկան յենած, իսկ վերևը թռչում է մեղուն։ Արձանագրութիւնն է փիւնիկ-արամ. տառերով Թորգոմա, որի մասին վերևը նկարագրեցինք։

—

2. Երեքդրամ. Ա. երես. Բահաղը բոլորադէմ, նստած է աթոռի, մինչև մէջքը մերկ և աղդրն ու սրունքները քղամիտով ծածկուած, ձախում բռնած է մի գնդակազմ գաւազան, որի ծայրին արծիւ է բազմած, իսկ աջումն ունի ցորենի հասկ և խաղողի ողկոյզ։ Աջակողմը ատրուշան խնկամանով, իսկ շրջապատը ինչպէս նախորդինը—բերդի պարսպի ժանիքների շարք։

Բ. երես. Վահագնը մերկ և Բահաղը կիսամերկ մինչև պոր-

տը, տաճարում իրար դէմ կանգնած, որոնց բաժանում է մի Ատրուշան-խնկաման։ Քառակուսի շինուածքի մէջ այս երկու անձնաւորութիւնները կարծես թէ բանակցութեան մէջ են։ Վահագնի ետևը կայ Անա, կամ Անի անունը Փիւնիկեան տառերով, իսկ Ատրուշանի քով Թորգոմա անունը, որոնց մասին վերևը խօսեցանք։

ՄԱԶԱՅՈՍ

361—331 Քս. ծ. առաջ

1) Մազայոսը Արտաշէս գ. Ոքովից նշանակուած էր Անդրեփրատի երկրների ընդհանուր կառավարչապետ։ ԱՆԴՐԵՓՐԱՏ բառը նոր է գտնուած, նա դուրս է բերուած մի դրամի վրայի արձանագրութիւնից, որը M. J. Halévy-ին կարդաց «Աբարնահրա» Եփրատ և Կիլիկիա, (Անդրգետի Եփրատի և Կիլիկիայի)։

Այս ընթերցանութեան հիման վրայ մի շարք դրամներ, որ մինչ այդ անորոշ էին, սկսեցին վերագրել Մազայոսին։ Մազայոսը ոչ միայն Դարեհ Կոդոմանի շրջանումն է կառավարել Սիրիան, Կիլիկիան, Փոքր-Արմենիան ու Կապադովկիան, այլ նրա իշխանութիւնը բարձրացրեց Աղէքսանդր Մակեդոնացին—Մազայոսին նշանակելով Բաբելոնի փոխարքայ—Enapsxo։ 30 տարուան մէջ շատ դրամներ կարող էր կտրել տալ Մազայոսը իր անունով կառավարած երկրներում, որով նրան վերագրումները պահպանում են իրենց հաւանականութիւնը։

Բայց ներուի մեզ քիչ բացատրաբար վերաբերուելու Halévy-ի ընթերցանութեան, քանի որ այդ ընթերցանութիւնն էլ Waddington-ի ընթերցանութեան նման ամբողջականութիւն չունի, շատ տառեր բաց է թողնում և կամ աւելանում է։ Դրամի արձանագրութիւնն այս է, որ տալիս են բոլոր դրամագէտները փիւնիկ-

ԿԼՍ ԼԳԿՅ ՆԿՅՍԼՄՐԼԳԿՍ

արամէական տառերով. և կարդում են «Մազայոս Շի-Հալահ (կառավարիչ) Անդրգետի Եփրատի—Կիլիկիայի։

Մինչև Halévy-ի ընթերցանութիւնը «Աբարնահրա» բառը կարդում էին «Աբծարը» և համարում էին, որևէ անյայտ Սատրապ։ Մանաւանդ որ դրամներից մի քանիսի վրայ նկատելով Շ. Մ. տառերը, կարդում էին Արշամ, կամ Շամէս, որով բոլորովին շփոթութեան մէջ էին գլորում ուսումնասէրներին։

Բայց զարմանալին այն է, որ ԱԲԱՐՆԷ քաղաքի անունը, որը Եփրատի ափին է. Սամուշատին և Մալլաթիայի մէջ բո-

լորովին չեն յիշատակում բոլոր դրամագէտները, որը առանց ուղղումների անմիջապէս արտայայտում է քաղաքի անունը։ Աբարնահրա բառը երևակայական է, ենթադրական է, Halevy-ի կողմից, այն ինչ Աբարնէ արդէն որոշ է իր դիրքով։

Բայց Haléuy-ի և նրա ընթերցման մասին համոզմունք գոյացնողներին չեն նկատում, որ առաջին բառը, ՄԱԶԱՅՈՍԻ անունը սխալ են կարդում։ Այստեղ երեք որոշ բաղաձայն կայ, որ հարիւրաւոր օրինակների մէջ միևնոյն կերպ են դրոշմուած և կասկածելի չեն կարող լինել։ Այդ տառերն են Մ. Զ. Ր. և վերջը Ի կամ ՈՒ։ E. Babelon-ը ինքը նկատում է այդ խոշոր տարբերութիւնը և բացատրում է թէ պարսկական ՄԱԶԴԱՅԻ—ՄԱԶԱՅՈՍԻ անունը, յունական տառերով Μαξαῖος ուրիշ կերպ չէր կարելի գրել։ Թէ յոյները կարող էին Ματξδαῖο գրել, դրան կասկած չկայ, իսկ թէ նրանք յունացրել են այդ անունը, այդ դէպքում չենք վիճում դրամագէտի հետ։

Միայն խնդիրն այն է, որ դրամների վրայ ոչ միայն ՄԱԶԱՅՈՍ չէ դրոշմուած, այլ ՄԱԶԴԱՅՈՒ ևս չի նկատուում։ Վերևը ցոյց տրուած տառերի շարքին (Մ. զ. ր. ի.) Դ տառը երբէք չի նկատուում և Ր տառը չի կարելի կամայականօրէն Յ կարդալ։ Հետևաբար այս շարքի դրամների վրայ եղած Մազայոս ընթերցանութիւնը աւելի քան քաշքշոց է։ Յայտնի բան է, հնումը տառերը ձուլուած չէին, որ լիովին իրար նման լինէին, բայց Մազայոսին վերագրուած 85 դրամներից ոչ մէկի վրայ տառերը ուրիշ ձևով չի գրուած, հիմնական տարբերութիւն չունին, որ ուսումնասիրողը տառերի սխալ փորուածքը քանդակագործին վերագրէ և միևնոյնի ընթերցումով համոզմունք գոյացնէ։

Ընդունենք առ ժամանակ, թէ Մազայոս պէտք է կարդալ Մ. Զ. Ր. Ի. տառերը, բայց երկրորդ կառավարիչ թարգմանուած բառի մէջ ԽՇԱՏՐԱՊ խօսքը չկայ։ Այստեղ նկատուում է միմիայն Ս. Ֆ. Հ. և Լ. գուցէ այս տառերը Ծ. Ֆ. Հ. Կ. կարդան, իսկ Զ. Փ. Ր. Պ. տառերի նշոյլն անգամ չկայ։ E. Babelon-ը հակառակում է Halévy-ին, որը այս չորս տառը կարդում է «Սի—Հալա»=«Անա—ընդ», այսինքն Մազայոս անա ընդ (Անդրեփրատի և Կիլիկիայի)։ Հետևաբար այս տառերը ոչ ՍԱՏՐԱՊ, ոչ էլ վերատեսուչ է առարկուած երկրի։ Ուրեմն չի բացատրուած երկրորդ բառը ևս։

Երրորդ բառը, որը Holévy-ի ընթերցման էական կէտն է

ԿԿՅՍ=Հ. Բ. Ր. և Ն. կարող է դառնալ Հաբարնա, Հարարանա և

ուրիշ ինչ ձայներ էլ որ մտցնէք այդ տառերի մէջ, բայց Աբար-

նահրա կարդալու համար պակասում է վերջին Հ. և Ր. տառերը, որոնք ինչ զօրութեամբ է կարդացուել, թողել են անբացատրելի։

Իսկ գրուած ԵԻՐԱՓ, կամ ԵԻՐԱԻ բառը որքան կարելի է Եփրատին նմանեցնել կամ ԿԼԿ Եփրատի Կիլիկիա կարդալ, տարակուսելի է։ Հետևաբար այս դրամները Մազայոսին վերագրելը կանխաժամ է։

Բացի այս, եթէ լրջութեամբ դրամների քանդակագործութեանը հետևուի, կարելի են նկատել, որ այդ դրամները ոչ թէ Տրիբազից յետոյ, այլ Տրիբազից շատ առաջ են դրոշմուած։ Այս մասին համակարծիք է նոյնպէս E. Babelon-ը, Six-ը և ուրիշները։ Նոյնիսկ փիւնիկ-արամէական տառերն այդ են ցոյց տալիս։ Տրիբազի օրով արդէն Կիլիկիայից և Սինոպից դէպի երկրի խորքերն էին մտել յունական տառերը, այն ինչ Մազայոսին վերագրուած դրամների վրայ ոչ մի տառ, ոչ մի անուն չի կարելի գտնել։ Մազայոսի շրջանում Կիլիկիայում և Սինոպում — ծովափերում արդէն յունական տառերն էին բանացնում, ձայնաւորներով, ձախից աջ դարձուածքով, այն ինչ ինչպէս Դատամին, նոյնպէս և Մազայոսին վերագրուած դրամների վրայ փիւնիկ-արամէական տառերն են առանց ձայնաւորի և աջից ձախ են գրուած։ Այս պարագաներն մեզ ստիպում են ենթադրելու, որ ոչ միայն Մազայոսինը չեն այս դրամները, այլ նրանից մի դար առաջ կտրուած։

Պատ. թիւ 17

Մազայոսին վերագրուած

Փարիզի ազգային թանգարանի դրամներիշ արքին է գտնուում այստեղ արտանկարուած դրամները, որոնք հրատարակել է E. Babelon-ը։

Բացի այդ դրամների վրայ նոյնպէս զանազան տառեր են դրոշմուած, որոնք դեռ ևս հանելուկ են մնացած։ Պ_Մ. տառերը ենթադրում են, թէ Մալի քաղաքն է ցոյց տալիս, բայց ՊՊ_ՍՄ. տառերը, որոնք Waddington-ը և Lenormant-ը Շամէս են կարդում, E. Babelon-ը անհաւանական է համարում։ Այն ինչ այս վերջին տառերով եղածները բազմաթիւ են, իսկ Մալին վերագրուածները սակաւ։ Կան նոյնպէս դրամներ, Ա, ԱՊ_ԼՍ. ԳՊ_ՄՐ. որոնք անշուշտ պիտի մի օր բացատրուեն, բայց մինչև այժմ անվերծանելի են մնացած։

Եթէ գննէք ոտորև պատկերի Ա. երեսը, Արամազդի դէմքը պիտի գտնէք, յար և նման վերևը Անի բերդի արձանագրութիւնը կրող և Դատամին վերագրուած դրամին։ Արձանագրութիւնը Բահալտարս (Վահագի), Արամազդը անյինարան գահի

Պատ. թիւ 18

Մազայոսին վերագրուած

վրայ, աջադէմ, երկար մազերով, ընչացք ու մորուսով, մերկ մարմնով մինչև պորտ, որից ներքև ունի քղամիտ։ Աջ ձեռքն Եփրատի վերին հովտի յատուկ ցորենի ու խաղողի փունջը բռնած է, ձախովն յենած է գնդաշաբ գաւազանի, որի ծայրին լուտասենի։

Բ. Երեսին. Պարսկական առիւծը պատառում է Թորգոմայ երկրի ցլին, որի վրայ դրոշմուած Մ. Ծ. Ր. Ի. տառերով, որը եթէ վերապահութեամբ կարդանք Մծուր քաղաքը, գուցէ չը սխալուինք քանի որ այդ ժամանակ Կիւրոս Կամբիս տիրել էին Սրևմտեան Հայքին և Փոքր-Արմենիային։

Պատ. թիւ 19

Մազայոսին վերագրուած

4. Երեքդրամ։ Նոյն դրամի ուրիշ օրինակը կայ, որտեղ Ա. երեսին Արամազդը նկարագրուած է ամբողջ երեսով և ձեռքին հասկ ու խաղողի ողկոյզի փնջի վրայ բռնած է մի արծիւ։

—

Բ. երեսին. Առիւծը ցլի վրայ է նոյն ձևով, միայն թէ բացի Մազայոս բառից կայ, ՔՍՄ. որը վերագրում են Սամուշատ քաղաքին, կամ Կոմմագէնի Շամէս թագաւորին, որը բոլորովին անյայտ չէ պատմութեան։

5. *Երեքդրամ.* Բայց ամենահետաքրքիր դրամները նրանք են, որոնց վրայ ԱԲԱՐՆԱՀՐԱ (Անդրդեա) է կարդում Halévy-ին։

Ա. երես. Արամազդը աթոռի նստած, մօրուսաւոր, երեսը դէպի աջ, մերկ մինչև պորտը, կէսից ներքև թափանցիկ քղամիտով ծածկուած, աջում գնդաշաղ գաւազը. որը լուտասենի գլուխ ունի, ձախով ուսից իջնող քղամիտն է ամփոփած։ Աջ կողմը ցորենն ու խաղողի ողկոյզ և գահի տակ Մալաթեան։

Բ. երեսին. Զուգընթաց պարիսպներ չորսական աշտարակ ամրոցներով։ Այս պարիսպները E. Babelon-ը Կիլիկիայի կապանները—դռունքն է անուանում, իրենց քառակուսի աշտարակներով և ժանիքներով, բայց սրանք աւելի բերդի իրար վրայ ունեցած կրկնակ պարիսպների են նման, քանթէ Կիլիկեան կիրճերի բերանների որմերին։ Ինչպէս Սրարատեան և Վասպուրական աշխարհի բոլոր բերդերը կրկնակ պարիսպներ ունին, նոյն բանը նկատուած է Եփրատի վերին հովտի բոլոր բերդերի վրայ—ներքին և արտաքին պարիսպներով։ Ինչպէս Ասորեստանի, նոյնպէս պարսիկների բանակներից խուսափող բոլոր հայ-թագաւորները իրենց հարստութիւնով ու կիներով ապաստանում էին երկրի խորքերում, բարձունքների վրայ ունեցած ամրոց-բերդերը։

Դրամի վրայ, առիւծի ճիրանների տակ ընկած և պատառոտուած ցուլը արդեօք չի՞ ցոյց տալիս, թէ Առիւծ-աշխարհի հրամանակալը մտել է նոյն իսկ ընկճուածի բերդը և նրան պատառել է։

Պատ. թիւ 20

Մազայոսին վերագրուած

6. *Երեքդրամ.* Միևնոյն դրամի մի ուրիշ օրինակը կայ նոյն թանգարանում, ուր Մ. քաղաք անուան տառին փոխարինում է Ա. որը արդեօք Անի — Կամախի բերդի խորհրդանիշը չէ՞։

—

7. *Երեքդրամ.* Միևնոյն թանգարանում կան մի շարք դրամներ, որոնք իրենց կազմով հիմնովին տարբեր են նախորդ դրամներից։

Անահիտի անդրին մինչև կուրծքը, երեսի երեք քառորդն երևում է, թեքուած է քիչ դէպի աջ։ Մազերը ամփոփուած են սաղաւարտի մէջ, որը եռափունջ փետրազարդ ծածանուող ցցուններ ունի։ Մազերի ծայրերը աջ ու ձախ ծածանուում են, վզին մարգարտաշար մանեակ ունի և կուրծքը ծածկուած է բէհէզով, որը շատ նուրբ ծալքեր ունի։

Բ. Երեսին. Արամազդը կիսամերկ նստած է աթոռի, երեսը դէպի ձախ, քղամիտը ձախ ուսից և թևից իջնում է և պատում է պորտից ցած ազդրներն ու սրունքները, աջ սրունքը ձախի տակ, աջում բռնած է գնդակազմ գաւազանը, որը վերջանում է լուտասենով։ Արամազդի առաջ խաղողի ողկոյզ և ցորենի հատ, իսկ ետևը B տառը, որի տակը բաղեղի տերև։ Աթոռի տակը նշմարւում է T տառը, որը կապում է Թորգոմա անուան հետ, որը տեսանք վերևը։

8.) *Երեքդրամ.* Միևնոյնը դրամը և միայն գահի տակ T-ի փոխարէն Σ տառը։

—

9.) *Երեքդրամ.* Միևնոյն դրամը, միայն գահի տակ M—Մը-ծուր—կամ Մալաթիա։

—

10.) *Երեք դրամ.* Միևնոյն դրամը միայն աթոռի տակ Մ. Փիւնիկ-արամէական տառը։

724

2 013

ՀՀ Ազգային գրադարան

NL0009041